

ԼԵՋՈՒ ԵՎ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2
2017

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

**ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**



**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS**

**2 (17)
2017**



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

**Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ. Գ.
Խմբագրական խորհուրդ՝**

Աբաջյան Ա. Հ., Աբրահամյան Կ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Ա. Հ. (Շվեդիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդեռլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

**Главный редактор Амбарцумян В. Г.
Редакционная коллегия**

Абаджян А. Г., Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян А. А. (Швеция), Хачатрян Г. К.

**Chief Editor Hambardzumyan V. G.
Editorial Board**

Abajyan A. H., Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan A. K., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Khachatryan A. H. (Sweden), Knachatryan G. K., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria).

ՀՈԴՎԱԾՆԵՐ. STATYI. ARTICLES

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԸ ԼԵԶՎԱԲԱՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Լ. Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

Մեր գիտական ժառանգության կարևոր մաս հանդիսացող Դավիթ Անհաղթի աշխատություններում լեզվին առնչվող մեկնաբանությունները չափազանց կարևոր են և այսօր, որից և բխում է մեծ մտածողի գործերին կրկին ու կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Նախ անդրադառնանք մեծ մտածողի *բառին* առնչվող հայացքներին: Նշենք, որ Դավիթը իր «Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը» աշխատության մեջ խոսում է յոթ «ձայն-հնչումների» մասին¹ դրանց մեջ տարբերակելով իմաստազուրկ և իմաստավոր ձայն-հնչումները: Որպես իմաստազուրկ բառի օրինակ նա բերում է «եղջերվաքաղ» բառը: Իմաստավոր ձայն-հնչումները նա բաժանում է մասնավորի և ընդհանուրի: Անհաղթը տարբերակում է նաև հոդավոր (հոդաբաշխ) (օրինակ՝ մարդկային խոսքը) և անհոդ (ոչ հոդաբաշխ) (օրինակ՝ անասունի արծակած ձայնը կամ անշունչ առարկայի ձայնը) ձայն-հնչումներ: Տարբերակում է նաև նշանական և աննշանական հնչումներ: Որպես հոդավոր և նշանական բառերի օրինակներ բերվում են «արծիվ» և «եղջերու» բառերը: Որպես հոդավոր և աննշանականի օրինակներ՝ «ծիակապիկ» և «եղջերվաքաղ» բառերը, քանի որ ոչինչ չեն նշանակում: Որպես անհոդ և նշանականի օրինակ բերվում է շան հաչոցը, իսկ քարի կամ փայտի հնչումը լուսաբանում են անհոդը և աննշանականը: Դավթի խոսքերով՝ «հոդավոր և նշանական ձայնը լինում է երկակի՝ ընդհանուր կամ մասնավոր: Մասնավոր, ինչպես *Սոկրատը* (այստեղ ու այսուհետև ընդգծումներն իմն են – Լ. Բ.), ընդհանուր, որպես *մարդը, ձին, արծիվը...* Հոդավոր, նշանական և ընդհանուր ձայները նույնպես երկակի են լինում՝ էական [եղուտ] և ոչ էական [մակեղուտ]»²:

Դավիթ Անհաղթը կարևոր է համարում նաև բառերի *ճիշտ կիրառության հարցը*: Բառերի ճիշտ կիրառությունների, նրանց իմաստների ճշգրտման ու տարբերակման հետ կապված՝ նա խոսում է «սեռ» հասկացության նշանակությունների, մասնավորապես նշանակությունների բացահայտման, տարբերակման, սահմանման և քանակի մասին: Դավթի կարծիքով՝ պետք է պարզել, թե «քանի» նշանակություն ունի սեռը...

¹ «Ձայն» բազմիմաստ բառը պետք է հասկանալ նախ և առաջ որպես «բառ»: Տե՛ս այդ առնչությամբ Գ. Ա. Բրուտյանի ծանոթագրությունները «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին» գրքում, Ե., 1980, էջ 159-160:

² Տե՛ս Դավիթ Անհաղթ, Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը, Երկեր, Ե., 1980, էջ 133, 168, 173:

նշանակություններից որի՞ մասին է խոսքը... նկարագրե՞լ, թե՞ սահմանել այն նշանակությունը, որի մասին է խոսքը»:³ Նա փաստորեն «սեռ» բառի օրինակով, որում առանձնացնում է երեք նշանակություն, խոսում է բազմիմաստ և մենիմաստ բառերի տարբերակման մասին: Որպես բազմիմաստ բառի օրինակ Դավիթը բերում է «անհրաժեշտ» բառը՝ ասելով, որ այն ունի վեց նշանակություն⁴:

Մեծ մտածողի ուշադրությունից չի վրիպել նաև բազմիմաստության հետ սերտորեն կապված *համանունության* երևույթը: Դավիթը կարևորություն է տալիս դրան, քանզի «համանունությունը մոլորությունների և կասկածների մայրն է»⁵: Համանունության մասին, հատկապես «սեռ» հասկացության առնչությամբ, Անհաղթը խոսում է «Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը» գործում⁶:

Դավիթը արժարժում է և *հականիշության* երևույթը: Այսպես, վերլուծելով «Ամեն մարդ քայլում է» և «Ոչ մի մարդ չի քայլում» հակառակ իմաստ ունեցող դատողությունները՝ նա խոսում է «ամեն» և «ոչ մի» բառերի մասին որպես հականիշների («իրար հակառակ են»)⁷:

Անհաղթը անդրադառնում է նաև *հոմանիշության* հարցերին: Նա մասնավորապես չափազանց հետաքրքրական դիտարկումներ է անում «կիսեշ» և «ջորի» բառերի վերաբերյալ: Ահա թե ինչ է նա գրում. «...նույն պատճառով, որից ելնելով ոմանք, բանաստեղծին հետևելով, ասում են *կիսեշ*, որովհետև Հոմերոսը, *կիսեշ* ասելով, վատին նախադասում է, որովհետև անունների միացման ժամանակ ավելի վատը հաղթում է ավելի լավին, որովհետև ավելի վատը լավն է դուրս գալիս, որովհետև կիսեշ ենք անվանում ջորուն, օգտագործելով ավելի վատի անվանումը, և նրան չենք կոչում կիսաձի»⁸: Այստեղ, ըստ էության, խոսքը ոչ միայն անվանման գործընթացի մասին է, որն ինքնին շատ հետաքրքիր է, այլև դրա հետ կապված՝ միևնույն հասկացության համար տարբեր իմաստային նրբերանգներ արտահայտող բառերի զուգահեռ գործածության մասին:

Դավիթ Անհաղթն ուսումնասիրում է նաև այնպիսի բարդ ու չափազանց կարևոր խնդիրներ, ինչպիսին են *անունը*, *սահմանումը* և *նկարագրությունը*, որոնք զուտ փիլիսոփայական խնդիրներ չեն, այլ առնչվում են նաև վերլուծության լեզվաբանական մակարդակին, և որոնք արդիական են առ այսօր: Դավիթը վերլուծում է այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին է անվան (անվանման) և իրի հարաբերակցության

³ Նույն տեղում, էջեր 162, 164, 165:

⁴ Տե՛ս նույն տեղերում, էջ 146-147:

⁵ Նույն տեղում, էջ 162:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 166:

⁷ Տե՛ս *Դավիթ Անհաղթ*, Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը, Երկեր, Ե., 1980, էջ 294:

⁸ *Դավիթ Անհաղթ*, Փիլիսոփայության սահմանումները, Երկեր, Ե., 1980, էջ 54:

հարցը: Նշենք, որ սույն խնդիրը լեզվափոխությունից թերևս ամենախրթին հարցերից է նաև այսօր: Այդ կապակցությամբ նա գրում է հետևյալը. «Կան իրեր, որոնք ունեն առարկայական գոյություն, բայց չունեն անվանում, ինչպես, օրինակ, այն էակները, որ ապրում են [ծովի] խորքում, որովհետև խորքում գտնվողները գոյություն ունեն, բայց անվանում չեն ստացել այն պատճառով, որ մենք հնարավորություն չունենք նրանց տեսնելու: Բայց կան նաև այնպիսի բաներ, որոնք անվանում ունեն, բայց առարկայական գոյություն չունեն, ինչպես, օրինակ, արալեզր և եղջերվաքաղը, որոնց անունը տալիս ենք, սակայն որոնք իրականում չկան: Բայց կան նաև այնպիսի բաներ, որոնք և՛ անվանում ունեն, և՛ առարկայական գոյություն, ինչպես մարդը և արվեստը, որովհետև մարդը և արվեստը անվանում էլ ունեն, առարկայական գոյություն էլ»⁹: Անհրաժեշտ է նշել, որ Դավիթն արդարացիորեն անունը հանգեցնում է ստուգաբանությանը, ինչպես, օրինակ, «փոխություն» բառի առնչությամբ¹⁰:

Ինչ վերաբերում է «սահմանում» հասկացությանը, որը կենտրոնականն է «Փոխությունից սահմանումները» աշխատության մեջ, ապա Դավիթը կանոնավոր սահմանումը հետևյալ կերպ է բնորոշում. Սահմանման մեջ բառերն ու իրերը հակադարձ հարաբերության մեջ են գտնվում. որքան «սահմանման մեջ մեծանում է բառերի թիվը, փոքրանում են [սահմանելի] իրերը»¹¹: Եվ չնայած անվան և սահմանման միջև կա մեծ ընդհանրություն, դրանք միևնույն ժամանակ տարբերվում են իրարից: Նշված երկու հասկացությունների տարբերությունը և դրանց փոխհարաբերությունը, ըստ մտածողի, հետևյալն է. «Այն, ինչ սահմանումն անում է շատ բառերի օգնությամբ, անունն անում է մեկ բառի միջոցով. այդ պատճառով էլ նրանք հակասահմանվում են»¹²: Նկարագրությունները, Դավթի խոսքերով, «ոչ թե ենթակա իրի բնությունն են բացահայտում, այլ այդ բնության որոշ կողմերը և նրան վերաբերող պատահական հատկանիշները»¹³:

Հարկ է նշել, որ Դավիթ Անհաղթի կողմից բառիմաստների վերհանումն ու ճշգրտումը հիմնված է *համալրեքստային վերլուծության* վրա: Ուշագրավ են այդ առումով Դավթի՝ արիստոտելյան սիլլոգիզմների վերլուծությունները¹⁴: Դրանք համատեքստային են. կատարված են տեքստի բառ առ բառ վերլուծությամբ՝ դրանց բազմապիսի կապերի ու իմաստների վերհանման եղանակով, որը տեքստի ճշգրիտ մեկնության

⁹ Նույն տեղում, էջ 49:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

¹¹ Նույն տեղում, էջ 55:

¹² Նույն տեղում, էջ 49:

Անվան և սահմանման Դավթի մեկնաբանության մասին տե՛ս Գ.Ա. Բրույյան, նշվ. աշխ., էջ 47:

¹³ Դավիթ Անհաղթ, Փոխությունից սահմանումները, էջ 50:

¹⁴ Տե՛ս Դավիթ Անհաղթ, Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը, էջ 282-284:

հնարավորություն է տալիս: Այդ իմաստով Դավիթ Անհաղթի տեքստերի հերմենևտիկական վերլուծությունները մեկնության արվեստի փայլուն նմուշներ են:

Մեծ մտածողը դիտարկում է նաև *քերականական կարգերի*, մասնավորապես թվի և հոլովների հարցը: Հոլովների մասին նա գրում է. «Նա ճիշտ վարվեց, դնելով՝ *ի՞նչն է [քննության] առարկան* հայցական հոլովով, իսկ *ո՞ւմ գործն է այն* սեռական հոլովով»¹⁵: Գոյականի թվի առնչությամբ էլ նա, օրինակ, խոսում է «բան» բառի՝ հատուկ նպատակներով հոգնակիով, այլ ոչ թե եզակիով կիրառելու մասին¹⁶:

Անհաղթը արծարծում է նաև *խոսքի մասերի* հարցը՝ նշելով, որ «քերականները խմբավորել են բոլոր բառերը ութ մասերի մեջ...»¹⁷: Նա խոսում է նաև Արիստոտելի տարբեր աշխատություններում խոսքի մասերի, մասնավորապես անվան և բայի քննության մասին¹⁸: Խոսքի մասերի բուն վերլուծության հետ կապված՝ առանձնապես ուշագրավ են Դավթի հայացքները բայի և շաղկապի մասին:

Ինչ վերաբերում է բային, ապա «Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը» գործում նա բայը բնորոշում է որպես ստորոգյալը արտահայտող խոսքի մաս¹⁹: Դավիթը անդրադառնում է նաև բայի եղանակին: Այսպես, արիստոտելյան «բաներ հաստատելիս» արտահայտությունը քննելիս նա վերլուծում է «հաստատելիս» բառը՝ նշելով. «Իսկ որ նա ասաց *հաստատելիս*, ապա այդ արված է այլ ասույթներից տարբերելու համար, ինչպես, օրինակ, ըղձականից, հրամայականից և հակադրվածից, որովհետև նրանցից և ոչ մեկում ենթական հանդես չի գալիս որպես հաստատապես հայտնի բան»²⁰:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում շաղկապների վերլուծությունը Դավիթ Անհաղթի աշխատություններում: Դավթի քննության ոլորտն ընդգրկում է «կոնյունկցիա», «տրոհում» և «ժխտում» շաղկապները: Նախ նշենք, որ նա շաղկապները դիտարկում է որպես տրամաբանական-քերականական միասնություն: Նման մոտեցումը, որը ենթադրում է քերականական ու տրամաբանական շաղկապների փոխհարաբերության ուսումնասիրություն, մեր կարծիքով, դրանց հետազոտման ամենաարդյունավետ միջոցն է: Այս տեսակետից քննարկելով Դավթի աշխատություններում «և» շաղկապի վերլուծությունը՝ կարելի է նկատել, որ նա տարբերակում է քերականական և տրամաբանական «և» շաղկապ-

¹⁵ Նույն տեղում, էջ 268:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 280-281:

¹⁷ Դավիթ Անհաղթ, Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը, էջ 132:

¹⁸ Տե՛ս Դավիթ Անհաղթ, Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը, էջ 267:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 275:

²⁰ Նույն տեղում, էջ 280:

ները, որոնք երբեմն չեն համընկնում իրենց գործառությամբ²¹ : Պետք է նշել, որ շաղկապների վերաբերյալ Դավիթ Անհաղթի գաղափարները չեն հնացել, մինչև այժմ էլ իրենց արտացոլումն են գտնում ժամանակակից հետազոտողների աշխատություններում: Շատ հարցերում, մասնավորապես դատողությունների բովանդակային վերլուծության առումով, Դավիթը կանխատեսել է շաղկապների արդի ուսումնասիրության ուղղությունը: Վերջապես, Դավիթ Անհաղթի՝ որպես լեզվաբանի հսկայական նշանակությունն այն է, որ նա գիտակցեց շաղկապների կարևորությունը տեքստի ստեղծման և մեկնաբանման գործում, մի գաղափար, որ մեր ժամանակների վերջին տասնամյակներում ավելի ու ավելի լայն տարածում է ստանում՝ կապված տեքստի լեզվաբանության հետ:

Դավիթը զբաղվել է նաև *տերմինաստեղծ* գործունեությամբ և զգալի ներդրում ունի հայերեն տրամաբանական-փիլիսոփայական տերմինաբանության մշակման և զարգացման մեջ: Այսպես, «սիլլոգիզմ» հասկացությունը նեղ իմաստով և լայն իմաստով, ինչպես նաև մտահանգման այլ տեսակներից տարբերակելու համար նա առաջարկում և կիրառում է «հավաքաբանություն» տերմինը²² : Այդ առնչությամբ Գ. Ա. Բրուտյանը գրում է. «Ըստ էության «հավաքաբանությունը» Դավիթ Անհաղթի մեկնաբանմամբ ընդգրկում է ոչ միայն սիլլոգիզմը, այլև մտահանգման մյուս տեսակները ևս: Եվ եթե «հավաքաբանության» փոխարեն օգտագործում ենք «սիլլոգիզմ», ապա այն պատճառով, որ ավանդական տրամաբանության մեջ «սիլլոգիզմը» ևս հաճախ կիրառվել է լայն, վերը նշված իմաստով»²³ : Ուշագրավ է, որ Դավթի աշխատություններում կարելի է հանդիպել միևնույն հասկացությունն արտահայտող մի քանի տերմինների, ինչպես, օրինակ, «հավաքաբանություն» բառի հետ զուգահեռաբար օգտագործվող «հավաքում», «բաղիավաքում», «շարաբանություն» և այլ տերմիններ: Այլ կերպ ասած՝ Դավթի աշխատությունները ուսումնասիրելիս կարելի է հետևել տերմինների ստեղծման գործընթացին, ինչպես նաև այս կամ այն հասկացությանը առավելագույնս համապատասխանող, ավելի ստույգ տերմինի ընտրությանը:

Անհաղթի ուշադրության կենտրոնում են գտնվում նաև *շարադրանքի ոճի* և *լեզվամտածողության* հարցերը, որոնք ներառում են ոչ միայն բառապաշարի կիրառման ու շարադասության, այլև ստեղծագործության կառուցվածքի հարցերը: Այսպես, խոսելով ստեղծագործությունների կեղծ կամ իսկական լինելու մասին՝ նա գրում է. «Բայց ստեղծագործությունները

²¹ Դավիթ Անհաղթ, Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը, էջ 147: Փիլիսոփայության սահմանումները, էջ 92: Տե՛ս նաև Գ.Ա. Բրուտյան, նշվ. աշխ., էջեր 94-95, Լ. Գ. Брутян, Лингвистический анализ языковых выражений конъюнкции, Ереван, 1983, էջ 109-111:

²² Տե՛ս Դավիթ Անհաղթ, Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը, էջ 282-284:

²³ Գ.Ա. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 114:

տարբերվում և ճանաչվում են՝ կեղծ են, թե հարազատ, ըստ նյութի և ըստ ձևի: Ըստ նյութի՝ նշանակում է ըստ կառուցվածքի և ըստ բառապաշարի, որովհետև [խոսքի] կառուցվածքը և բառապաշարը հանդես են գալիս որպես նյութ ամեն մի ստեղծագործության [կառուցման] համար: Իսկ ըստ ձևի՝ նշանակում է ըստ [այս կամ այն հեղինակի] մտածելակերպի»²⁴:

Դավիթը իրավացիորեն նշում է երկարաբանությունների թերությունը, դրանց հետևանքով առաջացած անպարզությունը, որը խանգարում է բովանդակության ընկալմանը: Որպես օրինակ նա բերում է հռոմեացի անվանի փիլիսոփա և բժշկագետ Գալենի գրվածքները, «որոնք թեև վայելչագեղ ոճով են գրված, բայց շատախոսության պատճառով նրանց մեջ անպարզություն է առաջանում»²⁵:

Անհաղթը արդարացիորեն կարևորում է ամբողջական գործի կառուցվածքը. նա խոսում է գլուխների բաժանման, շարադրման հերթականության մասին, քանզի դա ոչ միայն հեշտացնում է երկի ընկալումը, այլ նաև ճիշտ պատկերացում է տալիս դրա մասին²⁶: Դավիթը ուշագրավ դիտարկումներ է անում նաև արիստոտելյան սահմանման մեջ կիրառված միևնույն բառի կրկնության հնարքի մասին: Նա գրում է. «... երբ մենք ասում ենք արվեստների արվեստ՝ դրանով իսկ փիլիսոփայությունը նմանեցնում ենք թագավորի»²⁷: Խոսքը, ըստ էության, կրկնապատկման ոճական հնարքի, այսինքն՝ բառերի կրկնության միջոցով իմաստի սաստկացման մասին է:

Դավիթը խոսում է նաև փոխաբերությունների և համեմատությունների, լեզվում դրանց դերի մասին²⁸: Նշենք, որ իր իսկ՝ մեծ մտածողի խոսքը առատ է համեմատություններով, համաբանություններով, փոխաբերություններով:

Դավիթ Անհաղթի աշխատություններում մեծ տեղ է զբաղեցնում *լեզվի* և *մտածողության*, մասնավորապես լեզվական և տրամաբանական կարգերի փոխհարաբերության հիմնահարցը: Եվ իրոք, երբ «Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը» աշխատության մեջ Դավիթը գրում է, որ «ապացուցումը լինում է երկու տեսակ, որովհետև մի դեպքում նկատի ունեն այն բնությունը, որն առկա է հենց իրենց իսկ իրերի մեջ... իսկ ապացուցման մյուս տեսակը գտնվում է *սահմանումների* մեջ, այսինքն՝ միայն մեր դատողությունների և *հայտարարությունների* մեջ, օրինակ, երկու հաստատական ասույթներից ավելի հաստատական է այն, որն ավելի ճոխ է: Սա գտնվում է միայն *մեր խոսքում*, իսկ նա՝ նաև *իրա-*

²⁴ Դավիթ Անհաղթ, Պորփյուրի «Ներածության» վերլուծությունը, էջ 131:

²⁵ Նույն տեղում, էջ 148:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 131:

²⁷ Դավիթ Անհաղթ, Փիլիսոփայության սահմանումները, էջ 88:

²⁸ Այդ մասին տե՛ս Գ.Ա. Բրույյան, նշվ. աշխ., էջ 38:

կանության մեջ»²⁹, նա, ըստ էության, խոսում է մտածողության և լեզվի սերտ կապի մասին՝ միևնույն ժամանակ տարանջատելով դրանք:

Ուշագրավ է, որ Դավիթ Անհաղթը այլ գիտությունների շարքում առանձնացնում է նաև քերականությունը: Նա նույնիսկ տալիս է մարդու՝ որպես քերականի սահմանումը, որը, ճիշտ է, անկատար է, սակայն խոսում է Դավթի՝ քերականությանը մեծ նշանակություն տալու մասին. «...Մարդը կենդանի է բանական, մահկանացու, մտածելու և գիտության ընդունակ, քերական»³⁰: Պետք է նշել սակայն, որ քերականությունը այլ գիտություններից առանձնացնելով և խոսելով նրա դերի մասին՝ Անհաղթը այն դիտարկում է մյուս գիտությունների համակարգում: Նա մասնավորապես խոսում է մի կողմից՝ քերականության և փիլիսոփայության, մյուս կողմից՝ քերականության և այլ գիտությունների փոխհարաբերության մասին: Դավիթը արդարացիորեն ավելի կարևոր, ճանաչողական, պատճառները վերհանող և մեթոդաբանական դեր է հատկացնում փիլիսոփայությանը՝ այդ իմաստով այն հակադրելով մասնավոր գիտություններին, այդ թվում՝ քերականությանը: Միևնույն ժամանակ նա խոսում է քերականության՝ փիլիսոփայությունից կախված լինելու մասին³¹:

Ահա այսպիսին են ընդհանուր գծերով Անհաղթի հայացքները լեզվի մասին: Հարկ է ավելացնել, որ դրանց վերաբերյալ արժեքավոր դիտարկումներ են կատարել Ռ. Թոմսոնը և Ժ. Պ. Մահեն³²: Իսկ վերջում նշենք, որ Դավիթ Անհաղթի լեզվաբանական հայացքների ուսումնասիրությունը դեռևս ունի խորագնիին հետազոտության կարիք:

Л.Г. Брутян, Давид Анахт – лингвист. В статье рассматриваются лингвистические взгляды Давида Анахта. В частности, анализируются вопросы взаимоотношения языка и мышления, грамматики, синонимии, антонимии, терминологии, стилистики и некоторые другие в трудах великого средневекового мыслителя.

Lilit Brutian, David the Invincible, the Linguist. – In the paper, the linguistic views of David the Invincible are considered. In particular, the problems of interrelation of language and thought, of grammar, synonymy, antonymy, terminology, stylistics and some others in the works of the great medieval thinker are analysed.

²⁹ Դավիթ Անհաղթ, Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը, էջ 264:

³⁰ Դավիթ Անհաղթ, Փիլիսոփայության սահմանումները, էջ 60:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջք 64, 88, 89:

³² Տե՛ս Р. Томсон, Замечания об армянском тексте “Определений философии”, “Философия Давида Непобедимого”, Ереван, 1984, էջ 237-243: Ж. П. Майе, Современный философ и божественное в “Определениях философии” Давида Непобедимого, էջ 227-236; Տե՛ս նույն տեղում:

ԲԱՐԲԱՌԻ ԱՐԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Մ.Աբեղյանը հայ բանասիրության բացառիկ դեմքերից է, թերևս միակը, որը հավասարապես հսկայական ավանդ ունի և՛ հայ գրականության, և՛ հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառներում: Հայտնի է, որ Մ.Աբեղյանն է ստեղծել աշխարհաբարի գիտական քերականությունը՝ «Աշխարհաբարի քերականություն», «Աշխարհաբարի շարահյուսություն», «Աշխարհաբարի հոլովները», «Հայոց լեզվի տեսություն» և այլ աշխատություններով: Հրաժարվելով գրաբարյան քերականական կաղապարներից՝ Աբեղյանը աշխարհաբարի քննությունը կատարել է՝ ելնելով աշխարհաբարյան իրողությունների բնույթից: Նա մանրագնին քննության է ենթարկել ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանությունը, բառակազմությունը, իմաստաբանությունն ու ձևաբանությունը, միաժամանակ ներկայացրել է իր տեսական ըմբռնումները լեզվական շատ հարցերի վերաբերյալ: Աբեղյանն առաջինն էր, որ գիտականորեն ուսումնասիրեց ժամանակակից հայերենի հնչյունական համակարգը և հայ քերականագիտության մեջ հիմնադրեց հնչյունաբանություն գիտակարգը: Նա է հիմնադրել նաև բառագիտություն (բառակազմություն և իմաստաբանություն) գիտաճյուղը: Աբեղյանն առաջինն էր նաև, որ շարահյուսությունը դարձրեց քերականության՝ ձևաբանությանը հավասարազոր բաժին և հանգամանորեն քննեց աշխարհաբարի շարահյուսական իրողությունները: Հետևելով երիտքերականների դպրոցին՝ Աբեղյանը լեզուն դիտարկում է լոկ անհատական գործադրության մեջ և այն քննում իբրև անհատի մեջ կատարվող հոգեբանական գործընթացների արդյունք՝ այդպիսով լեզուն ընդունելով իբրև հոգեբանական երևույթ: Սակայն հայագետը արձանագրում է, որ լեզուն իր անընդհատ փոփոխություններով ուղեկցում է ազգի պատմությանը, ուստի լեզվական երևույթները նա քննում է պատմական մոտեցմամբ:

Աբեղյանը հայ բարբառների ուսումնասիրությամբ չի զբաղվել, սակայն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության ներածությունում շատ հակիրճ, բայց գիտական մեծ խորաթափանցությամբ անդրադարձել է բարբառագիտական տեսական մի շարք հարցերի՝ բարբառի բնորոշմանը, բարբառների ծագման, զարգացման հարցերին, բարբառ – գրական լեզու փոխհարաբերություններին³³: Ըստ նրա՝ «...բարբառ կոչվում է նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածքը, որ ուրիշ տեղական խոսվածքներից տարբերվում է որոշ չափով»³⁴: Այսպիսի

³³ Մ.Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974, էջ 47-54:

³⁴ Նույն տեղում, էջ 47:

մեկնաբանումը որոշակիորեն տարբերվում է ներկայումս տարածում գտած այն սահմանումից, համաձայն որի՝ բարբառը լեզվի տարածական ճյուղավորում է: Նման բնութագրմամբ, թվում է, բարբառը դիտվում է իբրև բուն լեզվից տարբերվող, դրանից շեղված մի իրողություն: Մինչդեռ Աբեղյանը իրավացիորեն համարում է, որ բարբառը հենց նույն լեզուն է՝ սովյալ տարածքի լեզվակիրներին բնորոշ յուրահատկություններով:

Բարբառների առաջացման բուն պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է՝ նախ և առաջ պայմանավորված լեզվական հանրության, այսինքն՝ լեզուն կրողների և օգտագործողների բնական անմիօրինակությամբ և ապա նաև՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարինությամբ: Ինչպես նկատում է Մ.Աբեղյանը, «Նույնիսկ միևնույն լեզվական շրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն: Դա բնական հետևանք է խոսվածքի սովորական գործունեության»³⁵: Այդ սովորական գործունեության հետևանքով էլ «Բարբառները ծագում են, երբ լեզվի մեջ առաջ եկած փոփոխությունները սահմանափակվում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմեր, ուր կա՛մ հին լեզվական ձևերն են պահվում, կա՛մ առաջ են գալիս տարբեր փոփոխություններ»³⁶:

Իհարկե, բարբառների ձևավորման հարցում չի կարելի բացառել արտալեզվական գործոնների դերը. «...որքան հաղորդակցությունը պակաս է լինում զանազան արգելքների պատճառով, ինչպես են՝ դժվարանցանելի լեռներ, գետեր, քաղաքական սահմաններ և այլն, այնքան ավելի մեծանում են բարբառային տարբերությունները, որովհետև ժողովրդի մի մասը կտրված է լինում մյուսից, և մի կողմում առաջացած լեզվական տարբերությունները դժվարությամբ են անցնում կամ չեն անցնում ուրիշ կողմեր»³⁷: Մի վայրում առաջ եկած նոր իրողությունները, ըստ Աբեղյանի, այլ վայրեր անցնում են ոչ նույն հաջողությամբ: Ավելի արագ և հեշտ տարածվում են բառապաշարային իրողությունները, և այդ դեպքում անմիջական հաղորդակցումը պարտադիր չէ: Մինչդեռ հնչյունական իրողությունների տարածման համար անհրաժեշտ է անմիջական հաղորդակցում, այս դեպքում միջնորդավորված ազդեցությունը բացառվում է: Ահա թե ինչու բարբառները միմյանցից տարբերող գլխավոր հատկանիշը հնչյունական տարբերությունն է: Ի դեպ, հետագայում համանման միտք հայտնել է և Գ. Զահուկյանը՝ նշելով, որ ձայնավորների տարբերությունները երբեմն շատ անհասկանալի են դարձնում բարբառները: Իհարկե, Աբեղյանը չէր անտեսում լեզվական մյուս իրողությունները,

³⁵ Նույն տեղում, էջ 36:

³⁶ Նույն տեղում, էջ 47:

³⁷ Նույն տեղում, էջ 48:

որոնցով ևս բարբառները տարբերվում են իրարից: Նա բարբառները զանազանելիս կարևորում է սահմանականի ներկա ժամանակի կազմությունը, ըստ որի՝ բարբառները բաժանվում են *ում*, *կը*, *լ* կամ *ս* ճյուղերի: Ընդ որում՝ նկատում է, որ *ում* ձևը սահմանափակվել է Արևելքում, *կը* ձևը մնացել է Արևմուտքում, իսկ *լ* և *ս* ձևերը տարածվել են Հարավում՝ այդպիսով ընդունելով նաև բարբառների և բարբառային հատկանիշների աշխարհագրական որոշակի բաշխվածությունը: Այլ կերպ ասած՝ Աբեղյանը իրար չի հակադրում, այլ իրավացիորեն զուգորդում է բարբառների աշխարհագրական և ձևաբանական դասակարգումները: Ըստ հայագետի դիպուկ դիտարկման՝ եթե հայ ժողովուրդը իր բնակության վայրերում հաստատ մնացած լիներ, կարելի կլիներ դիտարկել բարբառների աստիճանական փոփոխությունները, այսինքն՝ հարևան տարածքների լեզուները միշտ ավելի մոտ կլինեին միմյանց: Սակայն պատմական ճակատագրի բերումով հայության հոծ զանգվածներ իրենց բնօրրանում չեն ապրում, իսկ արևելյան Հայաստանում գաղթականների սերունդները բնիկների հետ ապրում են կողք կողքի, ուստի մեր բարբառների տեղադրությունը չի մնացել տարածման բնական դրությամբ:

Աբեղյանը ներկայացրել է նաև բարբառային միավորների ստորակարգային փոխհարաբերությունները՝ նկատելով, որ բարբառների այս ճյուղերն իրենց հերթին բաժանվում են ենթաբարբառների, սրանք էլ ունեն իրենց ստորաբաժանումները՝ մինչև որևէ գյուղի տեղական խոսվածքները, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները: Իհարկե, յուրաքանչյուր բարբառախոս իր խոսվածքի համակարգի կրողն է, և տվյալ բարբառի կրողները որպես կանոն հեշտությամբ ընկալում են խոսվածքային տարբերությունները, որոշում խոսողի ծագումը և բնակության վայրը: Ինչպես իրավացիորեն նկատել է Մ.Աբեղյանը, «Շատ անգամ նույնիսկ հարևան տեղերի ու գյուղերի խոսվածքները տարբերվում են իրարուց թե՛ բառերի հնչյուններով ու նշանակությամբ և թե՛ ձևերով: Դրսից թեթև դիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները»³⁸:

Աբեղյանն անդրադարձել է նաև բարբառների և ընդհանուր ու գրական լեզուների կապերին ու կուռ տրամաբանությամբ մեկնաբանել լեզվի այդ վիճակների փոխհարաբերությունները, ճիշտ ներկայացրել դրանց պատմական զարգացման ընթացքը: Այսպես, եթե Հ.Աճառյանը, հետևելով եվրոպացի իր ուսուցիչներին, և Աճառյանի շատ հետևորդներ համարում էին, որ գրաբարյան շրջանում հայերենը բարբառներ չունեի, և դրանք առաջացել են գրաբարի քայքայման, աղավաղման հետևանքով, այսինքն՝ հնարավոր էին համարում բարբառների առաջացումը ընդհանուր, գրական

³⁸ Նույն տեղում, էջ 48:

լեզվից, ապա ըստ Աբեղյանի՝ իրականության մեջ նախ և առաջ գոյություն ունեն բարբառները, որոնց գործառության պայմաններում հասարակության զարգացման որոշակի փուլում կարիք է զգացվում մի ընդհանուր խոսակցական լեզվի: Այդպիսին դառնում է բարբառներից մեկը, որ որևէ պատճառով գերակշռություն է ստանում մյուսների վրա, ինչպես օրինակ ընդհանուր քաղաքական կամ կրոնական կենտրոնի բարբառը, որ հետագայում գործածվելով գրականության համար՝ դառնում է նաև ընդհանուր գրական լեզու: Հնարավոր է նաև, որ բարբառներից մեկը, ավելի վաղ գործածվելով գրականության համար, իբրև գրական լեզու ընդունելի է դառնում նաև ուրիշ բարբառներով խոսողների համար: Այդպիսի օրինակ է համարում 5-րդ դարում քաղաքական ու կրոնական կենտրոն Այրարատի բարբառը, որ հին վիպասաններն էլ գործածել են, և որը Մաշտոցի, Պարթևի և նրանց աշակերտների ձեռքով դարձել է գրական լեզու: Գրական լեզուն իր ուրույն ճանապարհով է զարգանում, իսկ նրա մայր բարբառը, ծառայելով միայն տեղական բնակիչների կարիքներին, իր առանձին ընթացքն է ունենում: Բայց գրական լեզվին մայր բարբառը երկար ժամանակ ավելի մոտ է մնում, քան այլ բարբառները:

Բարբառներն ազդում են ոչ միայն միմյանց վրա, այլև գրական լեզվի վրա, բայց և ազդվում են նրանից: Աբեղյանի դիպուկ դիտարկմամբ՝ ամեն բարբառի կրող մարդիկ գրական լեզու են ներմուծում իրենց բարբառից բառեր ու դարձվածներ, լեզվական այլ իրողություններ, որոնք գրական լեզվի միջոցով հեշտությամբ ընդհանրանում են: Մյուս կողմից՝ գրական լեզուն ավելի է ազդում բարբառների վրա, քան որևէ բարբառ: Ինչ վերաբերում է բարբառների հարաբերություններին, ապա դրանք, ըստ Աբեղյանի, կարող են իրար վրա ազդել, եթե հարևանությամբ են գործառում, մինչդեռ գրական լեզուն ազդում է բոլոր բարբառների վրա՝ լինելով կրթության միջոց:

Թերևս տուրք տալով ժամանակի մտայնությանը՝ Աբեղյանը ևս համատարած կրթությունը համարում է բարբառների վերացմանը նպաստող գործոն: Ըստ նրա՝ երբ կրթությունն ընդհանրանում է ամբողջ ազգի մեջ, բարբառները մոտենում են գրական լեզվին, մինչև ի վերջո գրական լեզուն իշխում է ամեն տեղ, և բարբառները մեռնում են: Բայց եթե կրթությունը չի ծավալվում ամեն տեղ, ապա գրական լեզվի ազդեցությունը բարբառների վրա թույլ է լինում, և բարբառները պահպանվում են: Այդ դեպքում գրական լեզուն կարող է կտրվել կենդանի լեզվից և դառնալ արհեստական լեզու: Այդպես է եղել գրաբարի պարագայում:

Աբեղյանը հետաքրքրական դիտարկում ունի նաև այն հարցի վերաբերյալ, թե ինչու արևելյան գրական լեզուն ունեցավ բավական տարածվածություն ոչ միայն արևելահայերի, այլ նաև Արևելահայաստանում բնակվող արևմտյան բարբառներով խոսողների շրջանում, նաև Հայաս-

տանի սահմաններից դուրս: Գլխավոր պատճառը, ըստ նրա, այն է, որ Արարատյան բարբառը այլ բարբառների համեմատությամբ ավելի հարազատորեն է պահպանել հին գրական լեզվի կերպարանքը, Արարատյան բարբառի մեջ հնչյունները թվով ավելի քիչ են, մինչդեռ մյուս բարբառներն ունեն հնչյուններ, որոնք չկան Արարատյանում և հին գրականում: Ուստի այլ բարբառների կրողները հեշտությամբ յուրացնում են Արարատյան կամ գրական արտասանությունը: Փաստորեն, գրական լեզվի հիմք բարբառի ընտրության հարցում Աբեղյանի կողմից կարևորվում է նաև լեզվական նպատակահարմարության խնդիրը:

Այսպիսով, ընդամենը մի քանի էջի սահմաններում Աբեղյանը քննել է բարբառային հայերենին առնչվող տեսական առավել կարևոր հարցեր, կատարել մեկնաբանություններ, որոնք այսօր էլ արդիական են և պետք է նկատի առնվեն բարբառագիտական տեսական հարցերի հետագա արձարծումներում:

В. Л. Катвалян. Абегяновское понимание диалекта. Всего на нескольких страницах М. Абегян обсудил важнейшие теоретические вопросы, связанные с диалектным армянским, сделал замечания, которые актуальны сегодня, и их следует учитывать в ходе дальнейших дискуссий по диалектным теоретическим вопросам.

V. L. Katvalyan. Abegyan's concept of the dialect. In just a few pages, M. Abeghyan discussed the most important theoretical issues related to dialect Armenian, made remarks that are relevant today, and they should be taken into account in further discussions on dialectical theoretical issues.

ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Յ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Բառիմաստի սահմանային փոփոխությունները հատուկ են տեղանվանական բառապաշարին, որն ընդգրկում է աշխարհագրական անուններ, բնակավայրերի, վարչական միավորներ անվանումներ: Դրանց մի մասն են կազմում բառիմաստի փոխաբերումով առաջացած միավորները, որոնց հիմքում ընկած են կա՛մ բառիմաստի ընդլայնումը, կա՛մ նմանությունը: Տեղանուններում փոխաբերումով առաջացած բառաշերտն ընդգրկում է տարբեր իմաստային խմբեր, որոնցում առանձին տեղ են զբաղեցնում մարդու մարմնի մասերի անուններ նշանակող տեղանվանական միավորները: Այս մասին Էդ. Մուրզաևը գրում է. «Տարբեր լեզուներում և լեզվատարածքներում տեղանվանակերտ փոխաբերություն-տերմինների մեջ գործածության հաճախականությամբ առաջին տեղը զբաղեցնում են մարդու և կենդանիների մարմնի մասերն անվանող բառերը»³⁹:

Իրանական լեզուների ֆիզիկաաշխարհագրական բառապաշարի զարգացման և հարստացման աղբյուրներից է նմանության հետևանքով մարդու մարմնի մասերի անունների փոխաբերությունը, որը գործածվում է նաև որպես տեղանվանաստեղծ բառաշերտ⁴⁰: Օրինակ՝ *sar, kalle* «գլուխ», որպես ֆիզիկաաշխարհագրական և տեղանվանաստեղծ եզրեր՝ «գագաթ, ակունք», *čakād* «ճակատ» - «գագաթ, նաև՝ բլուր», *dehān* «բերան» - «անդունդ, կիրճ» և այլն: Ընդ որում, այս միավորները դասակարգվում են՝ ա) բառեր, որոնք փոխաբերված իմաստով ամրագրված են իրանական լեզուներում, բ) բառեր, որոնք փոխաբերությամբ գործածական են միայն տեղանուններում: Իմաստային խիստ որոշակի կադապարով այս բառայինները տեղանուններում համարվում են պարտադիր (*հմայերադիվ*) տեղանվանահիմքեր, սակայն դրանց մի մասը տեղանվանաստեղծ գործածության հաճախականության արդյունքում կորցրել է հիմնական իմաստային, բառային բովանդակությունը և դարձել երկրորդական բառակազմական ձևությո՝ ապահովելով «տեղ, վայր» նշանակությունը (տե՛ս ստորև 1, 8, 9, 20 և այլն):

Իրանական տեղանուններում մարդու մարմնի մաս նշանակող բառայիններով առաջացած տեղանուններն ըստ կազմության երկբաղադրիչ

³⁹ Տե՛ս *М. Мурзаев*, Очерки топонимики, Москва, 1974, էջ 127:

⁴⁰ Տե՛ս *E. Filippone*, The Body and the Landscape. Metaphorical Strategies in the Lexicon of the Iranian Languages // Proceedings of the 5th Conference of the Societas Iranologica Europæa, vol. II, ed. by Antonio Panaino and Riccardo Zolpi, Milano 2006, էջ 365-391.

են, որոնք կարելի է դիտել նաև միաբառ բարդությունների շրջանակում: Այս բառապաշարի քանակային հագեցվածությունը պայմանավորված է բարբառային ձևերի գոյությամբ և գործածությամբ⁴¹:

Ստորև անդրադառնում ենք նման երկու տասնյակ միավորների քննությանը:

1. *Sar* «գլուխ», ալ. *sarah-*, մ. պ. *sar* բառը ամենատարածված միավորներից է իրանական տեղանուններում՝ «գագաթ, ակունք» նշանակությամբ: Այս միավորը վերոնշյալ իմաստներով ամրագրված է իրանական լեզուներում նաև որպես ֆիզիկաաշխարհագրական տերմին: Տեղանուններում *sar* բառույթը որպես երկրորդական տեղանվանակերտ ձևույթ հաճախ գործածվում է «բարձրադիր վայր, տեղ» իմաստով և տեղանուններ է կազմում ցեղանունների, հատկանիշ և առարկա ցույց տվող անունների և այլնի հետ, հմմտ.՝ Մազանդարանում՝ *Mordābsar*⁴², *Bišesar*, *Katīsar*, *Tappesar*, *Ābaksar*, *Istaxrsar*, *Azrūdsar*, *Daryāsa*, Գիլանում՝ *Čalleksar*, *Čahsar*, *Rūdsar*, *Xūnisar*, *Bābolsar*, *Sārsar*, *Bījārsar*, *Ālāsar*, *Maxsar*, *Gīgāsar*, *Purdsar*, Սիստան-Բելուջեստանում՝ *Kūrsar*, *Ābsar*, *Delsar*, *Bandsar*⁴³, *Čilesar*, *Bambāsar*, *Ballehsar*, *Rīgsar*, *Sendsar* և այլն:

2. *Kalle* «գլուխ» բառույթը իրանական լեզուներում ու բարբառներում⁴⁴ գործածական է որպես ֆիզիկաաշխարհագրական եզրույթ, հմմտ.՝ պրսկ. *kale*, բխտ. *kala* «գագաթ», լուրի *kall* «լեռնային կիրճ», հվ. քրդ. *kal* «գագաթ, բարձունք, լեռ, կիրճ» և այլն⁴⁵: Տեղանուններում այս միավորն իր աշխարհագրական իմաստներով գործածվում է և՛ որպես տեղանվանահիմք, և՛ որպես տեղանվանակերտ ձևույթ, հմմտ.՝ *Deykalla* «վերին կամ բարձունքի վրա գտնվող գյուղ», *Kalle-Now* (Արևելյան Ազարբայջանում), *Kallejūb*, *Kalle*, *Kallehū* (Քերմանշահում), *Kallepīr*, *Kallesīr* (Խուզեստանում), *Kalle*, *Kallerūd* (Իսֆահանում) և այլն⁴⁶:

3. *Čakād*, *čak* «ճակատ» (հմմտ. նաև՝ թալ. *čəkud*, *čəkut*, գիլ. *čaku* և այլն) < մ. պ. *čak*, սողդ. *čakāt*⁴⁷ (> հայ.՝ *ճակատ*), բառույթը «գագաթ, նաև՝

⁴¹ Իրանական տեղանուններում մարդու մարմնի մաս անվանող բառերի շարք տե՛ս՝ *W. Eilers*, *Der Name Demawend*, *Archiv Orientalni* XXIV, 1956, էջ 371:

⁴² Քննության առնված տեղանունների աղբյուր է 2013թ. կազմված Իրանի վարչական միավորների ու բնակավայրերի ցանկը, տե՛ս *amar.org.ir* կայքը:

⁴³ Տեղանվան առաջին բաղադրիչն է *band* «թումբ (որը փակում է անձրևից առաջացած, կամ գետի ջրի ճանապարհը), պատնեշ»: Տե՛ս *W. Spooner*, *Notes on the Toponymy of the Persian Makran, Iran and Islam*, *Edinburgh*, 1971, էջ 525:

⁴⁴ Արևելաիրանական լեզուներում համարվում է պարսկական փոխառություն:

⁴⁵ Տե՛ս նաև ծագումնաբանության մասին՝ *E. Filippone*, նշվ. աշխ., էջ 355: Քրդ. *kal* «կիրճ» բաղադրիչով տեղանունների մասին տե՛ս *M. Mokri*, *Le nom de “vallée” dans les toponimes iraniens*, *Peeters, Paris-Louvain*, 1997, էջ 10-13.

⁴⁶ Հմմտ. հայկական տեղանուններում նույնկերպ «գլուխ» միավորը՝ *Արկագլուխ*, *Առաջնագլուխ*, *Խաչագլուխ*, *Գեղրագլուխ*, *Քարագլուխ* և այլն:

⁴⁷ Տե՛ս *E. Filippone*, նշվ. աշխ., էջ 357:

բարձունք, բլուր» փոխաբերությամբ որպես ֆիզիկաաշխարհագրական անվանում վկայված է իրանական լեզուներում՝ մ. պ. *čagād* «գագաթ»⁴⁸, պրսկ. *čahād*, *čakād*, *sabkād*, *sakād*, *sepkād* «լեռան գագաթ», քրդ. *čiya* «սար, բլուր», բխտ. *čagā*, *čogā*, լուրի *čeqā*⁴⁹ (Խանսարի) *čiyā*, *čeyā* «բլուր»⁵⁰ և այլն: Տեղանուններում այն շարունակում է իր գործածությունը ֆիզիկաաշխարհագրական իմաստներով, հմմտ.՝ Քերմանշահ շահրեստանում՝ *Sečak* և *Sečogā* «երեք բլուր» նույնիմաստ բնականունները⁵¹, նույն շահրեստանում նաև՝ *Dočogā* «երկու բլուր (այսինքն՝ երկու բլուրների վրա գտնվող գյուղ)» բնականունը, *Čogānarges* «նարգիզների բլուր», *Čogāzard* «դեղին բլուր», *Sefidčogā* «սպիտակ բլուր», *Sēyāhčogā* «սև բլուր» և այլն: Այս բառամիավորով կազմված այլ տեղանուններ տե՛ս՝ Գիլանում՝ *Āyūzčaka*, Խուզիստանում՝ *Bardčak*⁵², *Čogāsorxak*, Ֆարսում՝ *Pasčak*, *Čakī*, *Čak-eNār* և այլն:

4 *Dehān* «բերան», մ. պ. *dahān*, *dahen*⁵³, հ. պ. **dafānam* < **dafan-* < հ. իր. *zafan-*, բառամիավորը տեղանուններում փոխաբերումով գործածվում է «կիրճ, լեռնանցք, անդունդ» իմաստներով: Այս բառույթը գործածվում է միաբաղադրիչ բարդ և բառակապակցական, ինչպես նաև մարմնի մաս արտահայտող բառաշերտով կազմված ձևերին քիչ բնորոշ միաբառ-պարզ տեղանուններում, հմմտ.՝ *Qandbām-e Dehān*, *Gurdehān*, *Dehān*՝ Քերմանում, *Nowdehān*՝ Խորասան-Ռազավիում, *Dehān*, *Kordehān*՝ Սիստան-Բելուջեստանում, և այլն⁵⁴: *Dehāne* ձևը՝ *dehān-* + *-ak* > *-e* վերջածանցավոր նորակազմություն է, որը նմանության փոխաբերումով պարսկերենում ամրագրվել է «մուտք, շեն, գետի, ջրհորի, քարանձավի և այլնի մուտք» նշանակությամբ: Տեղանուններում գործածական է նույն իմաստով՝ Ֆարս նահանգի *Dehāne-ye Bāy-e Morād* տեղանունը, այսինքն՝ «Մուրադի այգու շենը կամ մուտքը», կամ Սիստան-Բելուջեստանում՝ *Dehāne-ye Bāyī* «Այգու մուտք», հմմտ. նաև՝ Խորասանի *Dehāne*, *Dehāne-ye Ney* բնականունները, *Lārim Dahane*՝ Մազանդարանում (*Lārim*-ը Մազանդարանում դեհեստանի անուն է, իսկ *Lārim Dahane*-ն այդ դեհեստանի առաջին գյուղն է), *Dehāne-ye Soleymān*, *Tūt-Dehāne* բնականունները՝ Սեմնանում, *Xoške-Dahane*՝

⁴⁸ Տե՛ս *D. Mackenzie*, A Concise Pahlavi Dictionary, London, 1971, էջ 21:

⁴⁹ Տե՛ս *D. Hasandust*, Farhang-e tatbiqi-mowzow`i-ye zabānhā va gūyeshā-ye irāni-ye nou, j.1, Tehran, 2010, էջ 48:

⁵⁰ Նույնը:

⁵¹ Նույնատիպ կազմություն է հարևանությամբ՝ Մահիդաշտի շրջանի Չողանարգես դեհեստանի *Setappa* բնականունը՝ «երեք բլուր»:

⁵² Այս տեղանվան *-bard* բաղադրիչն ունի «քար» նշանակությունը, հմմտ.՝ լուրի, բախտ. *bard*, սիվանդի *vārd*, իսֆհ. *ward*, *-vord*, *-bord*, հվ. քրդ. *bard* և այլն:

⁵³ Տե՛ս *D. Mackenzy*, նշվ. աշխ., էջ 23; *D. Durkin-Meisterernst*, Dictionary of Manichaean Middle Persian and Parthian, Brepols, 2004, էջ 138:

⁵⁴ Հմմտ. հայկական տեղանուններում «բերան»՝ *Ձորաբերան*, *Եղեգնաբերան* և այլն:

Գիլանում և այլն: Մեկ տեղանվանական կազմությունում պահպանվել է այս բառույթի *dahār*⁵⁵ ձևը < ավ. *zafār*⁵⁶ «անդունդ, անձավ» ձևը (Dehxodā, s. v.): Քերման նահանգի Քահնուջ շահրեստանի *Dahārān*-*ān* տեղանվանակերտ վերջածանցով և նույն շահրեստանի *Dahārān-e Zaminband* տեղանունների հիմքերում *dahār* բառույթն է՝ «անձավ» նշանակությամբ:

5. *Češm* «աչք» բառի բազմիմաստության վերջածանցավոր *-ag* > *-e* դրսևորումն է *češme* «աղբյուր» բառույթը՝ վկայված միջին իրանական լեզվաժամանակաշրջանից՝ մ. պ., պթև. *čašmag*: Տեղանուններում այն ունի լայն կիրառություն և տարածված է Իրանի ողջ տարածքում, հմմտ.՝ *Čahār-Češme*, *Qəzəl-češme*, *Qermez-češme* բնականությունները Կենտրոնական շահրեստանում, *Češmesar*, *Sarčešme*՝ Գիլանում, *Rīgčešme*, *Katčešme*⁵⁷ Մազանդարանում, *Češmesarā*, *Siyah-češme*՝ Արևմտյան Ազարբայջանում և այլն⁵⁸:

6. *Guš* «ականջ» < հ. իր. **gauša-*, մ. պ., պթև. *gōš*, սողդ. *γωš-*, քրդ. *gu(h)*, *gwē*, զազա *gōš*, սարիքուլի *γewl*, իշքաշումի *γūl*, սանգլիչի *γōl*⁵⁹ և այլն, տեղանուններում գործածվում է «ծայրամաս, սահման, կողմ» փոխաբերական իմաստներով⁶⁰, որին է հանգում նաև *-ak* > *-e* վերջածանցով *guše* «անկյուն, ծայր» բառամիավորը, հմմտ.՝ մ. պ. *gōšag*: Այս բաղադրիչով կազմված տեղանուններից են Խուզեստանի *Doguš* բնականունը՝ *do* «երկու» թվականով և *-guš* բառույթով, Քերմանի *Čāh-e Do-Guš* (*čāh* «ջրհոր») տեղանունը, նաև՝ *Gušdardān*, *Guštorki*: Մազանդարանի *Gušikalā*⁶¹ տեղանունն ունի «ծայրամասում գտնվող գյուղ» նշանակությունը, որի *-kalā* (*kalāte*) բաղադրիչը նշանակում է «գյուղ, ամրոց», հմմտ.՝ մազանդ.՝ *kəlā* «գյուղ»⁶² < **kalāk*՝ **-t* > **-d* > **-δ* > *-l* հնչյունական զարգացմամբ < հին իր. **kata-ka-* «տուն», հմմտ.՝ ավ. *kata-* «սենյակ, տուն», սողդ. *kt'k-* /*katē* «սենյակ», մ. պ. *katak*, նպրսկ. *kade*, *kad*, փուշտու

⁵⁵ Տե՛ս *W. Eilers*, նշվ. աշխ., էջ 192:

⁵⁶ Տե՛ս *Chr. Bartholomae*, *Altiranisches Wörterbuch*, Strassburg, 1904, էջ 1657:

⁵⁷ *Katčešme* տեղանվան *kat-* բաղադրիչի համար նշենք՝ գիլաներենում «ոչխարաբուծություն» (տե՛ս *u Farhang-e gil o dilam*, Tehrān, 1987, էջ 641), պարսկերենում՝ «ուս»:

⁵⁸ Հմմտ. հայկական տեղանուններում նույն նշանակությունն ունեցող «ակն» տեղանվանահիմքը՝ *Բազմակն*, *Հազարակն*, *Յոթնակն*, *Պաղակն* և այլն:

⁵⁹ Տե՛ս *G. Morgenstierne*, *Persian etymologies*, Irano-Dardica, Wiesbaden, 1973, էջ 168. Իրանական լեզուներում այս միավորի վկայվածության մասին տե՛ս յ. Cheung, *Etymological Dictionary of the Iranian verb*, Brill, Leiden-Boston, 2007, էջ 116:

⁶⁰ Հմմտ. պրսկ. *čahārguš* «քառակուսի՝ չորս անկյուն ունեցող» և այլն:

⁶¹ Այլերսը *Gūškuh* տեղանվան *gūš* բաղադրիչը կապում է *Ādur Gušnasp* ատրուշանի անվան *gušn* «արու, արական», հմմտ.՝ մ. պ. *gušn*, նպրսկ. *gašn* միավորի հետ (տե՛ս *W. Eilers*, նշվ. աշխ., էջ 347): Այսօր *Gūškuh* տեղանունն ունենք Իսֆահանի Առան օ *Բիզգոլ* շահրեստանում: Նույն *gūš-*gušn** «արու, արական» ձևի վկայությունը հավանական է նաև *Gušikalā* և նաև՝ Սեմնանի *Kalāt-e Guš* տեղանուններում, եթե համեմատենք նաև իմաստային նմանությամբ կազմության օրինակներն Իրանի տեղանուններում, հմմտ.՝ *Qal 'e-ye Nar* անունը Բորուջերդ շահրեստանում և այլն:

⁶² Տե՛ս *Farhang-e vāžegān-e tabarī*, յ. 3, Tehran, 2002, էջ 1661:

kəlay, և այլն:⁶³ Հմմտ. նաև Ֆարսում՝ *Gušband*, Համադանում՝ *Gušlān* (-*lān* /-*dān*/ տեղանիշ վերջածանց՝ «պարունակող, ունեցող» իմաստով⁶⁴), Մաշ-հադ, Բիրջենդ, Չահրահար շահրեստաններում՝ *Guš* տեղանունը և այլն:

7. *Lab* «շրթունք» < մ.պ. *lap*, պթև. *lab*, բառույթը փոխաբերական «սահման, ափ, եզր, կողք» իմաստներով սահմանափակ կիրառությամբ արձանագրվել է տեղանուններում: Ֆարսում գտնվող *Lab-Eškan* տեղանունը՝ «բլուրի ծայրին, եզրին (գտնվող բնակավայր)» նշանակությամբ, կազմված է *lab*- «եզր, ծայր» և *-šekan* «ծալք»⁶⁵ < **skan*-, մ.պ. *škynčk* < **škenčak* «ոլորում, տանջելու միջոց»⁶⁶, բաղադրիչներից: Սիստան-Բելուջեստանում է գտնվում *lab* բառույթով կազմված *Darra-Labak* «ծորի եզրին (գտնվող բնակավայր)» բնականունը:

8. *Dēm* «դեմք», հմմտ.՝ մ. իր. *dēm* «դեմք, երես», ժամանակակից իրանական լեզուներում՝ բել. *dem*, գիլ. *dim*, սիվ. սեմն. *dim*, պրսկ. *dēm*, *dēma* ևլն⁶⁷: Տեղանուններում գործածվում է «երես, արտաքին կողմ, դիմաց» իմաստներով և որպես տեղանվանակերտ գործառույթ՝ «տեղ, վայր» նշանակությամբ: Այս բառույթով կազմված տեղանուններից են՝ Գիլանում՝ *Bastedēm*, Մազանդարանում՝ *Dēm-e Turān*, *Dēmu*, Արևմտյան Ազարբայջանում՝ *Dēm Qešlāq*, *Dēmābād*, Ֆարսում՝ *Dēm-e Sorx*, *Dēm-e Zale*, Սիստան-Բելուջեստանում՝ *Dēmkan*, *Moškādēm*, *Kurdēm*, *Čirdēm-e*⁶⁸ *Rahmatābād*, *Dēmrud*, *Kuhdēm-e Bālā*, *Kuhdēm-e Pāyin*, *Kuhdēm-e Nukābād*, Համադանում՝ *Dēmkāran*,⁶⁹ *Dēmur*, Լուրեստանում՝ *Dēm-e Rezaqolli*, *Dēm*, *Xārzārdēm*, *Čowlāndēm* և այլն: Պրսկ. *čihra* «երես, դեմք» < մ. իր. *čihra* < **čithra*-, բառույթը ևս տեղանուններում գործածվում է փոխաբերական «արտաքին կողմ, (լավ, գեղեցիկ) տեսարան» իմաստներով. հմմտ. Մազանդարանում՝ *Čihra*, Արևելյան Ազարբայջանում՝ *Čihragān*, *Čihraq*, Քերմանում՝ *Čihrdān*, Լուրիստանում՝ *Golčihra*, *Tutčihra*, Ջենջանում՝ *Čihraābād*, *Čihratappe* և այլն:

9. *Gardan* «պարանոց» < մ.պ. *gartan* < հ. իր. **gartana*- <*gart*- «պտտվել», բառույթը տեղանուններում ունի «կիրճ, լեռնանցք, լեռնամեջ,

⁶³ Տե՛ս W. Bailey, *Ambages Indoiranicae, Instituto Universitario Orientale Annali Sezione Linguistica*, 1/2, Napoli: 1959, էջ 119: M. Hasandust, *Farhang-e rišešenāxti-ye zabān-e fārsi*, Tehran, 2015, N 4057:

⁶⁴ Տե՛ս W. Eilers, նշվ. աշխ., էջ 346, 350:

⁶⁵ *Šekan* «ծալք, կնճիռ» բազմիմաստ բառն այստեղ կրկնակի փոխաբերացմամբ գործածված միավոր է և ունի «երկրաբանական ծալք, բլուր» իմաստը:

⁶⁶ Տե՛ս H. W. Bailey, *Dictionary of Khotan Saka*, London. New York. Melbourne, 1979, էջ 135:

⁶⁷ Տե՛ս M. Hasandust, նշվ. աշխ., էջ 364:

⁶⁸ *Čirdēm* տեղանունը կարելի է մեկնաբանել և՛ որպես նույնիմաստ կրկնակի ձևերի կազմություն՝ *čir*- «դեմք» < **čithra*-, հմմտ.՝ պրսկ. *čihra*, և *dēm*, և՛ որպես՝ բել. *čir*- «ցածր, ներքին, ստորին» և *dē m* բաղադրիչներով կազմված անուն:

⁶⁹ Այս տեղանվան առաջին բաղադրիչը, կարծում ենք, *dēym* ձևն է՝ «անձրևաջրով ոռոգվող ցանքատարածություն» իմաստով, իսկ *dēymkā* նշանակում է «հողագործությամբ զբաղվող»:

խորաձոր, նեղ կառուցվածքով ձգվող բնակավայրեր, որոնք միացնող դեր են կատարում» փոխաբերական իմաստները և առավել հաճախ գործածվող բաղադրիչներից է: Հանդիպում է Իրանի ողջ տարածքի տեղանուններում. Գիլանում՝ *Razegardan* «կիրճի վրա տեղավորված բնակավայր», հմմտ.՝ պրսկ. *raze*, սեմնանի *raža*, *raĵa* «շարք, պարան, դասավորվածություն»⁷⁰, ավ. *razišta* < հ. իր. **rájišta*⁷¹, *Qal'e-ye Gardan* «կիրճի վրա գտնվող ամրոց, բնակավայր», Մազանդարանում՝ *Nowgardan*, *Larjārgardan*, *Afrāgardan*⁷², *Vāzigardan*, *Xamgardan*, *Polgardan* և, Խորասանում՝ *Gardan-Kelāt*, *Gardan-Dāsī*, *Gardan Kolāh* բնականունները և այլն: *Gardan*- + *-ak* > *-e* > *gardane* բառույթը պարսկերեն բացատրական և երկլեզվյան բառարաններում նշված է «ողորուն, քարքարոտ կածան» իմաստով և գործածություն է գտել նաև տեղանուններում՝ *Gardanesar*՝ Մազանդարանում, *Gardane-ye Pāyin*՝ Արևմտյան Ազարբայջանում, *Gardane-ye Eždehā*, *Gardane-ye Xāki*՝ Իսֆահանում և այլն: Այս բառամիավորի *mul* «պարանոց» < **mɾdu-*, *məɾəzu-* «ողնաշար», հմմտ.՝ քրդ. *mul*, *mil*, *möl*, լուրի *mell*, նախնի *mol*⁷³ ձևը՝ նույնպես «կիրճ, լեռնանցք» փոխաբերումով, կազմում է բնականուններ: Յազդ Նահանգի *Molkūh* տեղանունը կազմված է քննարկվող *mol*- և *-kūh* «լեռ» բաղադրիչներով, Բուշեհրում են տեղակայված *Sarmol sar*- «սկիզբ» և *-mol*, *Molkap*՝ հնարավոր է՝ *mol*- և *-kap/gap* «մեծ, խոշոր»⁷⁴, *Zīrmole* < *zīr-* «տակ» և *-mol* + *-e* < *-ak*, *Haftmole*՝ *haft*- «յոթ» և *-mol* + *-e* < *-ak*, *Molgel*՝ *mol*- և *-gel* «ցեխ», *Molganza*՝ *mol*- և *-ganza* < *ganz-* + *-e* < *-ak* «գանձ», *Molgāh*՝ *mol*- և *-gāh* տեղանիշ ածանցը և այլն:

10. *Keš* «թևատակ, գիրկ» < հ. իր. **kaša-*, հմմտ.՝ մ. պ. *kaš*, սողդ.՝ *pkš* /*əpkas*/ «ծոց» (< **apa-kaša-*)⁷⁵, թալ. *kaš/keš*, գիլ. *kaš/kaš* և այլն, տեղանուններում երկրորդական տեղանվանակերտ գործառույթի դեր է կատարում՝ «լեռնային վայր, տեղ», նաև՝ «լանջ» նշանակությամբ և հանդիպում է Իրանի ողջ տարածքում: Գիլանում են գտնվում *Sikaš*՝ *sī-* «քար» և *-kaš*⁷⁶, *Golkeš*՝ *gol*- «ծաղիկ» և *-keš*, տեղանունները, Մազանդարանում՝ *Qal'ekes*՝ *gal'e* «ամրոց» և *-keš*, *Āyurkes*՝ հնարավոր է *āyur* < *ā-yor*

⁷⁰ Տե՛ս Javāheri, Pažum-Šary'ati, Vāzanāma-ye gūyeš-e bāstāni-ye Semnāni, j. 1, Semnān, 2007, էջ 423:

⁷¹ Տե՛ս P. Horn, Grundriß der neupersischen Etymology, Strasburg, 1893, N 609:

⁷² Թերևս առաջին բաղադրիչը *afra-* ծաղի տեսակ է նշանակում, որ տարածված է Մազանդարանում:

⁷³ Տե՛ս M. Hasandust, նշվ. աշխ., էջ 399:

⁷⁴ Արևմտաիրանական բառույթ է լուրի *gap*, *gapū* «մեծ», քրդ. *gap* «լիքը», Ֆարսի բրբռ. *gap* «մեծ» և այլն:

⁷⁵ Տե՛ս E. Benveniste, Essai de grammaire sogdienne, Deuxieme partie, Glossaire, Paris, 1929, էջ 208:

⁷⁶ Տե՛ս H. Kirakosian, Les traces de l'iranien ancien *sikā- «pierre» dans la toponymie iranienne, Iran and the Caucasus, vol. 19. 3 Brill, Leiden. Boston, 2015, էջ 272.

«չորացած, անջուր գետ» < **ā-gara-* (**gara-* < **gar-* «խոնավացնել»), հմմտ.՝ նալսկ. *faryar* (< **fra-gara*) «չոր գետ, առու (առանց ջրի)»⁷⁷ և *-keš*, *Volukeš* ըստ ամենայնի, *volu-* < **wara-* (**wāra-*) «բնակավայր, պարսպապատված, առանձնացած տեղ», Արևելյան Ազարբայջանում՝ *Sarkeš*, Քերմանշահում՝ *Poštekeš*, *Mūškeš*, *Xārkeš*, Խուզեստանում՝ *Širkeš*, Քերմանում՝ *Xarkeš*, Իսֆահանում՝ *Gāvkeš*, *Hendukeš*⁷⁸ ևն:

11. *Bayal* «կոնատակ» բառը տեղանուններում գործածվում է «կողք, կողմ», նաև՝ «լանջ» իմաստներով: Այս միավորով են կազմված Քերմանի նահանգի *Bāy-e Bayal* *bāy* «այգի», *Češme-ye Bayal* *češme* «աղբյուր», *Gud-e Bayal-e Jengal* *gud* «հոր, փոս», *jengal* «անտառ», *Deh-e Bayal* *deh* «գյուղ», *Čāh-e Bayal* *čāh* «ջրհոր», Իսֆահանի *Qal 'e-ye Bayal*, *Češme-ye Bayal* բնականությունները: Դրանցից բացի հանդիպում է նաև պարզ միաբառ կազմությամբ *Bayal* տեղանունը՝ Քերմանի Զիրոֆթ շահրեստանում:

12. *Sine* «կուրծք» < մ. պ. *sēn*, *sēnak*, բառույթը որպես տեղանվանահիմք «լանջ» փոխաբերական իմաստով հանդիպում է Արդաբիլի *Sinesar* տեղանվան մեջ, որը կարելի է մեկնաբանել «լանջի վրա տեղակայված բնակավայր»: Այս բառույթն է ընկած Իսֆահան նահանգի *Sinā* գյուղանվան, *Sin* դեհեստանի անվան հիմքերում⁷⁹:

13. *Pestān* «կուրծք» < **pi-šānaya-* (< **šan-* «թափահարել, տատանել») ⁸⁰ > ալ. *fštāna-*, մ. պ. *pistān*, միավորը՝ «բլուր, բարձունք» նմանության փոխաբերացմամբ են գործածված Գիլանի Ռուդբար շահրեստանում՝ *Se Pestānak*՝ *se* «երեք» և *pestān-* + *-ak*, Ամլաշ շահրեստանում՝ *Pīlām Pestānak* բնակավայրերի անվանումները:

14. *Šāne*- «ուս» > **fšāna-* «հարթ մակերևույթ», ալ. *fšuyant-*, մ. պ. *šānak*, բել. *Šānay* «պարանոց»⁸¹ միավորի վկայությունները տեղանուններում՝ «լանջ» փոխաբերական իմաստով՝ *Šāne-band* Մազանդարանի Ամոլ շահրեստանում՝ *šāne* և *-band* «կապ» բաղադրիչի հետ, և հնարավոր է, որ նշանակի «երկու լանջերի միացման վայրում գտնվող, կամ երկու լանջերը միացնող բնակավայր»: Այլև *Xuršāne* Խորասան-ե Ռազավի նահանգում՝ *xur-* «արև» < մ. պ. *xvar* և *-šāne* «լանջ» միավորներից: Կարծում ենք, որ վերջինիս հետ նույնական է նաև *Xušāne* տեղանունը նույն նահանգում:

⁷⁷ Տե՛ս *M. Hasandust*, նշվ. աշխ., էջ 145:

⁷⁸ Տե՛ս *W. Eilers*, *Toponymische Satznamen der Türken, Die Welt des Islams, New Series*, vol. 15, Issue 1 / 4, 1974, էջ 48, նաև 52:

⁷⁹ Այլերսը Քորդեստան նահանգի կենտրոն *Sanandaž* տեղանունը բացատրում է իբրև «լանջի վրա գտնվող ամրոց»՝ *sine-dez* (*W. Eilers*, նշվ. աշխ., էջ 300):

⁸⁰ Տե՛ս *H., W. Bailey*, *Iranian Studies*, IV, *Bulletin of the School of Oriental Studies*, University of London, Vol. 7, No. 4, 1935, p. 177.

⁸¹ Տե՛ս *Bailey* 1979, նշվ. աշխ., էջ 67:

15. *Duś* «ուս, թիկունք» < **dūš-*, **dauš-*, մ. պ. *dōš*, բառույթը «լանջ»⁸² փոխաբերական իմաստով հանդիպում է մի քանի տեղանուններում. Գիլանում է գտնվում *Qal'e-ye Duś* տեղանունը՝ կազմված *qal'e* «ամրոց» և *duś* «լանջ» բաղադրիչներից՝ «լանջին տեղակայված գյուղ» իմաստով: *Duśmiyān* տեղանունը Իսֆահանում թերևս նշանակում է «լանջերի մեջտեղում տեղավորված գյուղ», *Duś-e Sorx* բնականունը Լուրեստանում ունի «կարմիր լանջ» իմաստը⁸³:

16. *Kul* «ուս, թիկունք, մեջք» բառույթը վկայված է արևմտաիրանական լեզուների մեծ մասում, իսկ որպես ֆիզիկաաշխարհագրական տերմին՝ ամրագրված է «լեռան լանջ» իմաստով (*Steingass, s.v.*), հմմտ.՝ *qhl* «բլուր»⁸⁴: *Kul*-ը «լանջ» իմաստով տեսնում ենք հետևյալ տեղանուններում՝ *Kulekeš* Գիլանում⁸⁵, *Kul-e Darre'* Արևելյան Ազարբայջանում, *Kul-e Kuh*, *Kul-e Zard*, *Kul-e Farah*, *Paskul*, *Sar-e Kul*, *Kulbard*, *Kul-e Sorx'* Խուզեստանում, *Kulbākul* Ֆարսում և այլն:

17. *Pošt* «մեջք» < հ. իր. **pr̥št̥hā-* > ալ. *paršti-*, մ. պ. *pušt*, բառույթը տեղանուններում հաճախ է գործածվում՝ «հիմք, հակառակ կողմ», նաև՝

⁸² Այս բառամիավորը «կուրծք» իմաստով փոխառվել է հայերենում, իսկ փոխաբերական «լանջ» իմաստով նաև հայերենի բարբառներում (թրք. միջոցով), տես՝ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.1, 2001, էջ 345:

⁸³ Քերման նահանգի *Dušen* տեղանունը նշանակում է «փոված, տարածված գյուղ/բնակավայր», հմմտ.՝ թրք. *döşemek* «փռել, տարածել» բայի ներկայի դերբայը՝ *düşen/döşen*: Նույն նշանակությունն ունի Արևելյան Ազարբայջանի *Dußer* տեղանունը՝ -er վերջավորությամբ, իսկ Արևմտյան Ազարբայջանի *Dušan Tepe* տեղանվան առաջին բաղադրիչը, կարծում ենք, թրք. *duşmak* «հանդիպել, դեմ հանդիման լինել» (*Clauson, G., An Etymological Dictionary of Pre-Thirteenth-Century Turkish*, Oxford University Press, 1972, p. 558; 560) բայի ներկայի դերբայն է և *teppe* «բլուր» միավորի հետ կազմել է «հանդիպակաց (դեմ հանդիման գտնվող) բլուրի վրա տեղակայված գյուղ» իմաստով անունը (հմմտ.՝ *Դոշանթեփե* լեռանուն Հայկական լեռնաշխարհում, տես՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, 1986, էջ 137): Արդաբիլում գտնվող *Düşān Balāyi* տեղանունը հավանաբար ցեղանունից կազմված ձև է:

⁸⁴ Այս բառույթի համանունները *kōl/kul* «լճակ, ավազան, նաև՝ ցածրադիր վայր», *kōlidan* «փորել, պեղել, անցք անել», հմմտ.՝ քրդ. *k'ōl* «փոս, առու, անձավ», *k'ūr* «խորը», *k'ōlāndin* (*k'ōlin-*) «փորել», լուրի *kul* «լճակ, ավազան», գուր. *kul* «խորը» կլն, < հին իր. **kau-ra-* < **kau-* (տես՝ Horn 1893, նշվ. աշխ., N 873; Bailey 1979, նշվ. աշխ., էջ 73, 446; Eilers 1956, նշվ. աշխ., էջ 353, 371; Henning, W., "A list of Middle-Persian and Parthian words", BSOS, University of London, vol. 9, No. 1, 1937, p. 84), նշանակությամբ ձևերը ևս հանդիպում են տեղանուններում, օր.՝ *Kulāb* տեղանունը Իսֆահանում, որն ունի «ջրափոս» նշանակությունը, (հմմտ.՝ նույնանուն բնականունը Տաջիկստանում, տես՝ <http://www.iranicaonline.org/articles/kulab>), *Čāhkuł* «ջրհոր» և -*kul* «խորը», *Kul-e Kučak' kul* «լճակ» և *kučak* «փորք» տեղանունները Ֆարսում, *Kulān*, «խորը, ցածրադիր վայրում տեղակայված բնակավայր»՝ Քերմանշահում, Խուզեստանում կլն:

⁸⁵ Այս միավորն ունի բառային առանձին իմաստ ևս, կազմված՝ -*keš* < *kešidan* «քաշել» բայի ներկայի հիմքով՝ «դերվիշի փայտե կամ մետաղական ամանը՝ պատրաստված նավակի տեսքով, որը նա պարանով կախում է ուսից»:

«բլուր, բլրակ» փոխաբերական իմաստներով⁸⁶: Այս միավորի *-e < -ak* վերջածանցով ձևն ամրագրվել է փոխաբերական իմաստով՝ որպես ֆիզիկաաշխարհագրական տերմին, հմմտ.՝ պրսկ. *pošte* «բլուր, փոքր բարձունք», և հաճախադեպ հանդիպող տեղանվանաստեղծ բառույթներից է, նաև՝ երկրորդական ձևույթային կիրառությամբ՝ «տեղ, վայր» իմաստով: Կազմում են բարդ, բառակապակցական, մասամբ նաև՝ պարզ կազմություններ, օր.⁸⁷ *Pošt* տեղանունը Սիստան-Բելուջեստան նահանգում, կամ՝ *Pošte* տեղանունը Գիլանում և այլն:

Այս բառույթով են կազմված Ֆարս նահանգի Լարեստան շահրեստանի *Poštperi* և Ջահրոմ շահրեստանի *Poštper* տեղանունները, որոնց *-pari, -par* բաղադրիչներն ունեն «հետև, հետևի մասում տեղակայված» իմաստը, հմմտ.՝ պրսկ. *parēr + -i < *para-ayar-, pariruz* «երկու օր առաջ», բել. *perī, pāirī, payrīg* և այլն⁸⁷: Տեղանունները կարելի է մեկնաբանել «բլրի ետևը գտնվող գյուղ, բնակավայր»: Ընդ որում, Իրանում տարածված *Poštekuh* տեղանունը, օրինակ՝ Կենտրոնական նահանգում, Ֆարսում և այլն, կրկին ունի նույն իմաստը՝ «բլրի կամ լեռան ետևը գտնվող գյուղ, բնակավայր»՝ *pošt-* ը «ետև» իմաստով: Վերջին նշանակությամբ բառույթը գործածված է նաև Գիլանի *Jupošt*՝ *ju-* «առու, առվակ», *Rudpošt*՝ *rud-* «գետ», *Darrepošt*՝ *darre-* «ձոր», Մազանդարանի *Šahrpošt*՝ *šahr-* «քաղաք», Արևելյան Ազարբայջանի՝ *Poštāb*՝ *-āb* «ջուր, նաև՝ գետ», *Pošt-e Darband* և այլ տեղանուններում: Արևելյան Ազարբայջանի *Nāpošte < *Anārpōšte* տեղանվան մեջ քննվող բառույթը՝ «տեղ, վայր» իմաստով, բաղադրվել է *anār* «նուռ» *< *hādāna- (*hā- «-ով» և *dāna- «հատիկ» > (*-d- > -r-)* **hāran < ānar*⁸⁸ բուսանվան հետ, և տեղանունը նշանակում է «նոնենիների գյուղ»⁸⁹: Բուսանվան հետ է կազմվել նաև *Arzanpošte* տեղանունը՝ *arzan* «կորեկ» *< *arzana-*, քրդ. *Harzin*, սակայն՝ մ. պ. *’lwm (alum* կամ *ālum)*, բխտ. *halum < *h(a)rdana*⁹⁰ կլն, և նշանակում է «կորեկառատ գյուղ»: Քննարկվող բառույթը հանդիպում է Գիլանի *Siyāpošt, Panbepošte, Gerdpošte, Pošte Kulāh, Qandaqpošte, Pošte Hir, Մազանդարանի Pošsim, Polpošt, Dizpošt, Istaxrpošt, Kulpošt, Քերմանի*

⁸⁶ Այս բառույթի ֆիզիկաաշխարհագրական նշանակության հետ է կապվում իրանական *փուշպրուն* ցեղանունը, տե՛ս W., Eilers 1956, նշվ. աշխ., էջ 348:

⁸⁷ Տե՛ս J. *Elfenbein*, A caravan of chronological adverbs, *Corolla Iranica*, ed. By Ronald E. Emmerick and Dieter Weber, Peter Lang, Frankfurt am Main – Bern – New York – Paris, 1991, էջ 60 – 61.

⁸⁸ *Rezai Baghbidid Hassan*, Pomegranate: From Iran to Japan (A linguistic Investigation), *Journal of Iranian Studies*, Osaka University, vol. 12, 2016, էջ 103-104.

⁸⁹ Տեղանուններում բառերի կրճատման, աղճատման երևույթների, հնչյունական և բառակազմական տարբերակների առաջացման պատճառների մասին տե՛ս B. A., *Жучкевич*, *Общая топонимика*, Минск, 1980, էջ 76-97.

⁹⁰ G. *Morgenstierne*, “Notes on Balochi etymology”, *Irano-Dardica*, Wiesbaden, 1973, էջ 164:

Pošt-e Godār, Sarpošt, Pošt-e Xuni, Pošt-e Parān, Խորասանի *Poštzu, Zīnpošt* և այլն:

18. *Aškam* «որովայն» < մ. պ. *aškam(b), aškom(b)*, նաև՝ արդեստանի, սեմնանի, զեֆրեի *tel*, քրդ. *kūm* (<**kumba-*), *lām*, գիլ., մագ. *šukom, eškam*, բել. *lāp* և այլն, բառույթը բարբառային բազմազանությամբ հանդերձ, տեղանուններում ունի սակավ գործածություն: Տեղանուններում այն գործածվում է «մեջտեղ, միջնահատված»⁹¹ իմաստներով: Ֆարսի Լարեստան շահրեստանի *Aškamšur* տեղանվան մեջ *aškam* բառույթը գործածվել է *šur-* (*šuridan* «լվալ») «լվացած», այստեղ՝ «մաքրված, մաքուր» բառույթի հետ: Նույն բառույթի քրդերեն ձևով է կազմված Քերմանշահի *Lama* տեղանունը՝ *-a* < *-ak* վերջածանցով: Սեմնանի *Tala* տեղանունը ևս քննարկվող բառույթի բարբառային ձևով կազմություն է:

19. *Pā* «ոտք», հմմտ.՝ հ. պ. *pāda-*, մ. պ. *pād, pāy*, պրթ. *pād*, բառույթը իրանական լեզուներում արձանագրված է նաև՝ «ստորին հատված, հիմք, ստորոտ», «որոշակի հողաչափ» իմաստներով, և ըստ այդմ՝ բավականին տարածված է տեղանուններում, հանդիպում է տարբեր խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, բայահիմքերի հետ կազմություններում: Գիլանի Մասալ շահրեստանի *Ārenj pā* տեղանունը կազմված է մարդու մարմնի մաս նշանակող երկու միավորից՝ *ārenj* «արմունկ» հմմտ.՝ ավ. *arəθna-*, մ. պ. *āranj*, պրսկ. նաև՝ *āran, ārang, arasna, arašna, araznu, vāran, vārin, vāranj, vārang, uškub* և *-pā*: Չնայած բարբառային ձևերի առատությանը՝ տեղանուններում «արմունկ» բառույթը հիմնականում կիրառական չէ, իսկ տվյալ գյուղանվան մեջ հնարավոր է երկու մեկնաբանություն առաջարկել. առաջինը՝ նմանության փոխաբերումով արտահայտում է «անկյունային, թեքվող հատված» իմաստը, իսկ մյուսը բառի երկրորդային իմաստն է՝ «չափի միավոր (ընդգրկում է մատի ծայրից մինչև արմունկն ընկած հատվածը)», հմմտ.՝ ավ. **frārāθni-* (<*frārāθni-drājah-* «մեկ արմունկ երկարություն»), հ. պ. *arašni* «չափի միավոր, *araš*», սողդ. *’rynj* «արմունկ, նաև՝ չափի միավոր» և այլն⁹²: Գիլանի Ռուդբար շահրեստանի *Pārudbār, Čenārpā* տեղանուններում *pā-*ն նշանակում է «հիմք, սկիզբ», համապատասխանաբար՝ *-Rudbār* այստեղ վայրի անուն է, *čenār-* «ուռի» ծառատեսակն է: Նույն նահանգի *Leypā* տեղանվան *ley-* բաղադրիչը գիլաներենում ունի «անտառ» իմաստը, և տեղանունը նշանակում է «անտառի փեշին, ծերային գտնվող գյուղ»: *Pā* բառույթով են կազմված Մազանդարանի *Pāzamin, Sangolpā, Pāband, Kelāčpā, Pājā, Polpā*, Խուզեստանի *Pāpol*, Քերմանշահի՝ *Pāqal ‘e, Pāteppe, Kalepā*, Սիստան-

⁹¹ St’u G. Spooner, նշվ. աշխ., էջ 525:

⁹² M. Hasandust, նշվ. աշխ., էջ 16, Henning 1937, նշվ. աշխ., էջ 79:

Բելուջեստանի *Pākuh*, *Pārud*, Գոլեստանի *Pāsang-e Bālā*⁹³ և այլ տեղանուններ⁹⁴:

20. *Rān* «ագդր» < **rāhanā*-⁹⁵, հմմտ.՝ իրան. լեզուներում *ron*, *run*, *rō*, *rona* և այլն, որպես տեղանվան հիմք գործածվում է «լանջ» իմաստով, օր.՝ Գիլանի *Rān-e Kuh* գավառանունը հնարավոր է մեկնաբանել «լեռան լանջին գտնվող գյուղ» իմաստով⁹⁶: Սակայն այս բաղադրիչն առավել հաճախ տեղանվանակերտ ձևույթի գործառույթ ունի՝ «զառիթափ տեղ, վայր» իմաստներով⁹⁷: Գիլանի Ռուդսար շահրեստանում գտնվող *Rāsrān* տեղանունը կազմված է *rās*- «ճանապարհ», հմմտ.՝ մ. պ., նաբսկ. *rās*, յաղն. *rōs* «ճանապարհ» (մ. պ. *asprēs* «ծիարշավարան» > *hj.*) < **raiθya*- և -*rān* բաղադրիչներից՝ «լանջի վրա գտնվող գյուղ» նշանակությամբ, Գիլանի *Gorāzrān* տեղանվան մեջ -*rān* «տեղ, վայր» ձևույթը գործածվել է *gorāz* «վարազ», իսկ Արևելյան Ազարբայջանի *Asprān* տեղանվան մեջ *asp* «ծի» կենդանանունների հետ: Քերմանշահի *Guzrān* գավառանունը նշանակում է «ընկույզներով առատ վայր»՝ *guz* «ընկույզ» < մ. իր. **āγōδ* < **gaud/z*- «թաքցնել», և -*rān*: Արդաբիլի *Kehrān* տեղանվան առաջին բաղադրիչը *keh*- «փոքր» < ալ. *kasyah*- բառույթն է, իսկ գյուղի անունը նշանակում է «փոքր զառիթափի բնակավայր», իսկ Հորմոզգան և Իլամ նահանգների *Mehrān* տեղանունը, հնարավոր է, կազմված է *meh*- «մեծ» < **maθyah*- բառածնով(?): Իսկ -*rān* տեղանվանակերտ ածանցով են կազմված Կենտրոնական, այլև Խուզիստան նահանգների *Čamrān*, Լուրեստանի *Se Rān-e Bālā*, *Se Rān-e Pāyin* տեղանունները և այլն⁹⁸:

Իրանական տեղանուններին բնորոշ մարդու մարմնի մաս նշանակող բառերի ներկայացված շարքը նախնական է՝ ենթակա համալրման: Չնայած անվանողական հիմնական գործառույթին՝ նմանության փոխաբերումով առաջացած այս բառաշարքի գործածությունը տեղանվանական կազմություններում ժամանակակից փուլում կարելի է համարել ոչ ակտիվ գործընթաց: Առարկայական զուգորդումը, շրջապատի գեղարվեստական մեկնությունը, աշխարհի մարդակերպ ընկալումը մտածողության նախնական մակարդակի արտացոլումն է և հիմնականում չի գործածվում արդի տեղանվանակազմության մեջ: Ըստ այդմ՝ մարդու

⁹³ Գտնվում է Նիլքուի լեռան ստորոտին և -*sang* -ն այստեղ ունի «լեռ» նշանակությունը:

⁹⁴ Նշենք, որ *pā*-ն կարող է տեղանվան մեջ դրսևորվել արդեն ցեղանվան կազմում, օր.՝ Արևմտյան Ազարբայջանի *Hampā* ցեղանուն-տեղանունը, կամ Խուզեստանի *Kurrapā* տեղանուն-ցեղանունը՝ քրդ. *kurr* «տղա» < **kurnaka* < **kur*- «ծնվել», հմմտ.՝ գիլ. *korki* «աղջիկ» կլն:

⁹⁵ *I. Gershevitch*, *Iranian Words containing -ān*, Iran and Islam, Edinburgh, 1971, էջ 269.

⁹⁶ Տե՛ս նաև՝ *W. Eilers*, նշվ. աշխ., էջ 299:

⁹⁷ -*rān*-ը որպես վերջածանց՝ *rāndan* «քշել» բայից հմմտ.՝ *soxanrān* «բանախոս» կլն:

⁹⁸ Սիստան-Բելուջեստան նահանգի *Pādrān* տեղանունը ևս հնարավոր է դիտարկել այս շարքում՝ բել. *pād* < *pādūn* «ոտք» և -*rān* բաղադրիչներով կազմված:

մարմնի մաս արտահայտող բառերով կառուցված տեղանունները պետք է դիտարկել որպես ժամանակագրորեն համեմատաբար հին կազմություններ:

Համառոտագրություններ

Ավ. – Ավեստայի լեզու, բել. – բելուջերեն, բրբռ. – բարբառ, բխտ. – բախտիարի, գիլ. – գիլաներեն, թալ. – թալիշերեն, հ. իր. – հին իրանական, հ. պ. – հին պարսկերեն, հվ. քրդ. – հարավային քրդերեն, մազանդ. – մազանդարաներեն, մ. պ. – միջին պարսկերեն, յաղն. – յաղնուբերեն, նպրսկ – նոր պարսկերեն, պթն. – պարթևերեն, պրսկ. – պարսկերեն, սիվ. –սիվանդի, սեմն. –սեմնանի, սողդ. – սողդերեն:

А. С. Киракосян. Названия частей тела человека и иранская топонимия. В статье рассматривается засвидетельствованность слов обозначающих части тела человека в иранской топонимии. Автор представляет предварительный список слов обозначающие части тела человека использованных в иранских топонимах как метафорические названия.

A. Ts. Kirakosyan. The Human Body Parts Lexicon and Iranian Toponymy. The article examines the attestation of the lexicon significative of human body parts in the Iranian toponyms. The author presents a tentative list of the words used in the Iranian toponyms that indicate the physical-geographical edges via metaphorical mapping.

**ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ «ԱԶՔ»
ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԸ**

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Դարձվածային միավորները, ինչպես և բառերը, կարող են ներառվել իմաստային դաշտերում: Նշված լեզվական միավորները ընդգրկվում են համապատասխան դաշտերում ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկությունների:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ աչք բաղադրիչով զգայություն արտահայտող դարձվածքների ուսումնասիրությունը, վերլուծությունն ու զուգադրումն է:

Դիտարկվող դարձվածքների ուսումնասիրությունը բացահայտում է որոշակի ընդհանրություններ և տարբերություններ ուսումնասիրվող լեզուների, ինչպես իմաստային, այնպես և այլ առանձնահատկությունների միջև, որը վկայում է, որ ընդհանրություններ և տարբերություններ գոյություն ունեն տվյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության միջև:

Լեզվում ոչինչ կատարելապես անշարժ չէ: Յուրաքանչյուր բառ, քերականական յուրաքանչյուր տարր, ոճ, հնչյուն, հնչերանգ և այլն դանդաղ փոփոխվող երևույթ է՝ ձևավորված անտեսանելի և անդեմ մի հոսքով, որը լեզվի կյանքն է: Մշտական հոսքի հերակլիտյան այս հայեցակարգը լեզվում վերաբերում է առաջին հերթին իմաստաբանությանը, քանզի լեզվաբանական բոլոր տարրերի մեջ հենց իմաստն է ենթակա ամենաշատ փոփոխությունների [US,141], ընդ որում ժամանակի ընթացքում իմաստային փոփոխության են ենթարկվում ոչ միայն առանձին բառերը, այլ նաև ժողովրդախոսակցական լեզվում երևան եկած, հետագայում վերացարկված բառակապակցությունները, որոնց վերաիմաստավորման արդյունքում առաջանում են ժողովրդի միտքն ավելի պատկերավոր արտահայտող, նրա խոսքին առավել կենդանություն, հյութեղություն ու հուզարտահայտչականություն հաղորդող լեզվական միավորները՝ դարձվածքները: Կապակցության վերաիմաստավորման հետևանքով այն փոխադրվում է իմաստային մեկ այլ դաշտ: Լեզվաբանության մեջ իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջությունն է, և հենց այդ հասկացությունն էլ այդ բառերն ընդգրկում է տվյալ դաշտում [BC, 4]: Իմաստային դաշտերում կարող են ընդգրկվել նաև դարձվածային միավորները, որոնք միավորվում են նշված դաշտերում ըստ իրենց

բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկությունների:

Զգայությունը հոգեկան գործընթաց է, որը նյութական աշխարհի առարկաների, երևույթների, հատկությունների, ինչպես նաև օրգանիզմի ներքին վիճակի արտացոլումն է գլխուղեղում: Այն իմացության գործընթացի բաղկացուցիչ մասն է: Զգայությունների հիմնական տեսակներն են՝ տեսողական, լսողական, շոշափելիքի, ջերմային, տատանման, համի, հոտի, ցավի, հավասարակշռության և այլն: Սրանք որակապես տարբերվում են միմյանցից: Մարդու զգայությունները զարգանում են հասարակական-պատմական փորձը յուրացնելու, շփման ու գործունեության ընթացքում: Դրանք հիմնականում իմաստավորված ու գիտակցված են, թեև կան նաև չգիտակցված զգայություններ (<ՍՀ, հ.3, 679):

Զգայություններն առաջանում են զգայարանների միջոցով, որոնցով կապ է ստեղծվում օրգանիզմի և արտաքին աշխարհի միջև: Այս կամ այն զգայությունն առաջանում է տվյալ զգայարանի գործունեության հետևանքով: Նշված լեզուներում (և հավանաբար ոչ միայն նրանցում) շատ հաճախ զգայության անվան փոխարեն օգտագործվում է տվյալ զգայարանի անունը: Այս երևույթի՝ փոխանունության հիման վրա առաջանում են վերաիմաստավորված լեզվական միավորները՝ դարձվածքները:

Աչք բաղադրիչով դարձվածքներում զգայարանի անունը կարող է փոխարինել տեսողությանը, հայացքին, նայվածքին, ուշադրությանը, հսկողությանը և այլն: Այս դեպքում զգայությունն ավելի է շեշտվում ու ընդգծվում, խոսքը դառնում է ավելի պարզ (սակայն ավելի պատկերավոր ու հյութեղ), ավելի մատչելի և հետևաբար ավելի հաճախ է գործածվում:

Աչք բաղադրիչով դարձվածքները կարելի է պայմանականորեն ընդգրկել մի քանի ենթադաշտերում. ա) դարձվածքներ, որ բնորոշում են մարդու տեսնելու կարողությունը կամ այդ կարողությունից զուրկ լինելը, բ) դարձվածքներ, որ արտահայտում են հայացք նետելու, նայելու, նկատելու իմաստները, գ) դարձվածքներ, որ արտահայտում են չնկատելու, չերևալու, տեսադաշտում չլինելու իմաստները, դ) դարձվածքներ, որ արտահայտում են ուշադրությամբ դիտելու, զննելու, հետևելու ու հսկելու, ինչպես նաև ուշադրությունից դուրս մնալու, միտումնավոր կերպով չտեսնելու երևույթները:

ա) Դարձվածքներ, որոնք բնորոշում են մարդու տեսնելու կարողությունը կամ այդ կարողությունից զուրկ լինելը:

Նման դարձվածքներ հանդիպում են թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում, ասել է թե՛ նշված լեզուները կրող բոլոր ժողովուրդների մտածողության մեջ առկա են հիշյալ երևույթները բնորոշող պատկերները: Ներկայացնենք մի շարք դարձվածքներ: *Աչքը / աչքերը կտրել*. աչքի կարողության չափ տեսնել, ինչքան որ կարելի է աչքով ընդգրկել, աչքը

գորել: Ես թելեցի ասեղը, - ասաց նա, - աչքը կտրում չէր: (ՆՊ, 131): *Աչքը ընկնել (մեկի, մի բանի վրա)*. ուշադրությունը գրավել, նկատել, տեսնել: Երբ Գրիգորը նրա գրկիցն ազատվեց, *աչքերն ընկան ձորը*, ու սարսափով լցվեց (ԹԱ, 627): Հանկարծ նրա *աչքը ընկավ* կապված և բոլորովին պատրաստ չեմոդանի վրա (ՐԵ, III, 310): *Աչքերի լույսից զրկվել* - Կուրանալ, տեսողությունից զրկվել: Իմ հայրն ու սիրելի եղբայրը աչքերի լույսից չէին զրկվիլ, և ես շարունակ չէի ողբալ մեկի ծերությունը և մյուսի ծաղիկ հասակը (ՄԳ, 29): *Աչքը խավարել*. 1. Տեսողությունը թուլանալ, լավ չտեսնել: *Աչքս է խավարում*, - զայրալի ծայնով խոսեց նա, - *աչքս է խավարում, տեսնելու չեմ ազատությունը* (ԴՎ, 759): 2. Տեսողությունից զրկվել, կուրանալ: *Ինչի չէր աչքս էն օրը խավարում, որ վառվեց էս կրակն իմ սրտում* (ՍԳՀ, 42): 3. Անեծքի կամ վշտակցության, ավստոսանքի արտահայտություն: *Աչքս խավարի, տեսիլք դառնամ ես,- Տեսիլք եմ տեսել գիշերս երազում* (ԹԵ, III,99): *Աչքի լույսը / լուսը / լիսը հանել*. Աչքը հանել, կուրացնել: Պատժել: - *Դու գնա, պապի, միամիտ քնիր, Ես աչքի լույսը կհանեմ գողի* (ԹԵ, III, 73): *Աչքը գիրը տանել*. Շատ կարդալուց աչքերը շաղվել, տեսողությունը վատանալ: - *Հաբուդ, հերիք ա գրես, աչքդ գիրը կտանի,- ասում էր մայրը կեսգիշերին, իսկ Հաբուդը շարունակում էր գրել, ջնջել* (ԲԵ, 45):

Куда хватает / достанет глаз. Այնքան, որքան հնարավոր է տեսնել, որքան տեսանելի է: *Толпа у виселиц громадная. Куда глаз достанет, все людские головы* (ОНК, 128): *Глаза на затылке* (ժղվրդ.). 1. Ոչինչ չի տեսնում: *Ничего не вижу, ничего не замечает, будто глаза у него на затылке* (ԿՐ, 106). 2. Ամեն ինչ տեսնում է *Он ничего не пропускал из глаз: Казалось у него глаза на затылке* (ԿՐ, 106): *Своими (собственными) глазами*. Ինքն անձամբ (տեսավ, համոզվեց): *Утвержден же в том собственными моими глазами* (ԴՓՊ, 315).

One's eyes fall on / upon sb. / sth (բառացի՝ մեկի աչքերն ընկնում են մեկի / մի բանի վրա). - Մեկը նկատում, տեսնում է ինչ-որ բան կամ ինչ-որ մեկին: *He looked round the department ferociously, and his eye fell upon Philip* (MWH, 517): *Meet sb's eye* (բառացի՝ հանդիպել մեկի աչքերին) - 1. Մեկի աչքին ընկնել, նկատվել: *I wanted to hear his voice again, yet feared to meet his eye*. (BCHJ, 155). 2. Հայացքները հանդիպել: *Once in a while, after some witticism, he would look down, and his eyes would meet hers* (DThS,107): *Clap / lay/ set eyes on sb / sth* (խսկց.) (բառացի՝ ծափ տալ / դնել աչքերը մեկի / մի բանի վրա) - Տեսնել, նկատել: *It is upon the whole, the very worst place for a murder that I ever set my eyes on* (CWW, 228).

Նշված դարձվածքների շարքը կարելի է դասել նաև *աչք ու ականջից զուրկ* (տեսողությունից և լսողությունից զուրկ), *աչքին հալո գալ* (լավ չտեսնել, աչքի եղջերաթաղանթի վրա կետ գոյանալ), *աչքերը բռնվել*

(կուրանալ, տեսողությունից զրկվել), *աչքերի պիպիկը տրաքվել* (բրբ.) անեծք՝ կուրանալ, տեսողությունից զրկվել), *աչքի լույսը / լիսը / լուսը թափել / թափվել* (աչքը կուրանալ, կուրացնել), *աչքի լույսը ջուր դառնա* (անեծք՝ կուրանալ, լույսից զրկվի), *աչքը մեկին վար ծառայել* (զրք.) լավ չտեսնել, վատ տեսնել, չտեսնել), *աչքին սևանալ* (լավ տեսնելու կարողությունից զրկվել, լավ չտեսնել, չնկատել), *որքան աչքը կտրի* (որքան որ տեսանելի է), *զինված աչքերով* (օպտիկական սարքի օգնությամբ), *անզեն աչքով* (առանց օպտիկական սարքի), *դիտող աչք* (սուր աչք), *простым глазом* (անզեն աչքով), *four eyes see more than two* (ասացվ. (բառացի՝ չորս աչքն ավելի է տեսնում, քան երկուսը – մի քանի մարդ ավելի լավ են տեսնում, քան մեկը), *among the blind the one-eyed man is a king* (ասացվ.) (բառացի՝ կույրերի մեջ մեկ աչք ունեցողն էլ թագավոր է - կույրերի մեջ մի քիչ տեսնելն արդեն մեծ բան է) դարձվածքները:

Ինչպես ցույց է տալիս դիտարկված ենթադաշտի ուսումնասիրությունը, նրանում տեղ գտած դարձվածքներն իրենց ընդհանուր՝ «տեսնելու» և «չտեսնելու» իմաստների հետ մեկտեղ արտահայտում են նաև այդ իմաստները ճշգրտող, բացատրող մի շարք նրբիմաստներ: Օրինակ՝ հայերենի դարձվածքների մեջ կան այնպիսիք, որ ունեն ինչ-որ պատճառով տեսողությունը կորցնելու (*աչքը գիրը տանել, աչքի լույսը վեր առնել, աչքերը փչացնել, աչքերի լույսը սպիտակեցնել, աչքերը քռացնել*), մի բան տեսնելու համար տեսողությունը լարելու (*աչքին զոռ անել, աչքերը չորս անել, աչք ու ականջները չորս անել*), ուշադրություն գրավելու (*աչքը ընկնել*), աչքի հիվանդության պատճառով տեսողությունը վատանալու (*աչքին հար գալ*), օպտիկական սարքի միջոցով և ինքնուրույն տեսնելու նրբերանգները:

Միայն հայերենում են առկա կուրություն ցանկանալու անեծքները՝ *քռանան մորդ աչքերը*: Այս անեծքները երբեմն օգտագործվում են նաև վշտակցություն ու ավստսանք արտահայտելու համար՝ *քռանան աչքերս*:

Հայերենում հանդիպում են դարձվածքներ, որոնք արտահայտում են միտումնավոր կերպով մեկին կուրացնելու, պատժելու նրբիմաստ (*աչքի լույսը / լիսը հանել, աչքերի լույսից զրկել*):

Հայերենում, ռուսերենում և անգլերենում նկատելի է հնարավորինս հեռուն տեսնելու՝ *որքան աչքը կտրի, куда хватает / достанет глаз, насколько кинет / хватает глаз, as far as the eye could reach*, անձամբ՝ իր աչքերով տեսնելու, համոզվելու՝ *իր աչքերով, свой глаз-алмаз, чужой-стекло, своими (собственными) глазами, see sth with one's own eyes* նրբիմաստները:

Առանց որևէ օպտիկական սարքի, սեփական տեսողությամբ տեսնելու նրբիմաստ արտահայտող դարձվածքներ կան երեք լեզուներում (*անզեն աչքով, простым глазом, невооруженным глазом, the naked eye*): Եվս մեկ

նրբիմաստ, այն է՝ տեսադաշտում չլինելու պատճառով չհիշվելու, մոռացվելու, առկա է թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում, թե՛ անգլերենում (*աչքից հեռու, սրտից / մտքից ընկած, с глаз долой, из сердца вон, what the eye does not see the heart cannot grieve*):

Ուսումնասիրված դարձվածքների ճնշող մեծամասնությունը մենիմաստ է: Սակայն եթե նույնիսկ դրանք մեկից ավելի իմաստներով են օժտված, ապա այստեղ բերվել են միայն այս ենթադաշտին հատուկ իմաստները:

Միայն մի քանի դարձվածքների համար բերվել են մի քանի իմաստ (*աչքը խավարել, աչքի լույսը / լուսը / լիսը հանել, глаза на замылке, meet sb's eye*):

Հետաքրքիր է ռուսերենի *глаза на замылке* դարձվածքը՝ երկու իրար հակադիր իմաստներով՝ 1. Ոչինչ չի տեսնում: 2. Ամեն ինչ տեսնում է: Հայերենում էլ է առկա *պոռնուճակի / ծոծրակի վրա աչք լինել* դարձվածքը, որը, սակայն, ունի միայն մեկ՝ *ամեն ինչ տեսնել* իմաստը: «Իմ պոռնուճակի վրա էլ աչք կա», - *ասաց Օհանես աղան* (ՄԳԱ, 224): Համարժեք դարձվածքն առկա է նաև անգլերենում՝ *have eyes on one's neck* (բառացի՝ ծոծրակի վրա աչքեր ունենալ), որը նույնպես ունի միայն *ամեն ինչ տեսնել* իմաստը:

բ) Դարձվածքներ, որ արտահայտում են հայացք նետելու, նայելու, նկատելու իմաստները (այս դեպքում էլ դարձվածքների իմաստն առնչվում է զգայության և տվյալ զգայարանի գործառույթի հետ): Հմմտ.

Աչքերը չհեռացնել (մեկից). Սևեռուն նայել մեկին, աչքերով մեկին հետևել: - *Դու հիվա՞նդ ես, ի՞նչ է, դեմքդ սաստիկ փոխվել է, - ասաց մայրը երկյուղով լի ձայնով և նստեց նրա մոտ, աչքերը չէր հեռացնում որդու երեսից*: (ՐԵ, III, 253): *Աչքերը սևեռել* - Որևէ բանի կամ որևէ մեկին ակնապիշ, անթարթ նայել: *Թագուհին սևեռեց յուր աչքերը իշխանի վրա* (ՄԳ, 211): *Աչք ածել* - 1. Շուրջը նայել, դիտել: *Կամսարական Աշտարակեցին աչք ածեց շուրջ բոլորը և քթի տակ ժպտալով՝ պարասխանեց* (ՊՀ, 311): 2. Ձննել, տնտղել: *Ման է գալիս պառավի տունը, աչք է ածում ամեն անկյուն ու մնում է զարմացած ամեն բանի լիության վրա* (ԹԵ, V, 307): 3. Նայելով հսկել: *Մի քանի անգամ մեզանից մինը կամ երկուսը գնան աչք ածեն, ամեն դռներն իմանան* (ՊՀ, 236):

Աչք գցել / քցել / ձգել - Նայել, հայացք գցել: *Քանի քեզ հետ տեսնվել եմ, էն օրվանից դետը ես նրա երեսին մի քաղցր աչք չեմ քցել* (ՊՀ, 120):

Աչքը կթել (բրբ.) - Աչքը մի բանի վրա հառած նայել, ակնապիշ դիտել: Աղա մովրովի քաղցր ակնարկությանը և հուսադրությանն արժանացած, սրտի ուրախությամբ վերադառնում էին տուն, աչքը կթած սպասելով օրվանն ու ժամուն (ՊՀ, 204): *Աչքի պոչով / ծայրով / եզրով մտիկ տալ / նայել* - 1. Գաղտագողի՝ աննկատելի նայել՝ ցույց տալ: *Սակայն աչքերի եզրով իրար տեսնում էին մի փոքր* (ԴՎ, 73): 2. Թեթևակի նայել: *Մի մեծ*

բան հոռի լինելու, եթե մի աչքի պոչով ծիծելույզի մեջը նայեմ (ԹԵ, V, 314): Աչքերը չոել / չովել – Ակնապիշ, հիացմունքով, ուշադիր, սևեռուն հայացքով նայել– Տեսնելու բան էր, թե ինչպես ամենքն էլ հիացմունքից աչքերը չոեցին, երբ ներս մտավ փոքր աղջիկս (ԹԵ, V, 340): Մուշտարու աչքով մտիկ տալ / նայել (խսկց.) – Մանրամասն, ուշադիր զննել, ուսումնասիրել՝ իմանալու՝ որքան է պիտանի, ձեռնտու: Մինչև այնօր նա մի անգամ ևս չէր հետաքրքրվել Հոփսիսիմեով, միանգամ ևս, ինչպես ասում են, մուշտարու աչքով չէր նայել նրա վրա (ԲԵ, III, 327):

Впиваться / впиться глазами – Ակնդետ, ուշադիր նայել մեկին կամ ինչ-որ բանի: *Раскольников так и впился в него глазами, как бы подхватывая и взвешивая каждое слово* (ԴՓՈ, 380): *Не спускать глаз–* Ուշադիր նայել մեկին առանց հայացքը, աչքը կտրելու: *Санин шел то рядом с Джеммой, то несколько позади нее, не спуская с нее, глаз, и не переставал улыбаться* (ԿԻՏ, 36): *Пожирать глазами* – Ակնդետ, համառորեն, ագահորեն նայել մեկին: *Он пожирал ее глазами вздыхая и надоедал ее , мольбами и упреками* (ԼՄԴ, 99): *Пучить глаза* – Համառորեն նայել մեկին: *Шверном! Вас-фюр-эйн-гешихте!* – *говорили немцы, выпуча глаза друг на друга* (ԴՓԵ, 133): *Вскидывать/вскинуть глаза(ми)* – Ոտից գլուխ մեկին չափել: *Он недоверчиво вскинул на нее глазами* (ԴՓՈ, 495): *Смотреть / глядеть во все глаза* – Շատ ուշադիր, ակնդետ նայել: *Я не понимала; я стояла перед ним и смотрела на него во все глаза в изумлении* (ԴՓԵ, 28): *Стрелять глазами* – 1. Կարճ և արագ հայացքներ նետել: *Вертявый мальчишка в озорно-надвинутой на нос кепке стрельнув глазами по бумажке, весело подмигнул Павлу* (ՕՆԿ, 143). 2. Կոկետորեն նայել մեկին: *В переднем ряду гимназистки старших классов с напудренными носиками и лукаво стреляющими по сторонам глазами переговаривались между собой* (ՕՆԿ, 107):

Cast / pass/ run one's / the eye over sth (բառացի՝ աչքը գցել մի բանի/ վրա) – Մի բանի թռուցիկ նայել, աչքի անցկացնել: *Perry who had cast a persistently envious eye upon the growth of the dazzling magnificence next door, timedly suggested that perhaps a touch of paint might benefit the exterior* (ՇԱՆ, 267). *There was no other help at hand. He stopped, ran his eye over my dress* (ԲՇԽ, 116): *Fasten / fix / rivet one's eyes on / fix with one's eyes* (բառացի՝ աչքերը հառել / գամել մեկին / մի բանի) – Ակնդետ նայել, աչքերը հառել: *Broady fixed a magnetic eye upon his son and held for a moment the other's wavering glance* (ՇԱՆ, 97). *Eyes were riveted upon the more elaborate efforts of the stars* (ԴԿՏ, 487): *Out of / from / with the corner / tail of one's eye* (բառացի՝ աչքի անկյունից՝ աչքի պոչից) – Աչքի պոչով՝ ծայրով, հարևանի, թեթևակի (նայել): *He began to paint, and Philip looked at him from the corner of his eye* (ՄՎԽ, 180): *Not to take / tear one's*

eyes from / off sb / sth (բառացի՝ մի բանից / մեկից աչքերը չվերցնել / չպոկել) - Աչքը չկտրել, հայացքը չհեռացնել: *The scenery was peculiar. Soames could not take his eyes off it* (GJS, 140).

Այս դարձվածքների շարքում տեղ են գտել նաև մի քանի այլ միավորներ՝ *աչքը պահել* (հայացքը բևեռել, սևեռել), *աչքին ուղիղ / շիտակ նայել* (աչքերին ուղիղ նայել), *աչքերը կանգ առնել* (մեկի կամ մի բանի վրա) (մեկին կամ մի բանի նայել), *աչքերը հաճել* (շուրջը նայել, չորս կողմը նայել), *աչքը/աչքերը ման ածել/ ման ի ման անել* (խսկց.) (չորս կողմը նայելով՝ փնտրել), *աչք դիպչել* (տեսնել, նկատել), *աչքին հանդիպել* (տեսնել), *աչքն աչքին ընկնել* (հայացքները հանդիպել), *проглядеть все глаза* (1. ակնդետ նայել մի տեղի՝ անհամբերությամբ սպասելով ինչ-որ մեկի հայտնվելուն: 2. Երկար և շատ նայել մեկին *шнырять глазами* (հետաքրքրասեր և ագահ հայացքներ նետել շուրջը, *краем глаза*, (շատ արագ կարճ ժամանակով, թեթևակի, աչքի պոչով), *мерить глазами* (մեկին հայացքով չափել, գննել), *measure sb with one's eye* (բառացի՝ մեկին աչքով չափել - մեկին հայացքով գննել) և այլն:

Այս դարձվածքներն էլ, բացի իրենց արտահայտած ընդհանուր իմաստից, ունեն նաև մի շարք իմաստային նրբերանգներ: Այսպես, թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում առկա են դարձվածքներ, որ արտահայտում են «թեթևակի նայելու» (*աչքը պտտացնել, աչքի(ց) անցկացնել, աչքի պոչով նայել, աչք փալ, стрелять глазами, глаза бегают, краем глаза, cast / run one's eye over sth, from the corner of one's eye*) և «ակնապիշ, սևեռում նայելու» (*աչքերը չհեռացնել, աչքերը սևեռել, աչք(եր)ը հառել, աչքը կթել(բրբ.), աչքերը մեխվել(մի բանի վրա), աչքերը չռ(վ)ել, աչքերը պլշել, աչքերը չորս, вшиваться глазами, таращить глаза, глаза не отрываються, не спускать глаз, пожирать глазами, пялить глаза, пучить глаза, останавливать свои глаза, смотреть во все глаза, fasten / fix / rivet one's eyes on sth / sb, not to take / tear one's eyes off / from sb / sth*) նրբիմաստները:

«Մեկին կամ մի բան ուշադիր, լարված նայելու, դիտելու, գննելու, հետևելու» նրբիմաստները կան միայն հայերենում և ռուսերենում (*աչք ածել, աչքերը վազեցնել, մուշտարու աչքով նայել / մտիկ փալ, աչքը չորս կողմն ածել, вскидывать глазами, ускачь глазами*):

«Թաքուն, գաղտագողի, աննկատելի» նայելու իմաստային նրբերանգը տեղ է գտել միայն հայերենի դարձվածքներից մեկ-երկուսում՝ (*աչքը ծերպ անել, աչքի պոչով / ծայրով / եզրով մտիկ փալ / նայել* (I իմաստ), իսկ «ագահությամբ» և «կոկետորեն» նայելու նրբիմաստները նկատվել են ռուսերենում՝ (*пожирать глазами, строить / делать глазки, стрелять глазами*) և հայերենում՝ *աչքերով ուրել*: Նկատելի է, որ որոշ դարձվածքներ իրենց մեկ իմաստով մի նրբիմաստ են արտահայտում, մյուսով՝ մեկ այլ,

«հայացքները հանդիպելու» նրբիմաստը կա միայն հայերենում և անգլերենում (*աչքն աչքին ընկնել, meet sb's eye*):

Դարձվածքների մեծ մասը մենիմաստ է, իսկ այն դարձվածքները, որ ունեն մեկից ավելի իմաստներ, այս ենթադաշտում ընդգրկվել են վերջինիս հատուկ իմաստներով: Հարկ է նշել սակայն, որ դարձվածքներից չորսը (*աչք ածել, աչքի պոչով նայել, раскидывать глазами, стрелять глазами*) հանդես են եկել իրենց բոլոր իմաստներով:

գ) (2)նկատելու, (չ)երևալու, տեսադաշտում (չ)լինելու իմաստներն էլ սերտորեն կապված են նախորդ իմաստների հետ, քանի որ նույնպես հիմնված են աչքի հիմնական գործառույթի վրա: Հմմտ.

Աչքից / աչքերից ծածկել / թաքցնել – Մեկից մի բան թաքցնել, ծածկել: *Նստեց նորից և չէր իմանում ինչպես անի, որ այցելուի աչքից ծածկի իր կեղտոտ, ճմռթված մանժեպոները* (ՆՊ, 111): *Աչքից / աչքերից ծածկվել* – Այլևս չերևալ, թաքնվել: *Որ մեր աչքից ծածկված հազար ճանապարհ է բացում հանկարծակի, Ու դարձնում է մարդուն... հավասար է դարձնում, իր սրեղծած աստծուն* (ՍԵ, I, 356): *Աչքից չքանալ / չքվել / անհետքանալ* – Անհայտանալ, աներևութանալ: *- Ես հենց էն էստող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր, - ասում է անծանոթն ու չքանում ապշած մարդ ու կնկա աչքերից* (ԹԵ, V, 190): *Աչքից փախցնել / փախչել* – 1. *Աչքից հեռու պահել, թաքցնել / թաքնվել: Այդ հին փրած հնարքներ են՝ գլխավոր մարդասպանին աչքից փախցնելու համար* (ՊՀ., 261): 2. Տեսողությունից՝ տեսադաշտից կորցնել, այլևս չնկատել: *Նա մի բան աչքից փախցրել էր. Նա ավելորդ էր համարել հարցնել, թե յուր երևան գտնված միջոցը ու՞ր է նոր քննիչը* (ՊՀ., 305):

Перед глазами – Շատ մոտիկ, լավ նկատվել, երևալ, պատկերանալ: *Эти два слова точно стояли перед моими глазами, начертанные в мраке* (ՏԻՏ, 50): *На глазах* – Մեկին հայտնի, նկատելի: *Я все видела, все чувствовала, все, выстрадала; все это было на глазах моих* (ԴՓԲ, 21). *Не толкайтесь, капитан; сочувствую кровавой обиде, но не могу позволить кулачного права с женщиной на глазах публики* (ԴՓԲ, 375): *Казаться / показываться / показаться на глаза* (փղվրդ.) – Հայտնվել ինչ-որ մեկի առջև, տեսնվել, նկատվել: *Казалось и он сам понимал, что он очень странен, как-то не похож на других, и потому старался как можно реже казаться всем на глаза* (ԴՓՊօ, 205): *Хоть глаз выколи* – Շատ մութ է, բոլորովին ոչինչ չի երևում: Մատդ աչքը կոխես՝ չի տեսնի: *Зато не забыть Павлу пути от дома до комендантской. Ночь темная, хоть глаз выколи* (ՕՈՒ, 74). *На дворе было темно, хоть глаз выколи* (ԼՄԳ, 111): *Скрыться от / из глаз* – Չհայտնվել, անհետանալ, թաքնվել: *“До завтра! До завтра!” - пронеслись в моей голове, когда она скрылась из глаз моих* (ԴՓՊօ, 136):

Before / under sb's eyes (բառացի՝ մեկի աչքերի առաջ / տակ) – Մեկի աչքի առջև: *The impeccable miss Moir would condemn her immediately, would perhaps repudiate her before the eyes of the entire town* (CAH, 310): *Keep one's eyes off / from sb.* (բառացի՝ աչքերը մեկից հեռու պահել), – Չնայել մեկին: *But as he drank his tea, Andrew was most fascinated by Mrs. Boland – he simply could not keep his eyes from her* (CAC, 156):

Այս ենթադաշտում տեղ են գտել նաև *աչքից փախչել*, *աչքից կորչել*, *աչքից հեռու աչքից թռչել / թոցնել*, *вставать перед глазами*, *думь в глаза* և այլ դարձվածքներ:

Վերոնշյալ դարձվածքներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ դաշտում ընդգրկված դարձվածքները ևս արտահայտում են իմաստային որոշ նրբիմաստներ: Նախ և առաջ հարկ է նշել, որ հայերենի դարձվածքներն արտահայտում են բացառապես չերևալու, չնկատվելու իմաստը, մինչդեռ ռուսերենի և անգլերենի ենթադաշտերում նկատելի են թե՛ նշված իմաստը և թե՛ վերջինիս հակադրվող իմաստը: Հայերենում, ռուսերենում և անգլերենում առկա է «մտավոր պատկերացնելու, մտքի առջև տեսնելու» նրբիմաստը (*աչքի առաջ*, *աչքի դեմ*, *стоять перед глазами*, *перед глазами*, *вставать перед глазами*, *before / under sb's eyes*, *float before / under sb's eyes*, *float before the eyes*):

Հայերենում և ռուսերենում նկատելի է միտումնավոր կերպով մեկին չերևալու, թաքնվելու, թաքցնելու իմաստային նրբերանգը (*աչք(եր)ից ծածկել / թաքցնել*, *աչքից հեռացնել*, *աչք(եր)ից ծածկվել*, *աչքից փախչել / փախցնել*, *скрыться от глаз*). Միայն հայերենում են առկա «չնկատելու համար ջանք թափելու» (*աչքից խուսափել / խույս տալ*) և «ուշադրությունից, տեսողությունից» վրիպելու (*աչքից հեռու մնալ*), ինչպես նաև «հրամայաբար իրենից հեռացնելու» (*աչքերիցս հեռացեք / կորեք*, *աչքից հեռու*) նրբիմաստները, իսկ «մթության պատճառով չտեսնելու» (*хоть глаз выколи*) և «մի բան խիստ նկատելի, տարբեր, զանազանվող լինելու» (*думь в глаза*, *думь no глаз*) երանգներն առկա են միայն ռուսերենում:

Ուսումնասիրված բոլոր դարձվածքները մենիմաստ են՝ բացառությամբ հայերեն երկու դարձվածքի, որոնց երկու իմաստներն էլ հատուկ են այս ենթադաշտին (*աչքից թռչել / թոցնել*, *աչքից հեռու*):

դ) Դարձվածքներ, որ արտահայտում են ուշադրություն գրավելու, զննելու, հետևելու ու հսկելու, ինչպես նաև ուշադրությունից դուրս մնալու, միտումնավոր կերպով չնկատելու, անտեսելու երևույթները: Հմմտ.

Աչքին ընկնել – 1. Հանկարծ երևալ, նկատվել, մի պահ տեսնել, պատահաբար ուշադրությունը գրավել: *Բավական հեռու տեղից, լուսնի պարզ լուսովը վերջապես Սաքոյի աչքին ընկավ Էջմիածնի գմբեթի փայլուն գլուխը*: (Պռ., 221): 2. Ուշադրության արժանանալ: *Յուրաքանչյուրն աշխատում էր լավ երևալ իր ծիով, զեն ու զրահով արքայական*

պատվիրակի աչքին ընկնել (ՍԳՀ, 51): Աչքը ծռել – 1. (մեկի կողմը) Մի բանի վրա ուշադրություն դարձնել, որևէ մեկի նկատմամբ ցանկություն ունենալ: Որ կնկա կողմը աչքս կծռեի, բոլս մեջն էր (ՍԳՀ, 43): 2. (մեկից կամ մեկի վրա) Աչքը թեքել, անտես անել, ուշադրություն չդարձնել, մեկի նկատմամբ վերաբերմունքը փոխել, թշնամանալ: Դու էլ ինձ լսի՛ր, մովրովի աչքը վրեղ մի՛ ծռի, Սաքոյին փեսա շինի, աստված էլածն օրհնի (ՊՀ, 215): Աչքի ընկնել – Նկատվել, երևալ, ուշադրություն գրավել: Այդ ուղղությամբ առանձնապես աչքի էր ընկնում ֆրանսիացի մի բանաստեղծ (ԹԱ, 127): Այդ խմբերի մեջ աչքի էր ընկնում Առաքելյինը, որի մեջ մտածները ընտիր հեծյալներ էին Ձմեռոցից և Զարեհավանից (ԴՎ, 504): Աչքերը մեկը տասը դարձրած – Շատ ուշադիր: Ուստի Մարգարն աչքերը մեկը տասը դարձրած ման էր գալիս գործարանում (ԹԱ, 209): Աչքերը չորս անել / շինել – 1. Անակնկալից զգաստանալ, ուշադրությունը լարել: - Էդ ո՞րտեղ է,- աչքերը չորս է անում խելոք ախպերը (ԹԵՎ, 193): 2. Ուշադիր նայել, լավ հսկել, աչալուրջ հետևել: Երեխան տմբտմբացրեց գլուխը և աչքերը չորս շինած հառեց թասի ջրին (ՆՊ, 17): Աչքը չորս բանալ / բաց անել – 1. Աչալուրջ, շատ ուշադիր՝ զգույշ լինել: Իսկ հիմի աչքերդ չորս բաց արա, նա դեպի բերդն է գալի (ՊՀ, 361): 2. Ուշադրությունը լարել, զգաստանալ: Թագավորը մի կարաս ոսկու անունը լսում է թե չէ՝ աչքերը չորս է բաց անում (ԹԵՎ, 194)⁹⁹: Մի աչք / աչք-ականջ / շունջ / հոգի դառնալ – Ուշադրությունը կենտրոնացնել, խիստ լարվել: Ամբողջ Դվինը մի աչք, մի շունջ և մի հոգի դարձած յուր թագավորի ելնելուն էր սպասում (ՄԳ, 58): Աչքը / աչքերը վրան պահել – Ուշադիր նայել՝ հսկել, զգույշ լինել, պահպանել: - Քեզի քացի կտան, աչքդ վրան պահիր (ԲԵ, 162):

Աչքի տակով / տակից դիպել, հսկել, հետևել / չափել / նայել – Ծածուկ, գաղտնի հսկել, հետևել, աննկատելիորեն նայել: Դիք, տախտակե լայն աստիճաններով բարձրանալուց առաջ Օհանես աղան աչքի տակով մի անգամ էլ նայեց տանտիրուհուն (ՄԳԱ, 215):

Бросаться / броситься в / на глаза – Ուշադրությունը գրավել, նկատվել: Вот почему я обращал на нее, внимание, следил за нею, это-то внимание бросилось вам в глаза (ԴՓՈ, 288): Попадаться / попасться на глаза – Հանկարծակի նկատվել, ուշադրությունը գրավել: Револьвер, отброшенный Дуней и отлетевший к дверям, вдруг попался ему на глаза (ԴՓՈ, 477): Запускать глаза (փղվրդ.) – Թաքուն նայել, հետևել: Покорный своей привычке совать свой нос и запускать глаза всюду, он заглядывал в рукомойник, в складки опущенной шторы, в дверные щели, в лампу (ԿՐ, 111): Глаз да глаз нужен – Պետք է ուշադիր

⁹⁹ Այս վերջին երկու դարձվածքների հիմքում ընկած է չափազանցման ոճական հնարը:

հետևել մեկին: *Да за вами, зайцами, глаз да глаз нужен* (KP, 105): *He сводить глаз* – Ուշադիր հետևել մեկին: *Она тихо подошла к нему, села на постель подле и ждала, не сводя с него глаз* (ДФП, 391):

Be all eyes (բառացի՝ համակ աչք լինել) – Նայել ամբողջ ուշադրությամբ: *He was all eyes as the train sped through the country* (MWB, 169): *Be in /come into/get into the public eye* (բառացի՝ լինել / մտնել հասարակության աչքը) – Ուշադրության կենտրոնում լինել, գրավել հասարակության ուշադրությունը: *There was, however, at this time, one theatre, the Chicago Opera House, which was considerably in the public eye, and its manager, David A. Henderson had a fair local reputation* (DThS, 101): *Have (got) an / one's eye on sb / sth* (բառացի՝ մի բանի / մեկի վրա աչք ունենալ), Հետևել: *“I'm going, but remember what I've said, I'll still have my eye on ye!* (CAH., 38): *Jump / leap to the eye/ strike one's eye/ take sb's eye* (բառացի՝ ցատկել մեկի աչքին/ խփել մեկի աչքին/ վերցնել մեկի աչքը) – Աչքի ընկնել, ուշադրությունը գրավել: *The plan was so ingenious that it did not at once leap to the eye of Hercule Poirot* (KE, 254): *Have / keep one's eyes open/ wide open* (բառացի՝ աչքը բաց պահել/ունենալ) – Ուշադիր հետևել դիտել (խսկց.) *«I shall stay up for it, and keep my eyes open»* (GJS, 38): *Keep an eye / a sharp eye on sth / sb* (բառացի՝ աչքը մեկի/ մի բանի վրա ունենալ/ պահել) – Մեկին, մի բանի հետևել: *It means keeping an eye on her, constant observation, every care* (CAC, 345): *Under the eye of sb* (բառացի՝ մեկի աչքի տակ) – Մեկի հայացքի, հսկողության տակ: *We have got him close under our eye here in London, and we strongly suspect he had something to do with helping her in the first instance to escape from the Asylum* (CWW, 147):

Այժմ ներկայացնենք դարձվածքներ, որ արտահայտում են «ուշադրությունից, հսկողությունից, տեսադաշտից դուրս մնալու» իմաստ: Հմմտ.

Աչքից բաց թողնել – Չնկատել, տեսադաշտից բաց թողնել: *Հսկա հազարացին ահագին սուրը բարձրացրած պապրասսովում էր յուր հարվածը կշռել պապանու գլխին, երբ Մարգարետունի իշխանը, որ աչքից բաց չէր թողնում քաջ որդուն, ետևից որոտաց* (ՄԳ, 291): *Աչքը թեքել* – Ուշադրությունը մի բանից հեռացնել, աչքը շեղել: *Գողն էլ մի կոնից, գելն էլ մի կոնից, Աչքի թեքեցիր - բանիդ տերը չես* (ԹԵ, III, 73): *Աչք փակել/ խփել* – Չտեսնելու տալ, ներողամիտ լինել, անուշադրության մատնել, անտեսել: *Սկզբում նրա պաշտոնակիցները փորձեցին աչք փակել* (ՄԳԱ, 17):

Закрывать / закрыть глаза (на что/ перед чем) – Միտումնավոր կերպով ուշադրություն չդարձնել ինչ-որ բանի, անտեսել: *Я отдавался всем своим впечатлениям и сам с собой лукавил, отворачивался от воспоминаний и закрывал глаза перед тем, что предчувствовал впереди* (ТИТ, 53):

Close / shut one's eyes to sth / turn a blind eye on / to sth (բառացի՝ աչք փակել /մի բանի կույր աչք դարձնել) - Աչքերը փակել մի բանի վրա, մատների արանքով նայել, անտեսել, ուշադրություն չդարձնել: *Do you suspect the people in charge of her of closing their eyes purposely* (CWW, 328).

Դարձվածքների այս խմբում տեղ են գտել նաև մի քանի այլ միավորներ՝ *աչքերով խաղալ* (Իր վրա ուշադրություն հրավիրել), *աչքով ճամփել* (հայացքով հետևել, հետևից նայել), *աչքը դռանը պահել* (մտիկ տալ – տունը հսկել՝ պահպանել տանից չհեռանալ), *աչքը մեկի վրա պահել* (մեկին հսկել, հետևել), *приводить глазаму* և այլն:

«Հասարակության ուշադրությունը գրավելու» նրբիմաստը կա միայն անգլերենում (*be in / come / get into the public eye*), իսկ «զգուշության, աչալքջության, զգոնության, անզգայության» նրբերանգները առկա են միայն հայերենի դարձվածքներում (*աչքը չորս բանալ / բաց անել, արթուն աչքով*): «Պահպանության նպատակով հսկելու, հետևելու» իմաստն էլ նկատվում է հայերենում և անգլերենում (*աչքը վրան պահել, աչքը դռանը պահել, have/ keep an/ one's eye on sb/ sth*):

Ինչպես ցույց է տալիս այս խմբի դարձվածքների ուսումնասիրությունը, դրանց մեծ մասը մեխիմաստ կապակցություններ են: Կան նաև այնպիսիք, որ ունեն մեկից ավելի իմաստներ, սակայն այս դաշտում դիտարկվել են նրանց՝ տվյալ դաշտին բնորոշ իմաստները: Միայն սակավաթիվ դեպքերում (*աչքին ընկնել, աչքը ծռել, աչքը չորս անել / բանալ / բաց անել*) բազմիմաստ դարձվածքների իմաստներից բերվել են երկուսը, որոնք հատուկ են այս դաշտին: Հետաքրքիր է *աչքը ծռել* դարձվածքը, որի երկու իմաստներն էլ թեև դիտարկվող դաշտում են, սակայն հակադրվում են միմյանց:

Ուսումնասիրելով բերված դարձվածքների իմաստները՝ նկատում ենք, որ բացի տվյալ դաշտին բնորոշ ընդհանուր «ուշադրություն, հսկողություն» իմաստից, որոշ դարձվածքներ ունեն նաև իմաստային նրբերանգներ: Օրինակ, բոլոր երեք լեզուներում առկա են այնպիսի դարձվածքներ, որ արտահայտում են «ուշադրություն դարձնելու» և «միտումնավոր կերպով իր վրա ուշադրություն հրավիրելու, գրավելու» (*աչքի(ն) ընկնել, աչքը ծռել, աչքը մի բանի վրա ընկնել, աչքի զարկել, աչք ծակել, աչքից վրիպել, աչք դարձնել, աչքին խփել, աչքը գցել, бросаться в/на глаза, глаз положить (на кого), лезть в глаза, попадаться в глаза, угрять глазами, collect eyes, jump/ leap to sb's eye, make/ throw eyes at sb*), իմաստային նրբերանգները:

«Գաղտնի, ծածուկ հսկողության» (*աչքի փակով / փակից դիպել / հսկել, Արգոսի աչքեր, запускать глаза, have / keep one eye on sb / sth*), ինչպես նաև «դիտավորյալ չտեսնելու, անտեսելու, ուշադրություն չդարձնելու» (*աչք փակել, խփել, закрывать / закрыть глаза (на что), close /*

shut one's eyes to sth, turn a blind eye on/ to sth). նրբիմաստները ևս կարելի է նկատել երեք լեզուներում: «Ուշադրության լարումը, կենտրոնացումը, լարված հսկողությունը» նկատվում է միայն հայերենում և անգլերենում (*մի աչք / մի աչք-ականջ դառնալ, աչքը / աչքերը չորս / անել / շինել/, չորս աչքով նայել, աչքերը մեկը փառք դարձնել, աչք ու ականջ, աչքի մեկը/ մինը հազար անել, the cynosure of all eyes, with all one's eyes*):

Հայերենի, ռուսերենի և անգլերենի *աչք* բաղադրիչով զգայություն արտահայտող դարձվածքները պատկանում են դարձվածային սերտաճումների և միասնությունների շարքին՝ անօտարելի և անփոփոխելի բաղադրիչներով: Իմաստային առումով դարձվածքների գլխավոր անդամը *աչք* բաղադրիչն է, որը ոչ մի դեպքում չի կարելի օտարել, այլապես դարձվածքը կգրկվի իր դարձվածային իմաստից: Դարձվածքները մեծ մասամբ, ինչպես նշվել է, մենիմաստ են: Որոշ բազմիմաստ դարձվածքներ դիտարկվել են միայն տվյալ դաշտին (ենթադաշտին) բնորոշ իմաստներով:

Դարձվածքները պատկանում են իմաստակառուցվածքային տարբեր խմբերի: Նրանց մեջ գերակշռում են բայական կառույցները, սակայն բոլոր լեզուներում էլ հանդիպում են նաև մակբայական դարձվածքներ: Հայերենում առկա է նաև մեկ եղանակավորող, իսկ ռուսերենում և անգլերենում մեկ-երկու հաղորդակցական դարձվածք: Դարձվածքներում գործում են անվանական (առկայացման, հոլովի, թվի) և բայական (թվի, ժամանակի, սեռի և այլն) քերականական կարգեր: Այդ կարգերը մեծ մասամբ ունեն իմաստազատիչ դեր, և փոփոխվելու դեպքում միավորը կարող է իմաստազրկվել:

Ուսումնասիրված դարձվածքների շարքում հանդիպում են բազմաթիվ դարձվածային տարբերակներ:

1) բառային՝ *աչքի պոչով / ծայրով / եզրով նայել, աչք փակել / խփել, աչքից չքանալ / չքվել / անհետանալ, куда хватают / достанет глаз, смотреть / глядеть во все глаза, clap / lay / set eyes on sb / sth, cast / pass / run one's eye on sb / sth, fasten / fix / rivet one's eyes on sth / sb, close / shut one's eyes to sth*,

2) քերականական՝ *աչքը աչքերը կտրել, աչքի լույսը թափել / թափվել, աչքից փախցնել / փախչել, скрыться от / из глаз, вникаться / вникать глазами, keep one's eyes off / from sb*,

3) ոճական (հայերենում)՝ *աչքի լույսը / լուսը / լիսը հանել, աչք գցել / քցել / ձգել* և այլն:

Տեսնելու, հայացք նետելու, նկատելու, զննելու, ուշադրություն գրավելու, հետևելու և հսկելու իմաստներն արտահայտող դարձվածքները լայն առումով գտնվում են հոմանշային հարաբերության մեջ՝ կազմելով ավելի նեղ հոմանշային շարքեր ըստ ենթադաշտերի: Հոմանշային հարաբերության մեջ են նաև չտեսնելու, չնկատելու, տեսադաշտում

չլինելու, ուշադրությունից դուրս մնալու, անտեսելու իմաստներն արտահայտող դարձվածքները՝ դարձյալ ավելի նեղ հոմանշային շարքեր կազմելով ըստ ենթադաշտերի: Նկատվում են նաև որոշ հոմանշային շարքեր՝ ըստ նրբիմաստների:

Բնական է, որ նշված երկու հոմանշային շարքերը միմյանց հետ գտնվում են հականշային հարաբերության մեջ:

Դիտարկված բոլոր դարձվածքները հիմնականում գործածվում են ժողովրդախոսակցական ոճում, բարբառներում: Դրանցով չափազանց հարուստ է գեղարվեստական գրականությունը: Դարձվածքների ճնշող մեծամասնությունը հատուկ է դիտարկվող լեզուներից միայն մեկի լեզվամտածողությանը, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որ ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ երկու լեզվում, օրինակ՝ *անզեն աչքով* – *невооруженным глазом* – *with the naked eye*, *որքան աչքը կտրի* – *куда хватает / достанет глаз* – *as far as the eye could see*, *աչքի պոչով / ծայրով / եզրով նայել* – *краем глаза* – *out of / from the corner of one's eye*, *աչքերը չորս անել* – *во все глаза be all eyes*, *աչքերը չռել* – *пучить глаза*, *աչքերը չհեռացնել* – *не сводить глаз* – *not to take / tear one's eyes from sb*, *աչք գցել* – *cast / pass / run one's eye on sth / sb*, *աչքերը սևեռել* – *внудиться глазаму* – *fasten / fix / rivet one's eyes on sth / sb*, *աչքին ընկնել* – *leap to the eye*, *աչք փակել* – *закрывать глаза* – *close / shut one's eyes to sth*.

Դիտարկվող լեզուներում գոյություն ունեցող համարժեք դարձվածքների և նույնիսկ համարժեք իմաստային դաշտերի գոյությունը վկայում է այդ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, ինչն էլ իր հերթին բացահայտում է լեզվամտածողության մեջ եղած մշակութային ընդհանրությունները, մյուս կողմից՝ չնայած ուսումնասիրված դարձվածքների շարքում հանդիպող բազմաթիվ համարժեքների, ուսումնասիրված դարձվածքների ճնշող մեծամասնությունը հատուկ է միայն այս կամ այն լեզվին, մի հանգամանք, որ վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ազգային յուրահատկությունների մասին: Տարբերությունները պայմանավորված են մի կողմից՝ աչքի անվանումն օգտագործելու տարբեր սովորությամբ, լեզվական միավորների իմաստային ծավալի տարբերություններով, հոմանշային տարբերություններով, մյուս կողմից՝ արտալեզվական գործոններով: Ինչպես նշում է Ս. Գ. Տեր-Մինասյան. «Իրականության միևնույն հատվածը տարբեր լեզվական ձևավորում է ստանում տարբեր լեզուներում, քանի որ իրականության այդ հատվածն անցնում է մարդու գիտակցության միջով և արտացոլման ընթացքում ձեռք է բերում այնպիսի յուրահատուկ գծեր, որոնք հատուկ են տվյալ ազգային գիտակցությանը, որն իր հերթին պայմանավորված է տվյալ ժողովրդի մշակույթով» [ԴԳ, 49]:

Համառոտագրություններ

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Ե., 1977: ՆՊ - Նար - Դու, Պատմվածքներ, վիպակներ, Ե., 1978: ԹԱ - Թորգոմյան Ծ., Անմար կրակներ, Ե., 1959: ՐԵ - Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1983: ՄԳ - Մուրացան, Գևորգ Մարգալետունի, Ե., 1957: ԴՎ - Դեմիրճյան Դ., Վարդանանք, Ե., 1987: ՍԳՀ - Սուքիասյան Ա., Գալստյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975: ԹԵ, - Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1992: ԲԵ - Բակունց Ա., Երկեր, Ե., 1986: ՄԳԱ - Մահարի Գ., Այրվող Այգեստաններ, Ե., 1966: CWW - Collins W. The Woman in White, USA, 1934: ՊՀ - Պոռշյան Պ., Հացի խնդիր, Ե. 1968: ԹԵ, 5 - Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Ե., 1994: ՍԵ -Սևակ Պ., Երկերի ժողովածու, հհ.1-4, Ե., 1972-73: ВС - Вердиева З. Н. Семантические поля в современном английском языке, М., 1986: ОНК - Островский Н. А. Как закалялась сталь. Л., 1977: КР - Квеселевич Д.И. Русско-английский фразеологический словарь. М., 1998: ДФП - Достоевский Ф.М. Преступление и наказание. М., 1983: ТИТ - Тургенев И.С. Три встречи. Л., 1979: ЛМГ - Лермонтов М. Ю. Герой нашего времени. Стихи-поэмы. Ер., 1984: ДФБ - Достоевский Ф.М. Бедные люди. Униженные и оскорбленные. М., 1974: ДФПо - Достоевский Ф.М. Повести. Л., 1984: КА - Кунин А.В. Англо-русский фразеологический словарь. М., 1982: ТЯ - Тер-Минасова С. Г. Язык и межкультурная коммуникация. М., 2000: US - Ullman St. Semantics. An Introduction to the Science of Meaning. Oxford, 1971: MWB - Maugham W. S. Of Human Bondage, London, 1975: BChJ - Bronte Ch. Jane Eyre, London, 1985: DThS - Dreiser Th. Sister Carrie, M., 1968: CWW - Collins W. The Woman in White, USA, 1934: CHH - Cronin A.J. Hatter's Castle, M., 1963: GJS - Galsworthy J. The Silver Spoon, M., 1956: CAC - Cronin A.J. The Citadel, M., 1957:

А. 3. Казарян. Семантическое поле армянских, русских и английских фразеологизмов с компонентом “глаз”, выражающие ощущение. Фразеологизмы, как и слова, могут быть включены в семантические поля. Данные единицы входят в указанные поля по общему смыслу их компонентов, независимо от их грамматических, структурных, стилистических и других особенностей.

Целью данной статьи является изучение, анализ и сопоставление армянских, русских и английских фразеологизмов с компонентами “глаз”, выражающих ощущение.

Изучение данных фразеологизмов выявляет некоторые сходства и различия как между семантическими, так и между другими особенностями фразеологических единиц указанных языков, что свиде-

тельствует об общности и различиях, существующих в языковом мышлении народов, говорящих на этих языках.

H. Z. Ghazaryan. Armenian, Russian and English phraseological Units with the Component “eye” Expressing Sensation. Like words, phraseological units can be included in semantic fields. These linguistic units belong to the mentioned fields according to the general meaning of their components, regardless of their grammatical, structural, stylistic and other characteristics.

The goal of this article is to study, analyze and compare the Armenian, Russian and English phraseological units with the component “eye”, expressing sensation.

The investigation of the mentioned units reveals some similarities and differences between the semantic, as well as other characteristics of the phraseological units of the languages studied. These similarities and differences speak of the common features, existing in the linguistic thinking of the peoples speaking these languages.

ԱՐԵՎ ԲԱՌԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տիեզերքի և երկնային լուսատուների նկատմամբ մարդկության հետաքրքրությունը շատ խոր արմատներ ունի և գալիս է հնագույն ժամանակներից: Դրանք մարդու համար պաշտամունքային արժեք ու նշանակություն են ձեռք բերել, դրանց հետ բազմազան հավատալիքներ ու պատկերացումներ են կապված:

Այս պատկերացումները, անշուշտ, իրենց արտացոլումն են գտել լեզվում՝ դրսևորվելով մի կողմից՝ այդ մարմինների անվանումների իմաստներում, հատկապես փոխաբերական, մյուս կողմից՝ դարձվածներում, որոնք հաճախ ձևավորվել են այդ փոխաբերական իմաստների հիման վրա, հաճախ էլ նոր փոխաբերացման աղիթ ու միջոց են դարձել:

Այսպես, *արևի* պաշտամունքը Հայաստանում ծայր է առել հնուց՝ ծովվելով հայ ժողովրդի հավատալիքներին և պատկերացումներին: Հագարամյակներ առաջ *արև* բառն ունեցել է *աստված, կյանք, լույս, տղամարդկային ուժ, պտղաբերություն, աչք* խորհրդանիշները: Հին մշակույթներում *արևը* համարվել և անվանվել է *տիեզերքի աչք*. այդ մասին վկայում է հայերեն *արեգակ* բառը, որտեղ *ակ*-ը ոչ թե փոքրացուցիչ մասնիկ է, այլ գրաբարյան *ակն(աչք)* բառը: Ինչպես իր «*Հայերեն արմատական բառարան*»-ում նշում է Հրաչյա Աճառյանը, *արևի/արեգակի* նկատմամբ նման մոտեցում ունեցել են ոչ միայն հայերը: Այսպես՝ պարսիկները *արևը* համարել են *Արամազդի աչք*, եգիպտացիները՝ *Տիմիուրդոսի աջ աչք*, հույները՝ *Դիոսի աչք*, հին գերմանները՝ *Վուոդանի աչք*, իսկ Հյուսիսային Գերմանիայի բնիկներն արևը *երկնքի գոհար* են անվանել: Եվ *աչքը*, ինչպես մեկնաբանում է Հ.Աճառյանը, այս դեպքում նշանակում է «*աղբյուր*», իսկ *արեգակ* բառը, համապատասխանաբար՝ «*տաքության և լույսի աղբյուր*»¹⁰⁰: Գ.Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» *արև* բառը գտնում ենք *արեգ* բառի բառահոդվածում. «Բնիկ հնդեվրոպական՝ *reu-«կարմիր > *արև*» արմատից, հմմտ. հ.հնդկ. ravi «արև»»: Այդ մասին կա նաև Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»:

Դիտարկենք, թե ի՞նչ իմաստներ ունի *արև* բառն այսօր: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում *արև* բառը տեղ է գտել հետևյալ իմաստներով՝ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում»՝ «1.Արեգակ: 2.Արեգակի արձակած ճառագայթները երկրի վրա. արեգակի լույսը, ջերմությունը: 3. *փիւք*. Կյանք, գոյություն, ուրա-

¹⁰⁰ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 312-313:

խոթություն: 4. *ած. Արևոտ», ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»՝ «1.Արեգակ: 2.Արեգակի տարածած լույսը, արևի ջերմությունը: 3.փխր. Կյանք, գոյություն, երջանկություն: 4.ած. Արևոտ: 5.Արևանման: 6. Ցերեկ, օր: 7.Կանացի հատուկ անուն», Էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ «1. Նույնն է՝ արեգակ (արեգակնային համակարգության կենտրոնական երկնային լուսատու): 2. Արեգակի արծակած լույսը և ջերմությունը: 3. Արևոտ եղանակ:4. փխր. Կյանք: 5. փխր. Ուրախություն, երջանկություն: 6. փխր. Տենչալի էակ, աստվածություն: 7. ած. Լուսավոր, պայծառ»:*

Ինչպես տեսնում ենք, նշված բառարաններում *արև* բառի փոխաբերական իմաստները բովանդակային առումով գրեթե համընկնում են՝ «կյանք, գոյություն, ուրախություն / երջանկություն», և միայն վերջինում կա մյուս բառարաններում բացակայող իմաստ՝ «*տենչալի էակ, աստվածություն*»: Ինչպես դժվար չէ նկատել, *արև* բառի՝ վերևում նշված խորհրդանշաններից միայն երկուսն են իրենց արտացոլումը գտել բառի փոխաբերական իմաստներում՝ *կյանք, աստված* :

Մինչդեռ իրենց կազմության մեջ *արև* բառն ունեցող դարձվածներում այդ բառը բաղադրիչ մյուս բառերի զուգակցմամբ, այլև միասնության մեջ, փոխաբերական իմաստների բազմազանություն է դրսևորում՝ 1. «կյանք»՝*արևը առնել* «սպանել, կյանքից զրկել», *արևը կտրվել* «մեռնել», *կարծ արև* «վաղամեռիկ», *երկար արև* «երկար կյանք», *արևի չվանը կտրել* «կյանքը մաշվել», 2. «Ժամանակ»՝ *արևի հեյր* «առավոտ շատ վաղ», *արևի հեյր քնել*, *արևի հեյր վեր կենալ* «վաղ քնել ու վաղ արթնանալ», *մինչև որ արևը պորպիրն վրա իյնա՝ ծագի* «շատ ուշ (առավոտյան անկողնուց վեր կենալու մասին)», 3. «ջերմություն»՝*արևը քաշալի գլուխ ա էրում* «արևը բարձրացել է. շոգ է անում», *արևը կծում է* «արևը այրում է», *արևի մերը (մայրը) մեռել է (խսկց.)* «արեգակի ջերմությունը պակասել է, շոգը կտրվել է (աշնանը)», 4. «լույս»՝*արևը դիպչել* «արևի ճառագայթներն ընկնել, լուսավորել», *արևը բացվել* «արև(ը) ծագել, լուսանալ», 5. «հասկանալի՝ ակնհայտ»՝*արևի պես պարզ* «միանգամայն ակներև, տեսանելի, հայտնի», 6. «գեղեցկություն»՝*արևի հեյր մրցել* «չքնաղ լինել (աղջկա մասին)», *արևին /արեգակին ասում է՝ դու մի՛ դուրս գա, ե՛ս եմ դուրս գալու* «չքնաղ, հմայիչ լինել», *արևն ամոթից ամպի տակ է մտնում, երբ դուրս է գալիս (մեկը)* «Շատ գեղեցիկ է, արևի հետ մրցում է», 7. «բախտ, հաջողություն»՝*մեկի արևը ելնել* «բախտը բացվել», *արևը թեքվել* «անհաջողության մեջ ընկնել, գործերը անհաջող գնալ», *ճակատը արև ծագել* «մեծ հաջողության հանդիպել», 8. «աշխարհ»՝*արևի տակ* «աշխարհում, կյանքում», *արևի տակ տեղ ունենալ* «աշխարհում (ինքնուրույն) ապրելու՝ դիրքի իրավունքով օժտված լինել», 9. «երիտասարդություն» *արևն(ս) անցնել* «կյանքը(ս),

երիտասարդությունն(ս) անցնել», *արև հասակ* «կյանքի ծաղկման շրջան, երիտասարդություն», 10. «բացահայտել»՝ *արևի դեմ հանել* «երևան հանել, բացահայտել», 11. «մեծություն՝ հզորություն»՝ *արև արքա* «թագավորին տրվող տիտղոս՝ որպես մեծության, հզորության խորհրդանիշ» /կարծում ենք՝ այս արտահայտությունն անմիջականորեն կապված է *արևի* պաշտամունքի հետ/ և այլն:

«*Արև*» բաղադրիչով միավորների քննության ժամանակ դիտարկվել են դարձվածքի վերածման գործընթացի տարբեր դրսևորումներ: Այսպես, դարձվածային իմաստը կարող է ձևավորված լինել բաղադրիչ բառերի փոխաբերական իմաստներով. օրինակ՝ *արև+գունանուն* կաղապարով կազմված միավորներում՝ *կանաչ արև*, *կարմիր արև*, *արևը սև*, դարձվածային իմաստը ձևավորվել է երկու բաղադրիչ բառերի փոխաբերական իմաստների «պարզ» *համակցման* ճանապարհով, այլ ոչ թե նախադարձվածային պատկերի հիման վրա, այսինքն՝ ընդհանուր իմաստի փոխաբերացմամբ: *Արև* բառն այս դարձվածներում դրսևորվել է իր փոխաբերական «*կյանք*» իմաստով, իսկ գունանունները՝ իրենց խորհրդանշային իմաստներով, համապատասխանաբար՝ *կանաչ*-ը՝ «11. Փխբ. Հասուն չդարձած, մատղաշ, մատաղահասակ», *կարմիր*-ը՝ «12. Փխբ. Բարեբաստիկ, երջանիկ, բախտավոր»¹⁰¹, *սև*-ը՝ «6. Փխբ. Դժբախտ, աղետալի»¹⁰²: Ըստ այդմ՝ *կանաչ արև* նշանակում է «մատաղ կյանք», *կարմիր արև*՝ «բախտավոր կյանք», *արևը սև*՝ «դժբախտ, ապերջանիկ»:

Այլ է գործընթացը հետևյալ դարձվածների պարագայում. *արևը մի ա-կանջով պոռնկ է արել* (խսկց.) «արևը դեռ քիչ է բարձրացել, դեռ նոր է լուսանում», *արևը մուրքում պոռնկ է արել* (խսկց.) «արևը մայր մտնելու մոտ է», *արևը քարին վրա է* «ծերացել է, մեռնելու մոտ է (Ակն-Պարսկ.)», *արևը տվիր, լուսնկա՞ն առիր* «նե՞ղն ես ընկել, քեզ կորցրե՞լ ես», *արևը փեղով քշել* «պարապ՝ նեղության մեջ լինել», (*մեկը*) *արև լինի՝ թաշկինակը տասը փարայով կջորացնի* «սարսափելի ժլատ», *արև լինի՝ մի մարդու չի տաքացնի* // (*մեկի*) *արևը մի թաշկինակ չի չորացնի* «ոչ ոքի դույզն օգուտ չի տա, ոչինչ չի տա», *ո՛չ արև տեսած, ո՛չ անձրև թակած* «բնավ չտեսնված ու չլսված», *արև չորցնել* (բրբ.) «անբանություն անել» և այլն, որոնք պատկերային առավել բարդ հիմք ունեն: Դարձվածային այս սերտաճումներում *արև* բառը գործածված է իր ուղիղ՝ «*արեգակ*» իմաստով, իսկ դարձվածացման գործընթացը կատարվել է նախադարձվածային ամբողջական պատկերի հիման վրա՝ զուգորդային եզակի կապերի ձևավորման շնորհիվ: Այսպես, ինչո՞ւ է *արևը փայտով քշելու* պատկերը զուգորդվել *պարապ* կամ *նեղության մեջ լինելու* հետ, *արևը քարի վրա լինելը՝ ծերանալու* կամ

¹⁰¹ Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»:

¹⁰² Ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի»:

մեռնելու հետ և այլն: Բերված բոլոր դարձվածներում այդ կապը մթազնված է, թեև ոչ նույն չափով և դարձվածային իմաստի ու դարձվածային պատկերի պատճառաբանվածությունը այս կամ այն չափով հնարավոր /կամ անհնար/ է մեկնաբանել:

Փոխաբերացման այլ շերտեր կամ գործընթացներ են բացվում բազմիմաստ դարձվածների իմաստային վերլուծության ժամանակ:

Բազմիմաստ դարձվածների տարբեր իմաստների ձևավորման գործընթացում երբեմն կատարվում է կրկնակի՝ հաջորդական փոխաբերություն: Այսպես՝ *արևը մայր մտնել*՝ դարձվածն ունի՝ «1. Արևը հորիզոնի հետևը ծածկվել՝ մթնել: 2. Կյանքը վախճանին հասնել, կյանքի վերջին շրջանն ապրել: 3. Կյանքից զրկվել:» իմաստները: Առաջինի հիմքում ընկած է «լույս» իմաստը, իսկ մյուս երկուսի հիմքում՝ «կյանք» իմաստը: Վերջիններս կարծես նույն երևույթի՝ կյանքի հաջորդական պահեր են նշանակում՝ երիտասարդությունը կորցնել և կյանքի վերջին շրջանը ապրել, ապա՝ այդ մնացած կյանքից էլ զրկվել: Համանման ձևով՝ *արևով հասնել*՝ «1. Տեղ հասնել ցերեկով՝ քանի դեռ արև կա, արևը մայր չի մտել: 2. Ժամանակին տեղ հասնել:» դարձվածի երկրորդ իմաստը ձևավորվել է երկրորդային վերաիմաստավորմամբ՝ ժողովրդի մեջ ընդունված այն պատկերացման հիման վրա, որ ժամանակին տեղ հասնելը զուգորդվում էր լույսով՝ մինչև արևի մայր մտնելը տեղ հասնելու հետ. ապահով, անփորձանք, վտանգներից զերծ մնալու համար պետք է մութին չմնալ: *Արևի հեյր քնել, արևի հեյր վեր կենալ*՝ «1. Վաղ քնել ու վաղ արթնանալ: 2. Օրնիբուն աշխատել:» դարձվածի պարագայում ևս իմաստներից երկրորդը առաջինի վերաիմաստավորման արդյունքում է առաջացել՝ «վաղ քնել և վաղ արթնանալ»-ը, իմաստային լրացուցիչ ծանրաբեռնվածություն ստանալով, ձեռք է բերել նոր նշանակություն՝ «օրնիբուն աշխատել», այսինքն՝ մարդը շուտ է քնում, որպեսզի հասցնի մինչև հաջորդ առավոտ ուժերը վերականգնել և առավոտյան վաղ արթնանալով՝ կարողանա ամբողջ օրն աշխատել և այլն: Նույն ձևով են առաջացել *արև ծագել* դարձվածի երկու իմաստները՝ «1. Մեկի համար բախտավոր վիճակ ստեղծվել, երջանկանալ: 2. Մեկի երեսին ժպիտ երևալ, ծիծաղել /ասվում է չծիծաղող, մռայլ մարդկանց մասին/»։ այսինքն՝ բախտավոր, երջանիկ իրավիճակում մարդու դեմքին ժպիտ կհայտնվի:

Դիտարկվում են նաև դեպքեր, երբ բազմիմաստ դարձվածների տարբեր իմաստները ձևավորվել են փոխաբերական տարբեր՝ զուգահեռ գործընթացների արդյունքում: Այս դեպքում, փաստորեն, միևնույն դարձվածի տարբեր իմաստները ձևավորվել են *արև* բառի փոխաբերական տարբեր իմաստների հիման վրա: Օրինակ՝ *արև տեսնել*՝ «1. Կյանք տեսնել, 2. Լույս տեսնել» դարձվածի երկու իմաստներից առաջինի հիմքում ընկել է «կյանք» իմաստը, իսկ երկրորդի հիմքում՝ «լույս» իմաստը: Համանման

ձևով՝ արևը խավարեցնել *«1.Սպանել, կյանքից զրկել, 2.Կուրացնել, արևի լույսից՝ տեսողությունից զրկել»* և այլն:

«Արև» բաղադրիչն ունեցող դարձվածների մեջ հանդիպում են նաև նույնիմաստ դարձվածներ, որոնք նույն իմաստն արտահայտում են տարբեր պատկերներով՝ *արև+այլ բառ(եր)* կաղապարով, օրինակ, *արևը մարել, արևը մայր մտնել, արևը հանգչել, արևը մթնել, արևը խավարել, արևը կծկել, արևը բաշխել (մեկին), արևը տալ, արևը կտրվել(ժող.), արևը թաղել, արևը առնել ու գնալ(խսկց.), արևը մնացողներին տալ* դարձվածները բոլորն էլ ունեն *«մեռնել»* իմաստը և հիմնականում ոճականորեն չեզոք են:

Հայ ազգագրության և բանահյուսության մեջ պահպանված տվյալները վկայում են, որ արևի պաշտամունքը բրոնզեդարյան և շատ ավելի վաղ ժամանակներից պահպանվել է հայ ժողովրդի մեջ մինչև մեր օրերը: Հայաստանի շատ վայրերում, օրինակ, գոյություն ունի արևածագը դիմավորելու սովորություն (հատկապես հարսանիքի հաջորդ օրը կամ թաղումից հետո): Մինչև օրս էլ ժողովրդի մեջ մեծ տարածում ունի *մեկի արևով երդվելու* սովորությունը, որը ևս արևի պաշտամունքից մնացած երևույթ է՝ *մեկի արև* (այսինչի՝ հայրիկիս, մայրիկիս...):

«Արև» բառի՝ վերևում թվարկված բոլոր փոխաբերական իմաստներից միայն *«կյանք»* և *«երջանկություն»* իմաստներն են ընկած դարձվածային արժեք ունեցող և բառարաններում որպես այդպիսիք ընդգրկված բանահյուսական այնպիսի միավորների հիմքում, ինչպիսիք են օրհնանքներն ու անեծքները, մաղթանքները, երդման, ողջույնի և համանման արտահայտությունները. դա վկայում է այդ իմաստների՝ ամենից հինը լինելու, արևի պաշտամունքից ծագած լինելու և, իհարկե, արևի՝ կյանքի անհրաժեշտ աղբյուրը լինելու մասին : Օրինակ՝ *ապրի՝ արևդ, թող (մեկի) օրն արևով անցնի/ծագի* «թող երջանիկ ապրի, դժբախտություն չտեսնի», *արևդ երկա՛ր լինի,երկար արև ունենա(մեկը)* «երկար կյանք ունենա» (օրհնանք), *(մեկի) արևը թաղել կամ(արևդ թաղեմ), արևը սև(անել)* «արևը խավարի, մեռնի» (Սասուն), *(մեկի) արևը մարեմ* «(մեկը) մեռնի, մահ բերեմ», *արևդ հո՛ղը դնեմ* «հոմանիշ՝ արևդ թաղեմ» (անեծք), *(իմ, քո, նրա) արևը վկա, հորս արև* (երդում), *արևիդ մեռնեմ, արևի՛դ մաքաղ, արևիդ սիրուն* (աղաչական կամ սիրալիր դիմելու արտահայտություն), *արև կենդանություն* (ողջույնի արտահայտություն), *(մեկի)արևը քե՛զ լինի* (մաղթանք), *(մեկի) արևին սև գա* (վշտի արտահայտություն դժբախտության առիթով) և այլն:

Այսպիսով՝ «արև» բառի փոխաբերացման գործընթացի վրա իրենց ազդեցությունն են թողել ինչպես ժողովրդական պատկերացումներն ու հավատալիքները, այնպես էլ բառային կապակցումներն ու դրանցով ձևավորված պատկերները, որոնք ընկած են դարձվածացման հիմքում:

1. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971.:
2. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
3. Պ.Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1969-1980:
5. Սրբ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հհ.1-4, Ե., 1944-1945:
6. Ա. Սուրիասյան, Ա.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

Л. А. Тер-Григорян-Переносные значения слова “солнце” во фразеологизмах армянского языка . Во фразеологических единицах армянского языка слово “солнце” представляется многообразием и многочисленностью переносных значений. На процесс метафоризации слова “солнце” во фразеологизмах армянского языка повлияли как национальные представления и верования, так и сочетания слов и образованные ими образы, которые лежат в основе фразеологизации.

L. A. Ter-Grigoryan. - Figurative senses of the word "sun" in phraseological units of the Armenian language. In phraseological units of the Armenian language the word "sun" is expressed by variety of figurative senses. The process of metaforization of the word "sun" in phraseological units of the Armenian language was influenced by national notions and beliefs on the one hand, and by combinations of words and images formed by them on the other, which lie in the bases of phraseological units.

**Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ «ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԻՄ ԵՎ ԻՄ ՄԻՋԵՎ»
ՊՈԵՄՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1988 թ. աղետալի երկրաշարժի ցնցող տպավորության և անլուր մտածմունքի բերումով է գրված ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմը, որը լույս է տեսել աղետից մեկ տարի անց, հավանաբար տարելիցի առիթով. Այն շուրջ երկու ամիս շարունակ թղթին չհանձնված ապրումներ է պարունակում: Գրվել է հաջորդ տարվա փետրվար-մարտ ամիսներին, տպագրվել (այն ժամանակ) «Խորհրդային գրող» հրատարակչության կողմից՝ հիսուն հազար տպաքանակով, հասույթը տրամադրվել է, ինչպես գրքի ամփոփագրում է նշվում, «Արցախի, երկրաշարժի, Ադրբեջանից բռնագաղթվածների և «Հայաստանի երեխաները», «Մայրություն», «Գթություն» ֆոնդերին»:

Այդ և հետագա տարիներին մեր ժողովուրդը տեսավ Սպիտակի երկրաշարժի ցնցումը, Ղարաբաղյան շարժման տագնապը, մեկը մահ և ավեր սփռեց, մյուսը՝ զարթոնք և վերելք:

Պոեմը գրված է բանաստեղծական խոսքի յուրօրինակ կառուցվածքով՝ ձայների հերթագայություն. յոթ առաջին ձայն և յոթ երկրորդ ձայն, մեկը՝ առաջադիր, մյուսը՝ հակադիր. ձայների խոսքային ներդաշնակություն: Հիշենք մեր հավատքի տուն եկեղեցիների պատարագների մասերի փոխ-հաջորդումները, մտաբերենք Պարույր Սևակի «Անլուելի գանգակատան» ղողանջները, «Օգնի՛ր ինձ, Մարիա՛մ» և այլն: Առաջին ձայնը հեղինակինն է, որ իրենն է ասում, երկրորդը՝ գթության մայր Թերեզինը, որին դիմում է հեղինակը: Բանաստեղծական պատկերի այլաբանությունը դառնում է ասելիքի հենք ու ձև՝ քրիստոնեական մաքրությանը հակադրելու վայրենիության օրհասականությունը. մի կողմից՝ զրկանք, մյուս կողմից՝ գթասրտություն:

Յոթ առաջին ձայներից վեցը գալիս է նույն կերպ՝ «-Ես ի՞նքս պիտի իջնեմ իմ խաչից» սկսվածքով, որ ոչ այլ ինչ, քան փոխաբերացում՝ «Իջեցումն խաչի». օրինակ՝ «-Ես ինքս պիտի իջնեմ իմ խաչից, /Ես ինքս պիտի հանեմ ձեռքերիս, ոտքիս գամերը / Եվ նորից, դարձյալ իջնեմ իմ հողին՝ / Այս անգամ արդեն վերջին իմ կամքը հրովարտակելու» (էջ 27) : Իսկ յոթ երկրորդ ձայներն սկսվում են՝ «Մա՛յր Թերեզ...» դիմումով և հաջորդող ասելիքի ընդհանուր ձևակերպումով («Մա՛յր Թերեզ, դո՛ւ ես...»,

«Մա՛յր Թերեզ, նայի՛ր», «Մա՛յր Թերեզ, ավա՛ղ...», «Մա՛յր Թերեզ, բավ է խնայենք իրար», «Մա՛յր Թերեզ, արդեն խեղդվում ենք մենք» և այլն):

Ըստ այսմ՝ պոեմը ներկայանում է խոսքի կառուցման արտասովոր հնարքով՝ երկխոսություն «իր և իր միջև» (Ինքը և Մայր Թերեզը). Գրված է տազնապալի շնչով՝ թաթախված խորհելու և ամփոփելու, հիշելու և զգալու շեշտով: Կյանքի և ապրելու խորհրդածություն՝ տազնապալի մեջ, կորուստն ապրելիս, գտնելու և արժևորելու ըմբռնում՝ վերագտնելու և ինքնության կոչի երանգներով: Այս է անվանի բանաստեղծուհու սթափեցնող խոսքը՝ պոեմի ձև ստացած: Եվ այս ամենը ինքնօրինակ բառերով և բառակապակցումներով, խոսքի ինքնաբուխ ձևերով, երկխոսության անօրինակ շեշտերով և հարցադրումներով:

Իսկ թեման պարզ է՝ ազգային գրկանք ու պատուհաս, այլ կերպ ասած՝ երկրային ու առանձին, իսկ բովանդակությունը՝ մարդկային խիղճ և ափսոսանք, այսինքն՝ երկնային և ընդհանուր: Բանաստեղծուհու սթափեցնող խոսքում հանդիպում են, կամ նույնն են, մարդկայինը՝ առանձին, աստվածայինը՝ ընդհանուր, մարդուն տրվածն ու մարդուց սպասվողը, որ այլևայլ ձևերով հաճախ խանգարվում է մինչև, հնարավոր է, աստվածայինն իմանալը:

Պոեմն ունի պատկերային մտածողության աներևակայելի օրինակներ: Նշենք դրանցից միայն մեկը. փլուզված շենքի բետոնի սալերի մեջ է մնացել մայրն իր չորս ամսական երեխայի հետ, հինգ օր գիրկ առած՝ ապրելու հույսով. և դա համեմատվում է տիրամոր և իր սուրբ գրկանոցի ռաֆայելյան պատկերի հետ. «Ասե՛ք, ուրիշ էլ որտե՞ղ եք տեսել / Նման տիրամայր, / Ո՞ր սուրբգրական շարադրանքի մեջ, / Ո՞ր Ռաֆայելի ձիրքով վրձինված: / Հինգ օրից ավել զնդանված էր նա / Բետոնե երկու սալի արանքում, / Խի՞ճ ու ապակու փշուրների մեջ, / Ու շուրջը՝ խավար, փոշեհունց խավար: / Կրծքին մանուկ կար, / Չորսը ամսական, մոր ձեռքերի մեջ սեղմված մանուկ, / Ու իրենց վրա պահ առ պահ իջնող բետոնասալի / Կարծր սարսափը» (էջ 27):

Այդ օրերի և այդ առիթով գրված լավագույն գործ է այս պոեմը հայ գրականության մեջ՝ առհասարակ: Այն, անպայման, ուրույն տեղ ունի առաջին հերթին բանաստեղծուհու գրական ժառանգության մեջ: Կապուտիկյանի չափածոն յուրօրինակ է նաև իր լեզվով, ոճական բնույթով: Կապուտիկյանը խոհական-հրապարակախոսական ոճի բանաստեղծուհի է, հայրենիքի և հայի հոգս ու հոգածությամբ մտահոգ:

Ստորև ներկայացնում ենք պոեմի լեզվական կողմը, որն, անշուշտ, պայման է խոսքի ինքնատիպության: Անդրադառնում ենք, մասնավորապես, նորակազմ բառերին, որոնք անպայման հարստացնում են հայերենի բառապաշարը: Հանդիպում են բառեր, որոնք չկան արդի հայերենի բացատրական ծավալուն բառարաններում. նկատի ունենք ակադեմիա-

կան քառահատոր բառարանը և Է. Աղայանի երկու գրքով լույս տեսած միհատորյակը¹⁰³:

Պոեմում գործածված, պայմանականորեն նորակազմ համարվող բառերը տալիս ենք բառագիտական աշխատանքներում ընդունված դասակարգումներով:

1. Բարդ բառեր՝ հոդակապով կամ առանց հոդակապի, որոնք, ըստ խոսքիմասային պատկանելության, բաժանվում են երկուսի տեսակի.

ա) Գոյական՝ *բեյրոնասալ, հաղթանվագ*: Օրինակ՝ «Ու իրենց վրա պահ առ պահ իջնող *բեյրոնասալի* / Կարծր սարսափը» (էջ 27): «Խաչատուր որդուս, / Սրերի շաչը սրերի պարո՛վ խլացնող որդուս, / *Հաղթանվա՜գը*» (էջ 20):

բ) Ածական՝ *ազերաաղվան, ժողովրդահյուս, ինքնամխիթար, մզկիթանման, միապրոփ, որբաբաժին, պողպատառող, սրբալեզու, սևաբոց, փոշեհունց* և այլն: Օրինակ՝ «Կեղծված որմերը իրար բերեցիք / Ու կառուցեցիք գիտական կոչվող մի ողջ համակարգ / Եվ համառում եք *ազերաաղվան* այդ փուչ կառույցը / Կալիգուլայի սիրած ձիու պես, / Գիտության կաճառ խցկել նենգորեն» (էջ 15)¹⁰⁴: «Մա՛յր Թերեզ, հիշենք, որ կարողանանք ապրե՛լ այսուհետ, / Այս աշխատավոր, գովաբանության արժան կնոջը՝ / Ասես թե ելած *ժողովրդահյուս* վիպերգությունից» (էջ 13): «Եվ իմ բազմաէջ հուշադարանից / Վերակոչելու միջեր, տեսիլքներ *ինքնամխիթար*, / Որ ոտքի վրա կանգնե՛լ կարենամ...» (էջ 8): «Որոնք փորձում են *մզկիթանման* ձեր այդ կառույցը / Քրիստոնեության մեռնոնով օծել» (էջ 15): «Առաջին անգամ դարերից ի վեր... / Մարդկության սիրտը բաբախեց այսպես ձույլ, *միապրոփ*» (էջ 24): «Հագիվ մի կաթիլ մնացած հույսից՝ / Մեր *որբաբաժին* հողից կտրեցին, էլի՛ կտրեցին / Ու շարտեցին երախն ուրիշի...» (էջ 10): «Որ մեր արանքում, մեր ու նրանց մեջ / Այս *պողպատառող* օձը սողոսկի» (էջ 17): «Այրեն մատյաններն իմ *սրբալեզու*՝ / Ի սկզբանե բանին հետամուտ» (էջ 3): «Միայն թե կուարի կարասի տեղակ՝ / Ավտոդողերն են *սևաբոց* այրվում» (էջ 12): «Հինգ օրից ավել զնդանված էր նա... / Ու շուրջը՝ խավար, *փոշեհունց* խավար» (էջ 27):

2. Ածանցավոր բառեր՝ տարբեր կարգի ածանցներով բաղադրված՝ *անեծքոյր, անցամաք, ռիսոյր, չորոյր, տևելիք* և այլն: Օրինակ՝ «Հո՞ճ դուրս են պողթկում, / *Ռիսոյր, անեծքոյր*, զայրագին բառե՛ր» (էջ 22): «Ու մեզ ներարկիր ցամաք աչքերիդ սերը *անցամաք*» (էջ 23): «Մեզ փոքրիկ, փոքրիկ խաչեր բաժանիր / Ու մեր ճաքճաք, *չորոյր* շուրթերին / Մեղմ

¹⁰³ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հհ. 1-4, Ե., 1969-1980: Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

¹⁰⁴ Բառը կազմված է *ազերի* (*Արդպատական* բառից արհեստականորեն հարմարեցված՝ *ազերպայկան*) և *աղվան* (Քոի ձախափնյակում ժամանակին ապրած մի ժողովուրդ) անունների բռնազբոսիկ միացումից՝ իբրև ածական անուն:

սովորեցրու աղոթել-ներել...» (էջ23): «Մա՛յր Թերեզ, ինչո՛վ, ինչպե՛ս խլացնենք / Հայ հողի և մեր սրտերի վրա/ Փայտյա ոտքերի դարեր *տնելիք* ոտնաձայները...» (էջ7):

3. Բարդաճանցավոր բառեր, հատկապես բայաճանցով բաղադրված՝ ածական և բայ, *կանխափորձել, մանրակերտային, շնչահեղձել, տասրայա* և այլն: Օրինակ՝ «Եվ ի՛նձ է տրված / Իմ տառապանքով և իմ հեծությամբ/ *Կանխափորձելու* հետագա բոլոր պատուհասների / Տարողությունը» (էջ 9): «Ու մեջը առել / Առանց դրա էլ *մանրակերտային* մեր այս տիրույթի / Կեսը համարյա» (էջ 5): «Նրա շուրթերից բառերը՝ իրար *շնչահեղձելով* / Հոժ դուրս են պողթկում» (էջ 22): «Մեր ներաշխարհում միայն *տասրայա* երկրաշարժը չէ, / Տասը երկրաշարժի ավե՛ր ր կա մեր մեջ» (էջ 10):

4. Գծիկով գրված բառեր, որ, իբրև հատվածական բաղադրության մի տեսակ, ունեն բառի ընդհանուր իմաստի, այսպես կոչված, երկկողմանի նշանակում, ընդ որում պոեմում ունեն լայն գործածություն, պատկանում են տարբեր խոսքի մասերի՝ գոյական, բայ, ածական և այլն. *աղոթել-ներել, աղոթել-հուսալ, գիծ-ստվեր, զոհ-նահատակ, խանդ-բամբասանք, մութ-լուս, ոխ-արելություն, պակսել-բարականալ, նշխար-արյուն, փորվել-պարվել-փակվել* և այլն: Օրինակ՝ «Ու մեր ճաքճած, չորոտ շուրթերին / Մեղմ սովորեցրու *աղոթել-ներել, աղոթել-հուսալ*» (էջ 23): «Այն Դանթեական դժոխքի հուպիտ *գիծ-ստվերները* / Գրքի էջերից ահա դուրս պրծել / Մարմին են առել...» (էջ 11): «Մի՛ վիրավորեք խղճահարությամբ, / Զի ընտրյալ եմ ես, / Եվ իմ վեստ գլխին լուսապսակ է *զոհ-նահատակի*» (էջ 9): «Ու խնայելու համար իսկ հիշենք.../Հարևան կանանց *խանդ-բամբասանքի* խայծը մշտական» (էջ 12): «Երեկ տղայի չարության համար դպրոց կանչեցին, / Այսօր *մութ-լուսից* քաղաքովը մեկ / Ավերակներից ավերակ վազում, / Անվերջ, բարձրաձայն մայրիկ է գոռում» (էջ 7): «Եվ ամեն մի պահ *ոխ-արելության*, անզոր քեների / Մառ մանրէներն են բազմանում այնտեղ...» (էջ 17): «Բավական չեղա՛վ անպատիժ հեղեք / Անվերջ հեղվելուց *պակսած-բարակած նշխար-արյունս*» (էջ14): «Գանձասա՛ր եմ ես, Գանձասարի վա՛նք, / Եվ իմ պատերը՝ հիմքից մինչև քիվ ու մինչև երկինք / Ինչպես կարծրացած մագաղաթի թերթ, / Տառ առ տառ *փորված-պարված-փակված են* / Հայոց գրերով» (էջ 15) և այլն:

5. Կան բառեր, որոնք հանդիպում են հիշյալ բառարաններում, սակայն առանց բնագրային վկայությունների: Մեր այս աշխատանքի բերումով պայմանականորեն դրանք դնում ենք այս պոեմի բնագրային վկայությամբ, ընդ որում այնքան ժամանակ, մինչև որ ավելի վաղ կիրառությամբ վկայություններ կբերվեն հայերենի բառապաշարին նվիրված այլ կարգի աշխատանքներում: Եվ դա անում ենք այն մտածողությամբ, որ ժամանակակից հայերենի բառապաշարի համալրման առումով նման քայլ է ընդհանուր բառապաշարի ամբողջացման և ժամանակային կարգա-

վորման ճանապարհին, որ շատ կարևոր է նոր գրական հայերենի բառամթերքի լիակատար շտեմարան ունենալու համար¹⁰⁵:

Այդ բառերը, կոնկրետ նկատառումով, մի քանի կարգի են:

ա) Երկու բառարաններն էլ ունեն, սակայն, ի տարբերություն հաջորդ երկուսի, առանց բնագրային վկայության. *մայրագույթ*, *պղղավոր* և այլն: Օրինակ՝ «-Մա՛յր Թերեզ, ավա՛ղ, մեր՝ մի օրվա մեջ ճերմակած գլխին / Ո՛չ լուսապսակ՝ վիրակապ է պետք, / Քնքշորեն փայլող *մայրագույթ* ձեռքեր» (էջ 9): «Խոր, ահասարսուռ մի վերք է բացվել... / Ու մեջը առել կյանքե՛ր, բյուր կյանքե՛ր, / Մանուկ, դեռատի, *պղղավոր* կյանքե՛ր...» (էջ 5):

բ) Լեզվի ինստիտուտի բառարանն ունի, սակայն անորոշ՝ ոչ ստույգ վկայությամբ (օրինակ՝ *դասագիրք*, *մամուլ* նշումով, բառարանի հեղինակների կազմած և այլն). Այդպիսի բառեր են՝ *բազմաէջ*, *դեղնանյութ*, *շիրմաթումբ*, *վրձինվել* և այլն: Օրինակ՝» Եվ իմ *բազմաէջ* հուշադարանից / Վերակոչելու միֆեր, տեսիլքներ ինքնամխիթար» (էջ 8): «Ե՛ս եմ հեքիմը, / Այս հողի պտղից, ծաղկից, խոտերից *դեղնանյութ* քամող, / Նախնյաց հավատով ցավը դարմանող, ծերուկ հեքիմը» (էջ 6) «Գարնան երազով քնած դաշտերում՝ ակոսների տեղ / Շիրմաթումբերն են շարվել կողք-կողքի» (էջ 8): «Ասե՛ք, ուրիշ էլ որտե՛ղ եք տեսել / Նման տիրամայր, / Ո՛ր սուրբգրական շարադրանքի մեջ, / Ո՛ր Ռաֆայելի ձիորով *վրձինված*» (էջ 27) և այլն:

գ) Ունի միայն Աղայանի բառարանը, սակայն դարձյալ առանց բնագրային վկայության. *բրտաբարո*, *նորաբեղ*, *ողբերգորեն* և այլն: Օրինակ՝ «Դուք, *բրտաբարո* անապատներից հորդած հորդաներ», / Բավական չեղա՛վ անպատիժ հեղեք (էջ 14): «Մայր Թերեզ, ասա՛, / Շեկլիկ, *նորաբեղ* այս զինվորները... / Ինչո՞ւ են այստեղ» (էջ 17): «Եվ ես՝ հնամյաս, / Ես՝ մասնակիցս այն հին շինության, / Որ Բաբելոնյան աշտարակ կոչվեց, / Ես *ողբերգորեն* հպարտ եմ իրոք, / Որ տեսա, ինչպես իմ հողի վրա հիմնաքար դրվեց / Մեծ, աննյութեղեն այն աշտարակին» (էջ 25) և այլն:

Բանաստեղծական խոսքի նման հորձանքում, բնական է, որ ստեղծվեին նոր բառեր, որոնց գիտական ուսումնասիրությունը երբեմն տալիս է «դիպվածային բառ» որակումը: Կարծում ենք, որ նման մոտեցումը ընդունելի է առհասարակ, սակայն բանաստեղծական խոսքի իրադրության առումով՝ թերևս առարկելի: Վերը բերված բառերը, իբրև հեղինակային նորաբանություն, միանգամայն տեղին են խոսքի արտահայտման մեջ:

¹⁰⁵ Տեսական այս հարցադրման մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Վ. Համբարձումյան, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեականը» պոեմի նորակազմ բառերի բառարան, Ե., 2016, էջ 3-8:

Կորստի և ափսոսանքի վերապրում, գեղարվեստական խոսքի սփոփիչ հնարք՝ արտահայտված հայտնի և նորակազմ բառերով: Եվ ի՞նչ է մնում՝ իբրև ոչ վերջին, այլ ընթացիկ սատարում. «Օգնի՛ր, Մա՛յր Թերեզ, որ մենք ամենքս էլ / Դուրս գանք մեզ վրա փլված խավարից / Ու վերագտնենք մեր հոգու լույսը, / Ու վերադառնանք մեր սուրբ սկզբին» (էջ 22): Սա է բանաստեղծուհու բուն մտահոգությունը՝ իր ժողովրդի անկոտրում հավատքի ու տոկունության համար ասված:

Անվանի բանաստեղծի «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմը, կարելի է ասել, ուրույն երևույթ է վերջին տասնամյակների հայ գրականության մեջ, այլև արդի հայերենի, մանավանդ վերջինիս բառապաշարի առումով:

Հայ ամեն մի գրող հայերենին ուժ տվող անհատականություն է, իսկ այդ ուժին այս կամ այն չափով տեղեկանալը, թեկուզ բառերի առնչությամբ, անպայման կարևոր է մեր լեզվի հետագա ընթացքի ճանապարհին:

С. В. Амбарцумян. О новых словах, применяемых в поэме С. Капутикяна “Диалог между мной и мной”. В статье дается полный анализ тех слов, которые впервые применяются в этой поэме, учитывая, что они не включены в толковые словари современного армянского языка. Приводятся следующие слова, так называемые условные новообразования: *բետոնաալ* «бетонная плита», *ինքնամխիթար* «утешиться», *շնչահեղծել* «задышаться», *որբաբաժին* «сиротский» и т.д.

S. V. Hambardzumyan, On the new words used in S. Kaputikyan's poem "Dialogue between me and me". The article gives a full analysis of those words that are first used in this poem, considering that they are not included in the explanatory dictionaries of the Modern Armenian language. The following words are cited, the so-called conditional neoplasms: *բետոնաալ* "concrete slab", *ինքնամխիթար* "to be comforted", *շնչահեղծել* "to suffocate", *որբաբաժին* "orphan", etc.

ԷԿՈԼԵԶԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶԻԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

20-րդ դարավերջը լեզվաբանության ուսումնասիրության բնագավառում նշանավորվեց որպես միջգիտակարգային ուսումնասիրության շրջան: Ի հայտ եկան լեզվաբանության և այլ գիտությունների միջև ընկած միջանկյալ բնագավառներ, որոնք հարստացրին լեզվաբանական ուսումնասիրությունները և՛ այլ բնագավառների տերմիններով, և՛ մեթոդներով, և՛ ուսումնասիրության նոր հայեցակարգերով ու սկզբունքներով:

Լեզվաբանական գիտակարգերին առաջին անգամ անդրադարձել է ամերիկացի լեզվաբան Դ. Թրեյջերը¹⁰⁶: Նա ոչ միայն առաջ քաշեց լեզվաբանական գիտակարգերի առանձնացման նոր սկզբունք, այլև հանդես եկավ նոր տերմինաբանությամբ: Լեզվի ուսումնասիրության ողջ բնագավառը նա բնորոշեց որպես *մակրոլեզվաբանություն*, իսկ դրա համար առանձնացրեց երեք դրսևորում՝ *նախալեզվաբանություն*, որն ուսումնասիրում է լեզվաբանության համար անհրաժեշտ ֆիզիկական և կենսաբանական տվյալները, *միկրոլեզվաբանություն*, որը բուն լեզվաբանությունն է, *մետալեզվաբանություն*, որն ուսումնասիրում է լեզվի և մշակույթի մյուս համակարգերի համապատասխանությունը: Հանդես գալով նոր տերմինաբանությամբ՝ Թրեյջերը ամենևին չէր պարտադրում դրանք, ավելին՝ կարծում էր, որ դրանք վերջնական չեն, և եթե գտնվեն ավելի հարմար տերմիններ, այս հարցը կվերանայվի: Չնայած դրան՝ *մակրոլեզվաբանություն* և *միկրոլեզվաբանություն* տերմինները լայն կիրառություն գտան:

Լեզվաբանության ուսումնասիրության արդի փուլում տերմինաբանական որոշ փոփոխություններ են կատարվել, սակայն երևույթը առանձնապես չի փոխվել: Առանձնացվում են մեծ և փոքր հարացույցներ¹⁰⁷: Առանձնացվում է *մարդակենտրոն հարացույցը* (*антропоцентрическая парадигма*)՝ որպես մեծ հարացույց, իսկ դրա մեջ համապատասխանաբար *նեոֆունկցիոնալ*, *լեզվամշակութաբանական*, *լեզվահասարակագիտական* հարացույցները: Հենց այս լեզվահասարակագիտական հարացույցում էլ դիտարկվում է *էկոլեզվաբանությունը*:

¹⁰⁶ St'eu G. L. Trager, The field of linguistics, "Studies of linguistics (Occasional papers 1)", Norman (Oklahoma), 1949:

¹⁰⁷ Е. С. Кубрякова, Эволюция лингвистических идей во второй половине XX века (опыт парадигмального анализа), "Язык и наука конца XX века", М., 1995, с. 155–166.

Մարդակենտրոն հարացույց

Նեոֆունկցիոնալ

Լեզվամշակութաբանական

Լեզվահասարակագիտական

Էկոլեզվաբանություն

Ինչպես նշել ենք մեր նախորդ հոդվածներից մեկում, 20-րդ դարավերջին ասպարեզ եկան պայմանականորեն նոր և բոլորովին նոր լեզվաբանական ուղղություններ¹⁰⁸: Այդ բոլորովին նոր ուղղությունների շարքը պետք է դասել նաև *էկոլեզվաբանությունը*: Իսկ ինչու՞ բոլորովին նոր: Արդյո՞ք էկոլեզվաբանությունը հանդես չի եկել ավելի վաղ շրջանում, կամ ո՞ր ուղղություններն են ընկած էկոլեզվաբանության զարգացման հիմքում:

Նշենք, որ *էկոլեզվաբանություն* տերմինը, ինչպես նաև դրան առնչվող մեկ այլ հասկացություն՝ *լեզվի էկոլոգիա*, առաջին անգամ գործածվել են շուրջ երեսուն տարի առաջ՝ 20-րդ դարի վերջին, Է. Հաուգենի «Լեզվի էկոլոգիա» աշխատության մեջ, որը նվիրված է լեզվի և շրջակա միջավայրի փոխհարաբերության ուսումնասիրությանը: Է. Հաուգենն առաջին անգամ լեզուն դիտարկում է որպես մեծ էկոհամակարգի մի մաս: Իսկ այդ միկրոհամակարգը բնորոշում է 3 հիմնական հատկանիշներով.

1. ֆիզիկական, քանի որ լեզվակիրները գոյություն ունեն միայն ֆիզիկական միջավայրում,

2. հոգեբանական, քանի որ լեզուները փոխադարձ կապի մեջ են լինում և փոխգործակցում են երկլեզու և բազմալեզու լեզվակիրների մտքում,

3. հասարակական, քանի որ լեզուն և հասարակությունը ևս շաղկապված են, բացի այդ՝ լեզվի հաղորդակցական գործառույթը հենց այդ հասարակության մեջ է դրսևորվում¹⁰⁹:

Չնայած դժվար չէ նկատել, որ նշված բոլոր փաստարկները կարելի է հանգեցնել այլ միջգիտակարգերի, ինչպես, օրինակ, մարդաբանական լեզվաբանության, հոգելեզվաբանության և հանրալեզվաբանության և այլն,

¹⁰⁸Մ. Ա. Սարգսյան, Լեզվաբանության տեսության զարգացման միտումները վերջին տասնամյակներում, «Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու նվիրված Վ. Ա. Քոսյանի ծննդյան 90-ամյակին», Ե., 2017, էջ 166-172:

¹⁰⁹ E. Haugen, The Ecology of Language, Stanford University Press, Redwood City, CA, 1972, p. 325:

սակայն պետք է նշել, որ է. Հաուզենի հենց այս դիտարկումն է հիմք դարձել էկոլեզվաբանության հետագա զարգացման համար: Դրանից հետո միայն էկոլեզվաբանությունը ձևավորվեց որպես առանձին միջգիտակարգ՝ հարակից բնագավառ էկոլոգիայի և լեզվաբանության միջև: 2000-ական թթ. արդեն սկսեցին ակտիվորեն զբաղվել էկոլեզվաբանական խնդիրներով, ինչպես նաև այս բնագավառը սկսեց սահմանազատվել հանրալեզվաբանությունից¹¹⁰:

Նշենք, որ ստեղծվել է այս բնագավառին վերաբերող հարցերով զբաղվող «էկոլեզվաբանության միջազգային խորհուրդ»¹¹¹, որն իր շուրջն է համախմբել շուրջ 600 հետազոտողների՝ տարբեր երկրներից: Բացի այդ՝ հետազոտողներին հասանելի է էկոլեզվաբանական հարթակը, որ ընդգրկում է կարևոր հոդվածներ՝ էկոլեզվաբանության բոլոր բնագավառների վերաբերյալ¹¹²:

Չնայած շուրջ 3 տասնյակ տարիների ուսումնասիրություններին և արդեն ուրվագծված ձեռքբերումներին՝ էկոլեզվաբանությունը դեռևս հստակ ձևավորված մեթոդաբանություն չունի, տեսական հիմքերը ևս ձևավորման փուլում են: Էկոլեզվաբանները նույնիսկ միասնական չեն այս նոր ուղղության բնորոշման և ըմբռնման հարցում: Այսպես, կարելի է առանձնացնել *տարակարծությունների առիթ դարձող հետևյալ խնդիրները*.

1. Դժվար է որոշել՝ սա գիտություն է, ուղղություն, բաժին, միջգիտակարգ, բնագավառ, տեսություն, թե հայեցակարգ: Պետք է նշել, որ լեզվաբանական գրականության մեջ այս բոլոր բնորոշումներն էլ հավասարապես կիրառվում են, և դեռևս հստակ չէ դրանց տարբերակումը:

2. Տարածայնություններ կան՝ կապված էկոլեզվաբանության ըմբռնման հետ: Այսպես, հետազոտողների մի խումբը հակված է էկոլեզվաբանությունը դիտարկել որպես լեզվի և շրջակա միջավայրի փոխազդեցությունն ուսումնասիրող բնագավառ: Մինչդեռ հետազոտողների մյուս մասը այն դիտարկում է որպես ավելի «մակերեսային» բնագավառ: Ըստ այդմ՝ ելնելով տարբեր հետազոտողների հայեցակարգերից՝ էկոլեզվաբանության մեջ առանձնացվում է երեք հիմնական ուղղություն՝ *Հաուզենյան ավանդույթ, բիոլեզվաբանական ավանդույթ և Հալիդյան ավանդույթ*¹¹³:

- *Հաուզենյան ավանդույթի* համաձայն՝ լեզուն դիտարկվում է որպես մեծ էկոհամակարգի մի մաս՝ մարդկային մտքի, հասարակության և շրջակա միջավայրի փոխազդեցության համատեքստում:

¹¹⁰ H.H. Couto, Ecological approaches in linguistics: a historical overview, Lang. Sci. 41 (Part A), 2014, p. 122-128.

¹¹¹ <http://ecolinguistics-association.org/>

¹¹² <https://www.bloomsbury.com/uk/ecolinguistics-reader-9780826481733/>

¹¹³ <http://www.sciencedirect.com/science/article/pii/S2215039015300229?via%3Dihub>

- *Քիլեզվաբանական ավանդույթը* էկոլեզվաբանության ավելի գործնական սահմանում է ներկայացնում՝ աշխարհի լեզուների բազմազանությունը դիտարկելով որպես մեծ էկոհամակարգ, իսկ փոքրամասնությունների լեզուների կորուստը համարելով էկոհամակարգի կենսաբազմազանության կորուստ:

- Ըստ *Հալիդյան ավանդույթի*՝ կարևորվում է լեզվի ուսումնասիրության գործառական սկզբունքը: Այս մոտեցման կողմնակիցները համոզված են, որ մարդկային լեզվի մարդակենտրոն բնույթը հակաէկոլոգիական գործողությունների պատճառ է դառնում: Ըստ այդմ՝ առաջարկում են էկոլեզվաբանական ուսումնասիրությունների հիմքում դնել քննադատական խոսույթի ուսումնասիրությունը, ինչպես նաև պահպանել լեզվի էկոկենտրոն բնույթը:

Այսպիսով՝ *ի՞նչ է էկոլեզվաբանությունը, որո՞նք են նրա ուսումնասիրության առարկան և նպատակը*: Ընդհանրացնելով էկոլեզվաբանական բոլոր ուղղությունների սկզբունքները՝ կարելի է նշել, որ էկոլեզվաբանությունը նորագույն ուղղություն է, որն ուսումնասիրում է լեզվի դերը էկոլոգիական և շրջակա միջավայրի խնդիրների հնարավոր լուծումների և զարգացման բնագավառում: Այլ կերպ ասած՝ էկոլեզվաբանությունը փորձում է ուսումնասիրել լեզուն էկոլոգիական-փիլիսոփայության տեսանկյունից՝ *լեզու-լեզու, մարդ-մարդ, մարդ-բնություն* համատեքստում: Ի տարբերություն լեզվաբանության այլ բնագավառների՝ էկոլեզվաբանությունը հիմնվում է էկոփիլիսոփայության սկզբունքների վրա: Ըստ այդմ՝ մերժվում է մարդկանց սահմանազատումը էկոհամակարգի մյուս մասերից¹¹⁴:

Էկոլեզվաբանության *ուսումնասիրության առարկան* լեզուն է՝ որպես մեծ էկոհամակարգի մի մաս: Ըստ այդմ՝ այն դիտարկվում է մարդկանց, կենդանիների և ֆիզիկական միջավայրի փոխազդեցության պայմաններում:

Էկոլեզվաբանության առաջնային *խնդիրն* է ներկայացնել և զարգացնել մի տեսություն, ըստ որի՝ մարդը ոչ միայն հասարակության մի մասն է, այլև մի հսկա էկոհամակարգի մաս, որից կախված է կյանքը: Էկոլեզվաբանության *նպատակն* է ցույց տալ, թե արդյո՞ք լեզվաբանությունը կարող է կիրառվել բնապահպանական առանցքային խնդիրները լուծելիս, ինչպես օրինակ՝ կլիմայական փոփոխության պատճառով կենսաբազմազանության կորուստն է, իսկ դրա հետևանքով էլ՝ լեզվի կորուստը:

Էկոլեզվաբանական ուսումնասիրությունները գործնականում երկու ուղղությամբ են ընթանում՝ *քննադատական խոսույթի ուսումնասիրության* և *լեզվի էկոլոգիայի քննության*¹¹⁵: Այսպես, ներկայացնենք դրանք՝ բերելով համապատասխան օրինակներ:

¹¹⁴<http://digitalcommons.ciis.edu/cgi/viewcontent.cgi?article=1122&context=ijs-transpersonalstudies>

¹¹⁵ <https://www.slideshare.net/satyapermadi/ecolinguistics-rev-2>

Քննադատական խոսույթի ուսումնասիրությունը շրջակա միջավայրին, էկոլոգիային առնչվող տեքստերի, ըստ այդմ՝ համապատասխան բառապաշարի լեզվական քննությունն է: Էկոխոսույթի վերլուծության դեպքում հաշվի են առնվում ոչ միայն մարդ-մարդ, այլև մարդ-կենդանի, մարդ-բնություն փոխհարաբերությունները: Այսպես, օրինակ, ներկայացնենք էկոխոսույթի մի քանի օրինակ.

Թերթում հանդիպող էկոխոսույթ. Որոշակի վայրում տեղի ունեցող բնապահպանական աղտոտման մասին տեղեկատվություն:

Գովազդում հանդիպող էկոխոսույթ. Գնե՛ք թղթե տոպրակներ:

Հասարակական-քաղաքական բնույթի էկոխոսույթ. Այսինչ կազմակերպությունը ծառատունկ է կազմակերպել կամ այգի է հիմնում և այլն:

Լեզվի էկոլոգիայի քննությունը ցանկացած լեզվի և այն միջավայրի փոխհարաբերության ուսումնասիրությունն է, որտեղ գործառույթ է տվյալ լեզուն: Լեզվի էկոլոգիան զբաղվում է այնպիսի հարցերի ուսումնասիրությամբ, ինչպիսիք են բնապահպանական խնդիրները, բնական աղետները, հասարակական կյանքի փոփոխությունները, լեզվական բազմազանության խնդիրը, ազգային փոքրամասնությունների լեզուների հարցը ևն:

Լեզվի էկոլոգիայի քննության օրինակ է բնական աղետի պատճառով լեզվի կորուստը: Այսպես, ինդոնեզացի հետազոտողները էկոլեզվաբանական ուսումնասիրությունների հիման վրա հայտնաբերեցին մի քանի գյուղ, որի բնակիչները բնական աղետների հետևանքով զաղթել էին այլ վայրեր: Բնական աղետը ոչ միայն գյուղի վերացման, այլև այդ գյուղում ապրող բնակչության լեզվի կորստի պատճառ էր դարձել:

Կամ մեկ այլ օրինակ, երբ հասարակության մեջ ամրապնդված կարծրատիպերը բառապաշարի փոփոխության պատճառ են դառնում: Այսպես, ժամանակակից բժշկության շնորհիվ հասարակության մեջ աստիճանաբար ամրապնդվում է մի կարծրատիպ, որի համաձայն՝ ավանդական բժշկությունը հավատ չի ներշնչում, հետևաբար ավանդական բժշկության մեջ կիրառվող շատ բուսանուններ դուրս են մղվում ակտիվ բառապաշարից:

Էկոլեզվաբանական նմանատիպ քննություններն այժմ սակավաթիվ են, սակայն հստակ ուղվագծվում է, որ էկոլեզվաբանությունը հատկապես էկոխոսույթի ուսումնասիրության ուղղությամբ է զարգանում: Այսպես, օրինակ, ուսումնասիրություններ են կատարվում, թե ինչպես է հասարակության կողմից պարտադրվող կարծրատիպը ազդում մարդու կյանքի որակի վրա: Օրինակ՝ ԶԼՄ-ները ողողված են բացասական նորություններով. գրեթե ամեն օր հանդիպում են «վթար, սպանություն, ինքնասպանություն» բառերը, մյուս կողմից՝ «լավ կյանք, հարստություն, հարստանալու միջոց» մատերիալիստական բնորոշումները, որոնք օրեցօր ամրա-

պնդվում են մարդկանց գիտակցության մեջ, մարդուն դարձնում են ագրեսիվ ու նյարդային: Այսպիսով՝ մատուցվող բառապաշարի միջոցով մարդուն պարտադրվում են կարծրատիպեր, նպատակներ, փոխանցվում են վախեր, որոնք բնականաբար ազդում են թե՛ մարդկանց, թե՛ կենդանիների ու շրջակա միջավայրի վրա:

Իբրև ամփոփում նշենք, որ էկոլեզվաբանությունը՝ որպես լեզվաբանական նորագույն ուղղություն, առաջ է քաշում լեզվի ուսումնասիրության նոր հայեցակարգ: Ըստ այդմ՝ լեզուն դիտարկվում է որպես մեծ էկոհամակարգի մի մաս: Լինելով շրջակա միջավայրի մի մասը՝ լեզվական ուսումնասիրությունները պետք է փորձեն նպաստել և ծառայել նաև բնապահպանական խնդիրների լուծմանը:

М. А. Саргсян. Эколингвистика как новейшее направление лингвистического развития. В конце 20-го века появились традиционно новые и абсолютно новые лингвистические направления. Эколингвистика - совершенно новое направление. Эколингвистика, как лингвистическая новейшая тенденция, вводит новую концепцию изучения языка. Соответственно, язык рассматривается как часть более крупной экосистемы. Будучи частью окружающей среды, лингвистические исследования также должны попытаться продвинуть и служить экологическим проблемам.

В этой статье мы представляем Эколингвистику как новейшую тенденцию в развитии лингвистики, в частности, что такое Эколингвистика, что является ее предметом изучения и целью.

M. A. Sargsyan. Ecolinguistics as the Newest Direction of Linguistic Development. At the end of the 20th century, conventionally new and completely new Linguistic directions have emerged. Ecolinguistics is utterly a new direction. Ecolinguistics, as the newest linguistic trend, raises a new concept of language study. Accordingly, the language is regarded as a part of the larger ecosystem. Being a part of the environment, linguistic studies should try to promote and serve environmental issues as well.

In this article, we present Ecolinguistics as the newest trend in linguistic development, in particular, what is Ecolinguistics, what is its subject and purpose.

ՀԱՅԱՏԱՌ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ֆ. Ա. ՀԱՎՈՐՅԱՆ

Հայերենը համացանցային լեզու դարձնելը և նրա հաջող գործածությունն ապահովելը ենթադրում են լեզվի հաղորդակցական գործառույթի տեղափոխում վիրտուալ հարթակ: Դա էլ իր հերթին նշանակում է հայախոս հանրության համար հայերենը դարձնել տեղեկատվություն ստանալու և հաղորդելու միջոց:

Նորագույն տեխնոլոգիաների առաջընթացով պայմանավորված՝ ստեղծվում են մարդկանց հաղորդակցումն ապահովող մեծաթիվ տեխնիկական միջոցներ, որոնք մի կողմից՝ դյուրացնում են այդ հաղորդակցումը (լեզվական պատենշների հաղթահարում), մյուս կողմից՝ առաջ են բերում լեզվի աղավաղում: Սակայն դա պայմանական բնույթ է կրում, որովհետև նույն հաջողությամբ կարելի է համացանցն օգտագործել իբրև անաղարտ և օրինակելի հայերեն տարածելու հզոր գործիք: Առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ՝ ինչպես է հնարավոր մարդկանց՝ ամենատարբեր բնույթի սխալներով լեզվագործածությունը համացանցում օրինակելի դարձնել, բայց դա հնարավոր է որոշակի ծրագրերի ստեղծման և նպատակային կիրառության դեպքում:

Տրամաբանական է, որ հայերենը համացանցային լեզու դարձնելու հետ կապված խնդիրները բավականին շատ են, առաջարկվող տեխնիկական լուծումները՝ նույնքան տարատեսակ: Այդ խնդիրները բազմազան են՝ հայատառ հայերեն գրելուց մինչև ժանրային տարբեր պատկանելություն ունեցող տեքստերի ավտոմատ սրբագրման և խմբագրման համակարգերի ստեղծում: Սույն հոդվածում անդրադառնում ենք միայն հայատառ հայերեն տեքստեր գրելու խնդրին՝ նկատի ունենալով տեխնիկական հնարավոր լուծումներ գտնելը:

Հայատառ հայերեն գրելը ապացուցման կարիք չունի ճիշտ այնպես, ինչպես բավական բարձրորակ, լեզվական քիչ սխալներ պարունակող տեքստեր կազմելը: Պարզելու համար, թե համացանցում հայերեն տեքստը ինչ տառատեսակներով է գրվում, իբրև քննության նյութ վերցրել ենք ամենատարածված սոցիալական կայքերի (facebook.com, twitter.com, vkontakte.ru, odnoklassniki.ru, my.mail.ru), էլեկտրոնային փոստերի (gmail.com, mail.ru, yahoo.com), հեռահաղորդակցություն ապահովող ծրագրերի (Skype, Viber) և նմանատիպ այլ կայքերի տեքստեր, որոնցով օգտատերերն իրականացնում են իրենց առօրյա հաղորդակցումը: Ընդ-

հանրացնելով կարող ենք փաստել, որ գրում են հիմնականում կամ լատինատառ, սակավ դեպքերում՝ ռուսատառ հայերեն կամ հայատառ հայերեն՝ ուղղագրության և կետադրության ոչ մի կանոնի գրեթե չհետևելով: Հայատառ գրվող տեքստերն էլ իրենց հերթին միատարր չեն. կարելի է հանդիպել արդի գրական լեզվով գրված տեքստերից մինչև դասական ուղղագրությամբ գրվածների. շատ քիչ դեպքերում կան նույնիսկ գրաբարով արված մեկնաբանություններ: Իհարկե, վերջին երկուսը մասնավոր դեպքեր են: Գրվածքի բովանդակային կողմի մասին խոսելիս հարկ է նկատել, որ գրավոր խոսքը նույնչափ անփույթ է և սխալներով լի, որքան բանավորը. գրում են այնպես, ինչպես մտածում են և արտահայտվում: Անշուշտ, կա նաև բավական գրագետ հայատառ հայերեն գրողների մի փոքր հատված:

Որպես կանոն՝ մարդիկ նախընտրում են հայերեն տեքստերը լատիներեն և ռուսերեն այբուբեններով գրել մի քանի հիմնական պատճառներով.

ա) Լատինատառ և ռուսատառ գրելը հայատառի համեմատությամբ ավելի հարմար է, քանի որ, ըստ նրանց, հայերեն այբուբենում տառերն ավելի շատ են, իսկ լատիններենում և ռուսերենում՝ քիչ: Այս դեպքում լրացուցիչ բարդություն չի առաջացնում այն հանգամանքը, որ հայերեն շնչեղ խուլ բաղաձայնները այլատառ գրելիս ստիպված են ներկայացնել մեկից ավելի տառերի կապակցություններով:

բ) Հայերեն տեքստերը այլատառ գրելը նախընտրելի է, քանզի գրված տեքստը կետադրելու կարիք չկա: Այս խմբի մարդիկ թեպետ տեքստերը հայատառ գրելուն դեմ չեն, բայց ներքին մտավախություն ունեն, որ հայատառ գրելիս ստիպված կլինեն կետադրել տեքստը: Մինչդեռ այլատառ գրելիս ստորակետով և նախադասության վերջում դրվող վերջակետով, հարցական և բացականչական նշաններով կարող են արտահայտել բանավոր խոսքում նախադասության ունեցած հնչերանգը:

գ) Չնայած քանակական շատությանը՝ հայատառ ստեղծաշարերը տեխնիկապես շատ թերի են: Դրանց մեծագույն մասը ներառում է միայն հայերեն և լատիներեն այբուբեններ, հետևաբար ռուսերեն կամ ֆրանսերեն տեքստ գրելու համար հարկավոր է նոր ստեղծաշար ներբեռնել: Բացի այդ՝ փոքրաթիվ են այն հայատառ ստեղծաշարերը, որոնցում կարելի է գտնել հայերենի բոլոր կետադրական նշանները (բացականչական նշանը, ապաթարցը բացակայում են գրեթե բոլոր ստեղծաշարերում): Կարծում ենք՝ հայատառ ստեղծաշարերի տեխնիկական ոչ բավարար մակարդակը առավելագույն չափով նպաստում է այլատառ հայերենով գրելուն: Հայերեն տեքստերում լեզվական սխալները ևս էապես պայմանավորված են վերոնշյալ հանգամանքով:

Մեր նպատակից դուրս է էլեկտրոնային հաղորդակցության մեջ հայերեն տեքստերի համակողմանի քննությունը, քանի որ կան համացանցային զանազան աղբյուրներում հանրության տարբեր խավերի գրավոր խոսքի քննությանը նվիրված սեմինար-քննարկումներ, հոդվածներ, նաև առանձին ուսումնասիրություն¹¹⁶:

Նկատի ունենալով այն փաստը, որ չենք կարող անխտիր բոլորից պահանջել լեզվի հանդեպ հոգատարության ու դրական մանրախնդրության նույն մակարդակը, առաջարկվում է պարզապես արհեստականորեն սահմաններ դնել էլեկտրոնային լեզվի առաջ: Այդ սահմանափակումները, ըստ Ս. Հովհաննիսյանի, պետք է մոտավորապես նմանվեն տարբեր լեզուներում որոշ բառերի վրա ժամանակին կիրառված արգելքներին կամ էլ լեզվական իրողությունների փոխանակումներին, քանի որ համացանցից օգտվողների մեծ մասը երբեք ինքնուրույն չի գիտակցի դրա անհրաժեշտությունը: Արգելումը գուցե սկզբում արհեստական լինի, բայց ժամանակի ընթացքում կարմատանա, կդառնա սովորական¹¹⁷:

Սահմանափակումներ մտցնելու կարևորությունն արդարացվում է այն հիմնավորմամբ, որ հայերենը էլեկտրոնային հաղորդակցման դաշտերում ճնշվում է օտար լեզուներից, և կարծես թե հասկանալի է՝ ինչու. համակարգիչը չի ստեղծվել Հայաստանում, համացանցը չի առաջացել Հայաստանում, առաջին չաթն ու սոցիալական կայքերը չեն ստեղծվել Հայաստանում: Բայց խնդիր կա. ժամանակի ընթացքում ստեղծվեցին և՛ հայկական չաթեր, և՛ հայկական սոցիալական կայքեր, մինչդեռ ամենաթողությունը լեզվում այդ տեղերում չի զիջում մյուս՝ ավելի վաղ ի հայտ եկած դաշտերում եղածին¹¹⁸:

Կարծում ենք՝ հայերենի առաջ ծառացած բազմաթիվ ու տարաբնույթ խնդիրների այսպիսի մակերեսային ընկալումները թույլ չեն տա գտնելու բովանդակային լուծումներ: Մեր խորին համոզմամբ՝ համացանցում որևէ լեզու այնքան չի աղավաղվում, որքան անգլերենը՝ այն երկրի պետական լեզուն, որտեղ նախագծվում և ստեղծվում են տեխնիկական բոլոր նորագույն միջոցները: Հետևաբար տրամաբանական չէ հայերենի աղավաղումները կամ «ճնշված» լինելը բացատրել համացանցի՝ Հայաստանում ստեղծված չլինելու հանգամանքով: Դրանից բացի՝ այլատառ գրելը սկիզբ է առել համացանցի ստեղծումից շատ առաջ. մարդիկ սկսեցին լատինատառ և ռուսատառ գրել խիստ սահմանափակ հնարավորություններ

¹¹⁶ Ս. Գ. Հովհաննիսյան, Հայերեն տեքստի էլեկտրոնային հաղորդակցման մեջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2013, 3, էջ 244:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Նույն տեղում:

ունեցող հեռախոսներով նամակներ գրելիս: Այդ ժամանակ լատինատառ և ռուսատառ գրելը այլընտրանք չուներ, որովհետև այդ հեռախոսների ստեղծարարները հայերեն տառեր չկային: Հետագայում, երբ հեռախոսներն ավելի կատարելագործվեցին, իսկ համակարգիչներից սկսեցին օգտվել անհամեմատ մեծ թվով մարդիկ, կրթվածության աստիճանով պայմանավորված՝ շատերն արդեն սկսեցին գրել հայատառ: Չենք կարծում, որ եթե համակարգիչները, հեռախոսները կամ սոցիալական կայքերը ստեղծվեին Հայաստանում, մարդիկ ավելի շատ հայատառ գրեին, որովհետև համակարգիչի ստեղծարարը կարելի է հեշտությամբ փոխել հայատառի, վաճառքում կան հայկական արտադրության ArmPhone սմարթֆոնները, կային հայկական սոցիալական կայքեր (Hayland.am, Yeresbook.am), բայց շատերը շարունակում են գրել լատինատառ:

Բնավ արդարացված չէ նաև մտածել, թե հնարավոր է որևէ կերպ արգելքներ մտցնել էլեկտրոնային լեզվում: Համացանցի միաժամանակ դրական և բացասական հատկանիշներից մեկը անվերահսկելիությունն է. նույնիսկ տեսականորեն հնարավոր չէ պատկերացնել, թե ում կողմից և ինչ միջոցներով է հնարավոր արգելել օգտատերերին գրավոր խոսքում սխալներ թույլ չտալ, իսկ սխալվողներին՝ պատժել: Սա այն դեպքում, երբ նույնիսկ պետական վերահսկողության տակ գտնվող հեռուստաալիքներում քիչ չեն լեզվական սխալները:

Այս համատեքստում տրամաբանական չէ ակնկալել, թե մարդկանց ինքնագիտակցությունը երբևէ կարող է այն աստիճան բարձրանալ, որ նրանք գիտակցաբար հրաժարվեն հայերեն տեքստերը այլատառ գրելուց: Հետևաբար այս խնդրի համար պետք է տեխնիկական որևէ լուծում գտնել:

Ինչպես հայտնի է, մարդիկ բանավոր և գրավոր կերպով հաղորդակցվում են առավելապես նորագույն սերնդի իրենց բջջային հեռախոսներով, որոնք ունեն բազմագործառույթ ստեղծարարներ: Կան գրեթե բոլոր լեզուների համար ստեղծված տարբեր այբուբեններ ներառող մեծաթիվ ստեղծարարներ: Եղածից բացի՝ հեշտությամբ կարելի է ներբեռնել նաև նորերը, որոնցով, ըստ օգտվողի, տեքստ հավաքելն ավելի հեշտ է: Քիչ չեն նաև հայատառ ստեղծարարները: Օրինակ՝ Android օպերացիոն համակարգով աշխատող հեռախոսների համար ստեղծվել են մեկ տասնյակից ավելի հայատառ ստեղծարարներ: Չնայած քանակական շատությանը՝ դրանք հիմնականում կատարում են նույն գործառույթները: Բոլորն էլ առավելապես բաղկացած են հայերեն, անգլերեն և ռուսերեն այբուբեններից և ունեն շատ օգտակար հնարավորություն: Ցանկացած դեպքում հայատառ, ռուսատառ կամ լատինատառ հայերենով մի քանի տառ հավաքելիս ստեղծարարի վերնամասում հայտնվում են ամբողջական բառի հնարավոր մի քանի տարբերակները: Սա զգալիորեն հեշտացնում է տեքստ հավաքելը, որովհետև դրանով կարելի է ժամանակ խնայել և չգրել

բառի մնացած մասը: Այսպես՝ եթե ստեղնաշարի վրա գրենք *աշխ* տառերը, կհայտնվեն *աշխ* տառակապակցությամբ սկսվող մեծաթիվ բառեր, ինչպես՝ *աշխեպ, աշխարհ, աշխատել, աշխատող, աշխատանք, աշխարհիկ* և տասնյակ այլ բառեր:

Կարծում ենք՝ հարկավոր է մեկ քայլ առաջ գնալ՝ փոխելով հայալեզու ստեղնաշարերը և դրանք օժտելով նոր գործառույթներով: Այդ փոփոխությունների մի եղանակն էլ կարող է լինել այն, որ ամեն անգամ լատինատառ ցանկացած բառի առաջին մի քանի տառը հավաքելիս ստեղնաշարի վերնամասում հայտնվի դրա հայատառ տարբերակը՝ ճիշտ ուղղագրությամբ: Այս կերպ լատինատառ «chishta», «asuma», «uzuma», «xosuma» բառերը հավաքելիս կպատկերվեն «Ճիշտ է», «Ասում է», «Ուզում է», «Խոսում է» տարբերակները: Մի քանի տառ հավաքելիս կարելի է գտնել ցանկացած բառի հայերեն ճիշտ ուղղագրությամբ տարբերակը և այն ուղարկել:

Առհասարակ լեզվական ցանկացած խնդրի տեխնիկական լուծումը գտնելու համար ամենից առաջ պետք է հստակ գիտակցել, թե ինչ չափով է հնարավոր դա իրագործել: Այս դեպքում էլ գուցե առաջին հայացքից կասկածելի թվա նման բազմագործառույթ ստեղնաշար ստեղծելու հնարավորությունը, սակայն պետք է նշել, որ դա ոչ միայն հնարավոր է անել, այլև արդեն իսկ լուրջ քայլեր են ձեռնարկվում նման ստեղնաշարի ստեղծման ուղղությամբ: Վերջերս «Մոբոս» ընկերության կողմից ներկայացվեց հայկական արտադրության «KitKeys Armenian» ստեղնաշարը: Այն բազմալեզու ստեղնաշար է, որով տրանսլիտի օգնությամբ լատիներեն և ռուսերեն տառերով տեքստը փոխարկվում է հայատառի: Հավելվածը մտապահում է օգտագործված բառապաշարը, վերարտադրում՝ կախված բովանդակությունից, նաև առաջարկում է բառեր՝ կանխագուշակելով առավել հավանական հաջորդ բառը և դրանք ցուցադրում ստեղնաշարի վերնամասում¹¹⁹: Նախապես հեղինակները նպատակ են ունեցել ստեղծելու հայատառ հավելված, սակայն շարունակելու են գրել լատինատառ կամ ռուսատառ՝ ստեղծելով այնպիսի ստեղնաշար, որով տեքստը ինքնին դառնա հայատառ: Չնայած ունեցած հաջողությանը (ներբեռնումը ավելի քան հինգ հազար անգամ)՝ հավելվածը հասանելի է միայն iOS (iPHONE, iPAD) օպերացիոն համակարգով աշխատող սարքերի համար: Առաջիկայում նախատեսվում է հավելվածը հասանելի դարձնել նաև Google Play-ի, MAC-ի և Windows-ի համար¹²⁰:

Գնահատելի է, իհարկե, որ ծրագրավորողները ևս այսչափ հետաքրքրված են հայատառ հայերեն գրելու խնդրի լուծմամբ, սակայն կարծում

¹¹⁹ Տե՛ս www.hetq.am:

¹²⁰ Տե՛ս www.hetq.am:

ենք, որ այսպիսի ստեղնաշարերի լեզվական ռեսուրսների ապահովումը հնարավոր է միայն լեզվաբանների համագործակցությամբ: Ակնհայտ է, որ այս ստեղնաշարերի միջոցով կարելի է միանգամից լուծել մի քանի հարց: Մի կողմից՝ համացանցում հայատառը կփոխարինի այլատառ հայերենին, մյուս կողմից՝ զգալիորեն կբարձրանա էլեկտրոնային տեքստերի լեզվական որակը, հատկապես եթե այդ ստեղնաշարերի հիմքում ընկած լինեն առավել բարդ այնպիսի համակարգեր, որոնք մեքենական եղանակով կառաջարկեն ուղղագրական և քերականական սխալների ճիշտ տարբերակները:

Խոսակցական լեզվի թելադրանքով է փոխվում գրական լեզուն, իսկ այս դեպքում գրական լեզուն կնպաստի խոսակցական լեզվի՝ հնարավորինս գրականին մերձենալուն: Ի վերջո, անկախ իրենց գիտելիքներից և լեզվական պատրաստվածության աստիճանից, բոլորն էլ ցանկանում են, որ իրենց գրավոր խոսքը հնարավորինս անսխալ և գրագետ լինի: Այս ստեղնաշարերը այդ հնարավորությունը կընձեռեն յուրաքանչյուրին: Ավելին՝ փոխարկվող այդ ստեղնաշարերը կարող են առավել հաջողությամբ ծառայել նաև հեռահար այնպիսի ծրագրերի իրականացմանը, ինչպիսիք են արևելահայերեն ուղղագրությամբ գրված բառերի մեքենական փոխարկումը դասական ուղղագրությամբ գրված տարբերակների և հակառակը:

Տեքստի լեզվաբանության ներկայացուցիչների խորագույն համոզմամբ էլեկտրոնային տեքստերը պետք է լինեն ոչ թե համակարգչային լեզվաբանության, այլ տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկա: Այդ ընթացքում համակարգչային լեզվաբանության մասնագետները նոր ծրագրեր են ստեղծել ինչպես տեքստերի համակողմանի քննության, անպես էլ տեքստերի հետ կապված տեսական խնդիրներին կիրառական լուծումներ տալու համար:

Համակարգչային լեզվաբանության մեջ կիրառվող հետազոտական մեթոդները կարող են վերափոխել նաև արդի հայ լեզվաբանությունը՝ բացելով զարգացման լայն հեռանկարներ, իսկ դրա առաջարկած կիրառական-տեխնիկական լուծումները կարող են օգնել հայագիտության արդի մարտահրավերներին դիմակայելու հարցում:

Փ. Ա. Акопян. Проблемы армянской коммуникации в Интернете.

Статья посвящена превращению армянского языка в веб-общение. Текущее состояние использования армянского языка рассматривается в Интернете, особое внимание уделяется тому, почему армянские тексты написаны на латинском и русском алфавите. Сделан вывод о том, что армянские клавиатуры неполны, так как содержат ограниченное количество алфавитов. Не все знаки препинания также включены в эти клавиатуры. Предлагается создать более полную и конвертируемую

клавиатуру, которая будет включать не только все буквы армянского алфавита и знаки препинания, но также должна автоматически конвертировать армянский текст с латинскими и русскими буквами на армянский текст.

F. A. Hakobyan. Armenian-letter communication problems on the Internet. The article is dedicated to making Armenian a language of web communication. The current state of the Armenian language usage is examined on the Internet, a special attention is paid to the reason why Armenian texts are written in Latin and Russian letters. It's concluded that Armenian keyboards are incomplete as they contain a limited number of alphabets. Not all punctuation marks are included in those keyboards as well. It is suggested to create a more complete and convertible keyboard which will not only include all the letters of the Armenian alphabet and punctuation marks but also is supposed to convert automatically the Armenian text with Latin and Russian letters to Armenian-latter text.

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ՏՈՒՆ, ՕՋԱԽ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՋՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՆԱԽԱԳԾԻ ՄԻՋՈՑՈՎ**

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Յ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

XX դարի 80-90-ականներին կորպուսային մեթոդների ստեղծմանը և դրանց կիրառմանը մեծապես նպաստեց անգլերենի բառագիտությունը, որը պահանջում էր առավել մեծ կորպուսների առկայություն, որտեղ իրենց տեղը կգտնեին նաև հազվադեպ կիրառություն ունեցող բառերն ու արտահայտությունները: Այդպիսինը դարձավ *Sketch Engine*¹²¹ էլեկտրոնային նախագիծը:

Sketch Engine-ի գործառության հիմքում ընկած է կոնկրետ լեզվի արդեն իսկ գոյություն ունեցող որևէ կորպուս՝ լեզվական պիտակավորման համապատասխան մակարդակով: Այն նախատեսված է նրանց համար, ովքեր հետաքրքրված են բառերի շարահյուսական «վարքով»: *Sketch Engine*-ը կորպուսային որոնման էլեկտրոնային այնպիսի համակարգ է, որը ներկայացնում է բառերի ինչպես քերականական, այնպես էլ կապակցելիական «վարքը»: Անդրադառնալով *Sketch Engine*-ի բովանդակային հատկանիշներին՝ պետք է նշել, որ այս էլեկտրոնային նախագիծն առանձնանում է իր հետազոտական մի շարք հնարավորություններով, ինչպիսիք են՝ բառերի համատեքստային դիտարկում, բառերի կիրառության ուսումնասիրություն, բառերի համեմատում և զուգադրում, սեփական կորպուսի ստեղծում և օգտագործում, անմիջապես էլեկտրոնային ցանցից կենտրոնացված կորպուսի ստեղծում, բառային ցանկերի դուրսբերում, հանգուցային բառերի որոնում, ուսումնասիրվող կորպուսների համեմատում և զուգադրում, ուսումնասիրվող կորպուսներում որոնման զուգահեռ իրականացում, ինչպես նաև կոնկրետ բառի գանձաբառարանի ներկայացում¹²²:

Սույն հոդվածում դիտարկվում է *Sketch Engine*-ի՝ կոնկրետ բառի գանձաբառարանի ներկայացման գործառույթը՝ *house* և *home*, *casa* և *hogar* գոյականների լեզվաճանաչողական հատկանիշների վերհանման և զուգադրման նպատակով: *House* և *home* հասկացությունների վերլու-

¹²¹ <https://the.sketchengine.co.uk>

¹²² A. Kilgariff, V. Baisa, J. Busta, M. Jakubicek, The Sketch Engine: ten years on, Springer Berlin Heidelberg, Lexicography ASIALEX, 2014, p. 7–36:

ծությունն իրականանում է *enTenTen [2012]* կորպուսի օգնությամբ՝ ներկայացված 11,191,860,036 բառանյութով, իսկ *casa* և *hogar* գոյականներինը՝ *esTenTen11 (European, Freeling, Lempos)* կորպուսի միջոցով՝ 2,103,770,763 բառանյութով:

Նշենք, որ *TenTen*-ը ցանցային կորպուսների նոր սերունդն է, որը ներկայացնում է տասը և ավելի բիլիոն բառանյութ պարունակող կորպուսներ: *Sketch Engine* էլեկտրոնային նախագծում այս սերնդի կորպուսներով են ներկայացված այնպիսի լեզուներ, ինչպիսիք են չինարենը, գերմաներենը, պորտուգալերենը, արաբերենը, չեխերենը, ճապոներենը, ֆրանսերենը, ռուսերենը, իտալերենը և այլն:

Sketch Engine-ում կոնկրետ հասկացության գանձաբառարանով ներկայացվում են բոլոր այն բառերը, որոնք ունեն հիմնականում նույն կապակցելիությունը, ինչ ուսումնասիրվող միավորը, այսինքն հանդես են գալիս նմանատիպ կապակցելիական համատեքստերում:

Այսինքն, *Sketch Engine*-ը գործում է հետևյալ բանաձով. եթե երկու բառային միավոր կապակցվում են միևնույն բառերի հետ, ապա որոնման արդյունքում դրանք անխուսափելիորեն կհայտնվեն միմյանց գանձաբառարանում:

Ստորև ներկայացված են *house* և *home* գոյականների գանձաբառարանների ամենաբարձր հաճախականություն ունեցող միավորները:

Աղյուսակ 1

HOME	Միավորների հաշիվ	HOUSE	Միավորների հաշիվ
<u>house</u>	0.639	<u>home</u>	0.639
<u>place</u>	0.46	<u>building</u>	0.527
<u>property</u>	0.455	<u>room</u>	0.504
<u>building</u>	0.442	<u>property</u>	0.455
<u>room</u>	0.437	<u>place</u>	0.452
<u>area</u>	0.434	<u>car</u>	0.436
<u>car</u>	0.426	<u>area</u>	0.433

<u>business</u>	0.422	<u>office</u>	0.414
<u>'s</u> ¹²³	0.412	<u>city</u>	0.414
<u>school</u>	0.399	<u>'s</u>	0.393
<u>life</u>	0.392	<u>store</u>	0.391
<u>family</u>	0.39	<u>hotel</u>	0.385
<u>service</u>	0.39	<u>space</u>	0.383
<u>site</u>	0.387	<u>business</u>	0.374
<u>office</u>	0.385	<u>school</u>	0.372
<u>work</u>	0.385	<u>town</u>	0.371
<u>city</u>	0.383	<u>shop</u>	0.37
<u>time</u>	0.381	<u>apartment</u>	0.368
<u>company</u>	0.379	<u>site</u>	0.365
<u>system</u>	0.365	<u>location</u>	0.359

Ինչպես և կարելի էր ակնկալել, *house* և *home* հասկացությունների գանձաբառարանում առաջին տեղն են զբաղեցնում *home* և *house* բառերը համապատասխանաբար: Յուրաքանչյուրի դեպքում ներկայացված 20 բառերից 11-ը համընկնում են [տե՛ս Աղյուսակ 2]: Համընկնող բառերի առավել խորքային դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք, բացառությամբ մեկի՝ *'s*-ի, կարծես թե, [[HOUSE]/[HOME]] ընդհանուր ֆրեյմի ներսում ստեղծում են մարդու կյանքի ընդհանրացված պատկերը:


	Համընկնումներ	HOME	HOUSE
		Միավորների հաշիվ	
	<u>place</u>	0.46	0.452
	<u>property</u>	0.455	0.455

¹²³ *Sketch Engine*-ում գոյականների սեռական հոլովի վերջավորությունը՝ *'s*, առանձնանում է որպես բառային միավոր, ուստի և ներկայացված է ուսումնասիրվող գոյականների գանձաբառարանում:

	<u>building</u>	0.442	0.527
	<u>area</u>	0.434	0.433
	<u>car</u>	0.426	0.436
	<u>business</u>	0.422	0.374
	<u>'s</u>	0.412	0.393
	<u>school</u>	0.399	0.372
	<u>site</u>	0.387	0.365
0	<u>office</u>	0.385	0.414
1	<u>city</u>	0.383	0.414

Աղյուսակ 2

Եթե [[HOUSE]/ [HOME]] ֆրեյմի բաղադրիչները փորձենք առանձնացնել ընդհանուրից կոնկրետ սկզբունքով, ապա կձևավորվի նման պատկեր՝



Արդյունքը, կարծես թե, ներկայացնում է մարդու կյանքի տարբեր փուլերը՝ ուսում, աշխատանք, գործ¹²⁴: Հետաքրքիր է [[HOUSE]/[HOME]] ֆրեյմի ներսում [family] բաղադրիչի իսպառ բացակայությունը, և փոխարենը *car* հասկացության առանձնացումը՝ որպես մարդկային կյանքը խորհրդանշող տվյալ ֆրեյմի վերջնական բաղադրիչ-արդյունք:

¹²⁴Ներկայացված պատկերում որոշ բաղադրիչների դեպքում հնարավոր է երկակի մեկնաբանություն [տե՛ս հակադիր սլաքաձև նշանները], և դժվար է միանշանակ ասել, թե դրանցից որ մեկն է զբաղեցնում մարդկային կյանքի փուլերը խորհրդանշող պատկերի կոնկրետ նախորդող թե հաջորդող հատվածը:

Գուցե սա խոսում է ամերիկյան մշակույթում մեքենայի կենսական անհրաժեշտության և կարևորության մասին, չէ՞ որ 20-րդ դարում ավտոմեքենան դարձավ ազատության և լիակատարության ամերիկյան երազանքի հիմնական կրողը: Այս առումով Չ. Սանֆորդը մեջբերում է պրոֆեսոր Լ. Բրայանթի արտահայտած այն միտքը, որ եթե ակադեմիական ուսումնասիրություններում ավտոմեքենային տրվեր նույնքան տեղ, որքան դրա կարևորությունն է ամերիկյան կյանքում, ապա այն կգրադեցներ գրականության մոտ 40%-ը: Լ. Բրայանթը նույնիսկ կեսկատակ այնպիսի դիտարկում է արել, թե փողն ու ավտոմեքենան ավելի բարձր վարկանիշ ունեն ամերիկյան արժեքային համակարգում, քան կանայք¹²⁵:

House և *home* հասկացությունների գանձաբառարանների առանձին-առանձին դիտարկումը ևս ներկայացնում է հետաքրքիր արդյունքներ: *Home* հասկացության գանձաբառարանում արդեն իսկ հայտնվում է *family* բառային միավորը: Եթե [*HOME*] ֆրեյմի բաղադրիչները ներկայացնենք թեմատիկ խմբերի տեսքով, ապա պատկերը հետևյալն է՝ ընդհանուր բնակավայր¹²⁶ – *place, area, site, city*, կոնկրետ բնակավայր- *property*¹²⁷, *building, house, room*, սոցիալ-հասարակական երևույթներ/ հաստատություններ – *school, office, company, work, system, service, business*, նյութական երևույթներ/արժեքներ- *car*, ընտանեկան երևույթներ/արժեքներ- *family*, կենսական երևույթներ/արժեքներ- *time, life*:

Եթե նմանատիպ վերլուծություն իրականացվի նաև *house* հասկացության գանձաբառարանի համար, ապա կունենանք նմանատիպ դասակարգում՝ որոշակի բաղադրիչների տարբերությամբ՝

ընդհանուր բնակավայր – *place, area, space, site, location, city, town*, կոնկրետ բնակավայր- *property, building, home, apartment, room*, սոցիալ-հասարակական երևույթներ/հաստատություններ- *office, store, hotel, business, school, shop*, նյութական երևույթներ/արժեքներ- *car*, ընտանեկան երևույթներ/արժեքներ- *X* (առկա չէ), կենսական երևույթներ/արժեքներ- *X* (առկա չէ):

Ինչպես տեսնում ենք, *ընտանեկան և կենսական երևույթներ/արժեքներ* թեմատիկ խմբերը *house* հասկացության դեպքում բացակայում են,

¹²⁵ Ch. Sanford, Woman's place in American car culture, "The automobile and American culture", (Eds.) Lewis D. L. and Goldstein L., 1980, p. 137–152.

¹²⁶ «Ընդհանուր բնակավայր» դասակարգման մեջ դիտարկվել են այն գոյականները, որոնք նշանակում են *բնակավայր* լայն իմաստով՝ առանց մարդու կողմից արհեստականորեն իրականացվող որևէ տեղային սահմանափակման, այսինքն՝^a այստեղ դուրս է մնում բնակավայրի՝ որպես «չորս պատի» գաղափարը:

¹²⁷ *Property* գոյականը կարելի է դիտարկել ինչպես *ընդհանուր*, այնպես էլ *կոնկրետ* բնակավայրեր խմբերում՝ հիմք ընդունելով տվյալ գոյականի *land and buildings* իմաստը:


փոխարենը ավելանում են (թավ նշված գոյականները) *հասարակական այնպիսի հաստատություններ*, ինչպիսիք են *store, shop, hotel*, ինչպես նաև առավել ընդհանուր և կոնկրետ բնակավայրեր՝ *space, location, town, apartment*՝ առավել պայմանավորված տվյալ հասկացության բազմիմաստությամբ:

Նույնատիպ դիտարկում իրականացվել է նաև իսպաներենի **casa** և *hogar* հասկացությունների գանձաբառարանների դուրսբերմամբ: Երկուսի դեպքում կրկին վեր են հանվել 20 ամենաբարձր հաճախականությունն ունեցող միավորները և կատարվել է դրանց զուգադրական վերլուծություն [տե՛ս Աղյուսակ 3]:

CASA		Միավորների հաշիվ
<u>ciudad</u>		0.546
<u>vivienda</u>		0.514
<u>edificio</u>		0.508
<u>do</u>		0.496
<u>centro</u>		0.496
HOGAR	Միավորների հաշիվ	0.492
<u>vivienda</u>	0.393	
<u>familia</u>	0.362	
<u>casa</u>	0.358	
<u>población</u>	0.345	
<u>cocina</u>	0.321	
<u>ciudadano</u>	0.316	
<u>edificio</u>	0.314	
<u>ciudad</u>	0.312	
<u>economía</u>	0.307	
<u>centro</u>	0.306	

<u>territorio</u>	0.306	
<u>vida</u>	0.305	
<u>sociedad</u>	0.305	
<u>empresa</u>	0.303	
<u>residencia</u>	0.303	
<u>niño</u>	0.303	
<u>pueblo</u>	0.301	
<u>persona</u>	0.3	
<u>mujer</u>	0.3	
<u>habitación</u>	0.299	
<u>zona</u>		
<u>familia</u>	0.485	
<u>escuela</u>	0.475	
<u>plaza</u>	0.475	
<u>calle</u>	0.474	
<u>iglesia</u>	0.471	
<u>empresa</u>	0.469	
<u>obra</u>	0.466	
<u>sala</u>	0.456	
<u>pueblo</u>	0.456	
<u>parte</u>	0.452	
<u>equipo</u>	0.452	
<u>grupo</u>	0.449	
<u>compañía</u>	0.448	
<u>día</u>	0.443	

Աղյուսակ 3



Casa և *hogar* հասկացությունների գանձաբառարաններում, ի տարբերություն անգլերենի 11 համընկնումների, համընկնում դիտարկվում է միայն 6 բառերի համար՝ *ciudad*, *vivienda*, *edificio*, *centro*, *familia*, *empresa*, որոնք ներկայացնում են մարդու կյանքի պատկերն առավել ընդհանրացված կերպով, քան անգլերենում՝

[[CASA]/[HOGAR]] ֆրեյմը սկսվում է [*vivienda*] բաղադրիչով, որը կարծես թե խորհրդանշում է կյանքի սկիզբը, և ավարտվում [*familia*] բաղադրիչով՝ որպես կյանքի նպատակ-արդյունք, իսկ այս երկու բաղադրիչների միջև ընկած են կյանքի՝ աշխատանքային փուլը խորհրդանշող բաղադրիչները:

Նշենք, որ իսպանական մշակույթում մեծ է ընտանիքի դերը՝ որպես անձի ինքնության և կյանքի դժվարություններից պաշտպանվելու միջոց: Լեզվում ստեղծվել է նույնիսկ *familismo* եզրը՝ նկարագրելու իսպանախոս հասարակության հավաքական գերագույն անձնվիրությունն ընտանիքի հանդեպ: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի վարքն ու որոշումը իրականացվում է՝ ելնելով ողջ ընտանիքի շահերից և գոհացնելու նկատառումներից¹²⁸:

Ինչպես տեսնում ենք, ամերիկյան և իսպանական [[HOUSE/HOME]] և [[CASA]/[HOGAR]] ֆրեյմերի պատկերները բավականին տարբերվում են՝ ունենալով միայն առավել նյութական արժեք ներկայացնող 3 ընդհանուր

¹²⁸ M. Carteret, Cultural values of latino patients and families, “*Latino Cultures*”, 2011. <http://www.dimensionsofculture.com/2011/03/cultural-values-of-latino-patients-and-families/>, 15.02.2015.

բաղադրիչ՝ *city, ciudad*, (քաղաք), *building, edificio* (շինություն), *business, empresa* (գործ):

Ինչ վերաբերում է թեմատիկ խմբերի տարանջատմանը, ապա իսպաներենի *casa* հասկացության գանձաբառարանի վերլուծությամբ առանձնացվում են հետևյալ խմբերը՝ ընդհանուր բնակավայր– *zona* (շրջան), *plaza* (հրապարակ), *ciudad* (քաղաք), *calle* (փողոց), *parte* (հատված, շրջան), *pueblo* (գյուղ), *centro* (կենտրոն), *vivienda* (բնակավայր), կոնկրետ բնակավայր– *edificio* (շինություն), *sala* (սենյակ), սոցիալ-հասարակական երևույթներ / հաստատություններ– *escuela* (դպրոց), *iglesia* (եկեղեցի), *obra* (գործ), *compañía* (ընկերակցություն), *grupo* (խումբ), *equipo* (թիմ), *empresa* (բիզնես, հիմնարկություն), նյութական երևույթներ/արժեքներ– *X* (առկա չէ), ընտանեկան երևույթներ/արժեքներ– *familia* (ընտանիք), կենսական երևույթներ/արժեքներ– *día* (օր):

Hogar հասկացության դեպքում ձևավորվում են հետևյալ թեմատիկ խմբերը՝

ընդհանուր բնակավայր– *centro* (կենտրոն), *territorio* (տարածք), *ciudad* (քաղաք), *pueblo* (գյուղ), *vivienda* (բնակավայր), կոնկրետ բնակավայր– *casa* (տուն), *edificio* (շինություն), *residencia* (կացարան), *habitación* (սենյակ), սոցիալ-հասարակական երևույթներ/հաստատություններ–*sociedad* (հասարակություն), *economía* (տնտեսություն), *ciudadano* (քաղաքացի), *población* (բնակչություն), *empresa* (բիզնես, հիմնարկություն), նյութական երևույթներ/արժեքներ– *X* (առկա չէ), ընտանեկան երևույթներ/արժեքներ– *familia* (ընտանիք), *cocina* (խոհանոց), *persona* (մարդ), *mujer* (կին), *niño* (երեխա), կենսական երևույթներ/արժեքներ– *vida* (կյանք):

Հետաքրքրական է, որ *casa* հասկացության դեպքում ներկայացված չէ *hogar* հասկացությունը, այսինքն՝ իսպաներենի [CASA] ֆրեյմն առանձին չի ներառում [hogar] բաղադրիչը, մինչդեռ [HOGAR] ֆրեյմում [casa] բաղադրիչն առկա է: Հարկ է նշել, որ ի տարբերություն անգլերենի՝ իսպաներենում [[CASA]/[HOGAR]] ֆրեյմում իր տեղն է գտել [familia] բաղադրիչը: Ուշագրավ է նաև, որ մինչ այս մեր կողմից դիտարկված և ոչ մի ֆրեյմում, բացի իսպաներենի [HOGAR] ֆրեյմից, առկա չէին այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են [mujer] (կին) և [niño] (երեխա):

Այսպիսով, կատարված վերլուծությունը կարելի է ամբողջացնել մեկ զուգադրական աղյուսակի տեսքով, որտեղ առավել ակնհայտ են դառնում ուսումնասիրվող ֆրեյմերի ինչպես համընկնող, այնպես էլ տարբերվող բաղադրիչները՝ վկայելով նաև [HOGAR] ֆրեյմի համեմատաբար առավել ընդգրկուն և միաժամանակ մասնավորեցնող հատկանիշները՝

Աղյուսակ 4

Թեմատիկ խմբեր	Անգլերեն		Իսպաներեն	
	HOME	HOUSE	CASA	HOGAR
Ընդհանուր քնակավայր	place, area, site, city	place, <u>area</u> , space, <u>site</u> , <u>location</u> , city, <u>town</u>	zona, plaza, ciudad, calle, parte, <u>pueblo</u> , centro, vivienda	<u>centro</u> , <u>territorio</u> , <u>ciudad</u> , <u>pueblo</u> , <u>vivienda</u>
Կոնկրետ քնակավայր	propert, building, house, room	property, building, home, <u>apartment</u> , room	edificio, <u>sala</u>	<u>casa</u> , <u>edificio</u> , <u>residencia</u> , <u>habitación</u>
Հասարակական/ սոցիալական երևույթներ/ հաստատություններ	school, office, company, work, system, business, service	office, store, <u>hotel</u> , business, <u>school</u> , <u>shop</u>	escuela, iglesia, <u>obra</u> , <u>compañía</u> , grupo, equipo, empresa	<u>sociedad</u> , economía, <u>ciudadano</u> , población, persona, empresa
Նյութական երևույթներ/ արժեքներ	car	<u>car</u>	--	--
Ընտանեկան երևույթներ/ արժեքներ	family	--	familia	<u>familia</u> , <u>cocina</u> , <u>mujer</u> , <u>niño</u>
Կենսական երևույթներ/ արժեքներ	time, life	--	<u>día</u>	vida

L. Ts. Movsesyan. On linguocognitive peculiarities of HOUSE, HOME and CASA, HOGAR notions via Sketch Engine electronic project. Alongside with the development of language corpora, electronic projects have emerged as a source for multifaceted linguistic studies. Sketch Engine as one of those electronic projects stands out for its various research opportunities. The study of the functional features of the project makes feasible to carry out linguocognitive analysis which itself reveals Sketch Engine also as a modern way of language categorization.

Л. Ц. Мовсесян. О лингвокогнитивных особенностях понятий HOUSE, HOME и CASA, HOGAR посредством электронной баз данных Sketch Engine. Одновременно с развитием языковых корпусов, электронные базы данных стали рассматриваться в качестве источника многогранных лингвистических исследований. Sketch Engine как одна из подобных электронных баз данных выделяется своими разнообразными исследовательскими возможностями. Изучение функциональных особенностей этой базы делает возможным проведение лингвокогнитивного анализа, который выявляет Sketch Engine как один из современных способов языковой категоризации.

Մ. Ա. Սարգսյան, Գ. Զահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները, Ե., «Ասողիկ» հրատ., 2017, 276 էջ:

Գ. Բ. Զահուկյանը նոր հայագիտության այն երախտավորներից է, որոնց գիտական ժառանգությունը տարեցտարի ավելի է իմաստավորվում և արժևորվում: Հայ լեզվաբանության պատմության մեջ նրա թողած հետքը մնայուն է և արժանի հետազոտման և գնահատման՝ ժամանակակից հայագիտության առաջընթացի մեջ նրա ներդրումը պարզելու տեսակետից: Վստահաբար կարելի է ասել, որ Զահուկյանի աշխատությունները մեծ ազդեցություն են ունեցել իր ժամանակակիցների և հետագա սերունդների վրա: Ուստի կարևոր է և ողջունելի ամեն մի աշխատանք, որ նվիրված է մեծ գիտնականի թողած ավանդի հետազոտմանը և մեկնաբանմանը:

Չնայած Զահուկյանի աշխատություններն ուսումնասիրվել են, որոշ հետազոտողներ անդրադարձել են լեզվական այս կամ այն խնդրի ջահուկյանական մեկնաբանություններին, սակայն ընդհանուր լեզվաբանական տեսակետից շատ ու շատ հարցեր մնացել են ըստ պատշաճի չուսումնասիրված: Բացի այդ՝ գրեթե անդրադարձ չի եղել տերմինակերտման առանձնահատկություններին: Այս առումով պետք է գնահատվի Մ. Սարգսյանի՝ «Գ. Զահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները» գիրքը, որն արդիական է իր ինքնատիպ հարցադրումներով և լուծումներով: Այն նվիրված է ընդհանուր լեզվաբանության բնագավառում Գ. Զահուկյանի տեսական ժառանգության, նրա հայացքների ձևավորման և զարգացման ընթացքի ուսումնասիրությանն ու գնահատմանը:

Կատարված աշխատանքը վկայում է այն մասին, որ մենագրության հեղինակը տիրապետում է նյութին, կատարում է ուշագրավ և ինքնուրույն վերլուծություններ և հանգում հիմնավորված եզրակացությունների: Նման մոտեցման շնորհիվ ձևավորվել է գիտական պատշաճ մակարդակ ապահովող մի աշխատանք: Հետևաբար կարելի է անվերապահորեն ասել, որ գործ ունենք Գ. Զահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները համակողմանիորեն ներկայացնելու մի հաջողված փորձի հետ, որը կարող է նպաստել անվանի գիտնականի մասին ընդհանուր պատկերացում կազմելուն: Լինելով Գ. Զահուկյանի ընդհանուր լեզվաբանական ժառանգության համակողմանի գնահատման և ներկայացման առաջին փորձ՝ այն կարող է օգտակար լինել թե՛ նրա գիտական ժառանգությամբ զբաղ-

վողների, թե՛ առհասարակ ընդհանուր և հայ լեզվաբանության պատմության մեջ զբաղվողների, ինչպես նաև մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի գործնական նշանակությանն ու կիրառությանը, ապա այն կօժանդակի ինչպես տեսական-լեզվաբանական, այնպես էլ գործնական-կիրառական հարցերի հետազոտումն ասիրությանը:

Գրքի կառուցվածքն ընտրված է տրամաբանական հետևողականությամբ և պատճառաբանված է: Այն բաղկացած է առաջաբանից, չորս գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, ունի օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ:

Մ.Սարգսյանի աշխատության Առաջաբանում ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, հարցի ուսումնասիրվածության աստիճանը, ինչպես նաև տրված է ընդհանուր լեզվաբանության բնագավառում Գ. Ջահուկյանի գործունեության ամփոփ գնահատականը:

Աշխատանքի առաջին՝ «Լեզվաբանության տեսության հարցերը» գլխում հեղինակն անդրադարձել է անվանի լեզվաբանի այն ձեռքբերումներին, որոնք վերաբերում են լեզվաբանության տեսական հարցերի գիտական և սպառիչ մեկնաբանությանը: Առավել մեծ ուշադրություն է դարձվել լեզվաբանության տեսության որոշ հարցերի, մասնավորապես լեզվի բնույթի, լեզվի և խոսքի փոխհարաբերության, ինչպես նաև լեզվաբանության՝ որպես գիտության ձևավորման և զարգացման խնդիրներին՝ ջախուկյանական մեկնաբանությունների լույսի ներքո: Միաժամանակ նկատի են առնվում Ջահուկյանին ժամանակակից և հետագա լեզվաբանական մտքի ձեռքբերումները:

Երկրորդ՝ «Լեզվաբանական մեթոդի խնդիրը. կադապարման մեթոդների կիրառումը» գլխում, որ բաղկացած է երեք ենթագլուխներից, Մ. Սարգսյանը հանգամանալից ներկայացնում է կադապարի ջախուկյանական ըմբռնումը, ինչպես նաև կադապարման մեթոդի աստիճանական զարգացումը նրա աշխատություններում: Ըստ արժանվույն գնահատվում է Գ. Ջահուկյանի ստեղծած համընդհանուր լեզվաբանական տեսությունը և համընդհանուր լեզվաբանական կադապարարը, որը ընդհանուր լեզվաբանական մտքի կարևոր ձեռքբերումներից մեկն է և նոր ուղիներ է բացում ժամանակակից լեզվաբանության տեսության զարգացման բնագավառում:

Երրորդ՝ «Լեզվի տեսության հարցերը» գլխում հատկապես գնահատելի է աշխատության հեղինակի կողմից լեզվի կառուցվածքի նկարագրությանը վերաբերող հարցերի ջախուկյանական մեկնաբանությունների վերլուծությունը: Առանձնահատուկ կերպով պետք է նշել Գ.

Ջահուկյանի աշխատություններում քերականական կարգերի և խոսքի մասերի նոր դասակարգումները, ինչպես նաև ստորոգման, շարույթի, բայասեռի, դերանունների և լեզվական այլ իրակությունների էության նոր մեկնաբանություններն ու բնութագրումները, որոնք պատշաճ կերպով ներկայացվում և արժևորվում են Մ. Սարգսյանի մենագրության մեջ:

Վերջին՝ «Տերմինաստեղծման առանձնահատկությունները» գլխում քննության է առնվել լեզվաբանական նորաստեղծ տերմինների խնդիրը Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական աշխատություններում: Մ. Սարգսյանը ներկայացրել է տերմինաստեղծման ջահուկյանական սկզբունքների էությունը և գործնական կիրառությունը, իսկ նորաստեղծ տերմինների քննության ու գնահատման համար առաջարկել է նոր դասակարգումներ:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ լեզվական նյութի վերլուծությունը կատարված է տեսական բարձր մակարդակով, իսկ ուսումնասիրությունից բխող հետևությունները միանգամայն համոզիչ են և ընդունելի:

Գրախոսվող այս գիրքն իր թեմայով նորույթ է, և գիտական տեսակետից՝ որակյալ: Իր հարցադրումներով, գիտական հետազոտության օրինակելի բնույթով, տեսական դրույթների հիմնավորվածությամբ, հստակ և տրամաբանված շարադրանքով, ինչպես նաև գործնական-կիրառական նշանակությամբ այն արժանի ներդրում է ընդհանուր և հայ լեզվաբանության բնագավառում:

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵՂԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

Լույս է տեսել հայոց լեզվի պատմության բուհական արժեքավոր մի դասագիրք, որ նախատեսված է բանասիրական ֆակուլտետների ուսանողների, թերևս նաև հայ բանասիրության և հայագիտության խնդիրներով հետաքրքրվողների համար¹²⁹:

Նշենք, որ հայոց լեզվի պատմական զարգացման վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ՝ մենագրություններ, բուհական ձեռնարկներ, գրվել են ատենախոսություններ, տարբեր բնույթի գիտական հոդվածներ: Հարցերի նման բազմազանությունը և մեծ տարասփռումը ուսանողի, նույնիսկ դասախոսի և հայագետի համար երբեմն որոշակի դժվարություններ է հարուցում, ուստի այս դասագիրքը կարևոր է հայերենի պատմական զարգացման հարցերն ամբողջացնելու և մեկ գրքով ներկայացնելու տեսանկյունից:

Դասագիրքը կոլեկտիվ աշխատանքի արդյունք է. ներածական բաժնի, բառագիտության, քերականության հատվածների հեղինակն է Ն. Դիլբարյանը, հնչյունաբանության հատվածինը՝ Ա. Աբաջյանը, իսկ պատմական շարահյուսության բաժնինը՝ Ա. Յուզբաշյանը: Երևանի պետական համալսարանի դասախոսները, հիմնվելով բուհական համակարգում դասավանդելու իրենց բազմամյա փորձի վրա, ջանացել են ուսանողի սեղանին դնել հայոց լեզվի պատմության մատչելի ձեռնարկ՝ դասընթացի հանդեպ պատշաճ հետաքրքրություն և հնարավորինս դյուրին ըմբռնում ձևավորելու գնահատելի առաքելությամբ: Գիրքը լույս է տոեսնում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը երաշխավորությամբ է իբրև դասագիրք:

Այս դասագիրքը գիտական հետազոտություն է, որը ներառում է անցյալի և արդի լեզվաբանության մեջ հայոց լեզվի պատմության վերաբերյալ շրջանառվող տեսական և փաստական կարևորագույն նյութերը և դրանք մատուցում մեթոդական հստակ սկզբունքներով: Կազմելով բուհական այս դասագիրքը՝ հեղինակները նպատակ են ունեցել հայերենի նախագրային և գրավոր շրջանի պատմության հարցերի հետ ներկայացնել նաև պատմական քերականության առանցքային հարցադրումները՝ նկատի ունենալով այդ առարկաների ուսումնասիրության առնչակից լեզվական իրողությունները, միասնական խնդիրներն ու փոխլրացնող նպատակները:

¹²⁹ Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն (դասագիրք բանասիրական ֆակուլտետների ուսանողների համար), Ե., ԵՊՀ հրատ., 2017, 444 էջ:

Դասագիրքը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով, ձեռնարկում վկայված լեզվական նյութերն ու տեսական վերլուծությունները տրվում են հստակ հղումներով: Հույժ գնահատելի է, որ ամեն բաժնից հետո Ա. Աբաջյանը, Ն. Դիլբարյանը և Ա. Յուզբաշյանը ներկայացրել են գրականության մանրամասն ցանկեր՝ նախատեսված հայոց լեզվի պատմության և պատմական քերականության համապատասխան բաժինների առավել խորքային և համակողմանի ուսումնասիրությամբ մտահոգ ուսանողների և ոլորտի մասնագետների համար:

Դասագիրքը սկսվում է «Երկու խոսք» առաջաբանով, որտեղ բացատրվում և հիմնավորվում են ուսումնասիրության կառուցվածքը, մեթոդները և ընդգրկված հարցերի շրջանակը, որոնք բավարարում են հայոց լեզվի պատմությունն առարկայի բուհական ծրագրի պահանջները: Ներածական բաժնում քննված են հայոց լեզվի պատմության՝ իբրև գիտակարգի ուսումնասիրության առարկան, մեթոդները, սկզբնաղբյուրները, կապն այլ գիտությունների հետ, գիտական շրջանաբաժանումը: Այնուհետև Ն. Դիլբարյանն անդրադարձել է այնպիսի կարևորագույն հարցերի, ինչպիսիք են հնդեվրոպական նախահայրենիքի տեղակայմանը վերաբերող արդի հիմնախնդիրները, հայոց ժողովրդանունների ստուգաբանության պատմությունը, նախամաշտոցյան հայ մատենագրության գոյության վարկածները, գրերի գյուտի քննական-բանասիրական վերլուծությունը, դասական գրաբարի լեզվաոճական դասերը, հունաբան և լատինաբան հայերենների հիմնական բնութագրերը և միջին գրական հայերենի, ապա աշխարհաբարի ձևավորման ընթացքը:

Պատմական հնչյունաբանության բաժնում Ա. Աբաջյանը առանձին-առանձին ներկայացրել է գրաբարի, միջին հայերենի ձայնավորները, երկբարբառներն ու եռաբարբառները, այնուհետև՝ ձայնավորներն ու երկհնչյունները նոր գրական հայերենում և բաղաձայնական համակարգը գրաբարում՝ ամփոփ պատկերացում տալով հայերենի հնչյունական համակարգի տարածամանակյա և համաժամանակյա փոփոխությունների մասին:

Պատմական բառագիտությանը վերաբերող բաժնում Ն. Դիլբարյանը դասագրքին հարիր խորությամբ քննել է հայերենի բառապաշարը, հնդեվրոպական բնիկ բառաշերտը և իրանական, հունալատինական, ասորական, եբրայական, կովկասյան, թուրքական, եվրոպական նոր և նորագույն փոխառությունները՝ ընդունված իմաստային խմբերով, հնչյունական առանձնահատկություններով և ժամանակագրական բաշխմամբ:

Հայերենի պատմական քերականության նկարագրության համար ընտրված է զուգադրական համեմատության մեթոդը, որի շնորհիվ ուսանողները կարողանում են ըմբռնել հայերենի քերականական այս կամ այն իրողության ծագումը, փոփոխությունները, տիպաբանությունը: Լեզվական փաստերը ներկայացվում են նախ՝ գրաբար, ապա՝ միջին հայերեն, հավարտ՝ գրական արևելահայերեն ու արևմտահայերեն: Պատմական ձևաբանությանը վերաբերող բաժինն ընդարձակ է, բնութագրված են հայերենի թեքվող և չթեքվող խոսքի մասերն իրենց զարգացման տարբեր փուլերում: Անունների և բայերի եղանակաժամանակային ձևերի, դերբայների նկարագրության համար տրվում են համապատասխան հարացույցներ, հարուստ օրինակներ, որոնց շնորհիվ ուսանողները կարող են արդյունավետ ամրակայել իրենց գործնական և տեսական գիտելիքները:

Դասագիրքն ավարտվում է «Ակնարկներ պատմական շարահյուսության» բաժնով, որտեղ Ա. Յուզբաշյանը անդրադարձել է վերացականը թանձրացականի փոխարեն, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, բացահայտիչ-բացահայտյալ կապակցություններին, ենթակայի և ստորոգյալի համաձայնությանը, ապա շարադասությանը նախ՝ գրաբարում, այնուհետև՝ միջին հայերենում և երկնյուղ աշխարհաբարի տարբեր շրջաններում իրենց հետագա փոփոխություններով: Տեսական բնութագրերն ամրակայված են բնագրային համոզիչ վկայակոչումներով:

Ամփոփելով՝ անվարան կարող ենք փաստել, որ գրախոսվող այս գրքի հեղինակները օգտագործել են ցայսօր շրջանառության մեջ գտնվող գիտական-տեսական հարուստ գրականություն հայոց լեզվի պատմության տարբեր փուլերի և բաժինների վերաբերյալ՝ ասպարեզ բերելով համահավաք, ուսանողների համար մատչելի և կողմնորոշող դասագիրք, որը միանգամայն ողջունելի նախաձեռնություն է: Գիրքը լույս է ընծայվել համեստ տպաքանակով՝ 300 օրինակով: Կարծում ենք՝ այն կունենա արժանի վերահրատարակումներ:

Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հ. Մեսրոպյան, Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Ե., «Ասողիկ» հրատ., 2016, 352 էջ: Թեման արդիական է բառապաշարի ոչ միայն բնույթի, այլև հայերենի բարբառներում արտահայտված լինելու տեսանկյունից, հատկապես որ այն նախկինում չի եղել առանձին ուշադրության առարկա: Նյութի ընդգրկումը ամբողջական է, ներկայացվում է բավականին համակարգված ձևով՝ ըստ առանձին գլուխների, որոնք կառուցվածքով ամբողջական են:

Գրքում նախ առանձնացվում են գրաբարից և միջին հայերենից բարբառներին անցած կրոնաեկեղեցական բառերը, տրվում է ընդհանուր գործածության կրոնական բառերի տարածքային բնութագիրը, դասակարգվում են քրիստոնեական եկեղեցու հիմնական խորհրդանիշների և տոների անվանումները, աստվածապաշտության վայրերի, ծիսական պարագաների նշանակումների բարբառային համարժեքները:

Առանձին ուշադրության առարկա են քրիստոնեությանը, մասնավորաբար հայ առաքելական եկեղեցուն առնչվող բառերի և արտահայտությունների բարբառային արտացոլումները, ներկայացվում են դրանց բարբառային հնչատարբերակները, մենիմաստությունը և բազմիմաստությունը, իմաստափոխության եղանակները, հոմանշությունը, նույնանշությունը և հականշությունը, բառերի փոխառյալ կամ բնիկ լինելը, դարձվածքների և բանահյուսական միավորների իմաստային-գործառական առանձնահատկությունները:

Հեղինակը գտնում է, որ տվյալ ոլորտի բարբառագիտական նյութը կարող է օժանդակել հայերենի բարբառների համապարփակ քննությանը, մասնավորապես բառագիտության այլ աշխատանքների երևան գալուն, բարբառագիտական ատլասի ստեղծմանը:

Աշխատանքի տարբեր գլուխներում հեղինակն անդրադառնում է հետևյալ հարցերին:

Առաջին գլխում քննված են գրաբարի բառապաշարի մի որոշակի մասը կազմող քրիստոնեական (աստվածաբանական) ոլորտի բառերն ու արտահայտությունները, անդրադարձ է կատարված դրանց ծագումնա-

բանությանը, փոխատու աղբյուրներին: Ըստ այդմ՝ պարզվել է, որ կրոնական բառապաշարի հիմնական մասն ավանդված է գրաբարից, որը, որպես գրական փոխառությունների խումբ, անցել է բարբառային բառապաշարի կազմ և գործածվում է տվյալ տարածքին բնորոշ հնչյունական զուգաբանությունների տեսքով: Մի շարք բառեր էլ ժամանակի ընթացքում ենթարկվել են իմաստային տեղաշարժերի: Հայերենի բարբառների կրոնաեկեղեցական բառապաշարի հիմնական մասը քրիստոնեական է՝ չնայած հայերի՝ դարեր շարունակ հեթանոս լինելուն: Հեթանոսական կրոնով պայմանավորված բազմաթիվ բառեր վերափոխատավորվել են և ներառվել քրիստոնեական բառապաշար:

Երկրորդ գլուխը վերաբերում է լայն գործածություն ունեցող *սուրբ* և *աստված* բաղադրիչներով կազմություններին, Աստվածածնի պատվանուններին, *դրախտ* և *դժոխք*, այլև *սատանա* անվանումների բարբառային տարբերակներին, իսկ երրորդը՝ *հավատ* և *հավատացյալ*, *Հիսուս Քրիստոս* և *քրիստոնյա* անվանումների բարբառային դրսևորումներին, քրիստոնեական խորհրդանիշների բարբառային անվանումներին: Չորրորդ գլխում հեղինակն անդրադառնում է բարբառախոս միջավայրում տոնական օրերի ընկալման և տարբերակման հարցերին, ինչպես նաև քննում է ամանորին, աստվածահայտնությանը, տյառնընդառաջին, պահքին և պահեցողությանը, ավագ շաբաթին, վարդավառին վերաբերող բարբառային բառանվանումները:

Գրքի հինգերորդ գլխում կատարված է ծիսական վայրերի անվանումների տարածագործառական քննություն, տրված է ծիսապաշտամունքային պարագա նշող բարբառային բառերի նկարագիրը, անդրադարձ է կատարված հոգևոր հագուստի և նվիրական առարկաների բարբառային անվանումներին: Վերջին գլուխը նվիրված է նվիրապետական բարձրագույն, միջին և հասարակ կարգերը, ինչպես նաև ընդհանուր նվիրապետական կարգ նշող իմաստային միավորների քննությանը: Նվիրապետական կարգ նշող բառերը հիմնականում հունարենից կատարված գրական փոխառություններ են, որոնք բարբառներում մեծ մասամբ հանդես են գալիս հնչյունական տարբերակվածությամբ:

Աշխատությունը թեմատիկայով և ընդգրկման ոլորտով նորություն է հայերենի, մասնավորապես նրա տարածքային տարբերակների բառապաշարի առանձին իմաստային (թեմատիկ) խմբի ըստ ամբողջական

քննության, որ կարող է օրինակ հանդիսանալ նման աշխատանքների համար:

«Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան», Ե., «Ասողիկ» հրատ., 2016, 590 էջ: - ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Լ. Կատվալյանը և գիտաշխատակիցներ Ա. Ա. Աբրահամյանը և Գ. Մ. Մխիթարյանը կազմել են հիշյալ վերտառությամբ մի կարևոր բառարան, որ, որքան մեզ հայտնի է, «իր տեսակի մեջ առաջինը լինելով», այլև ծավալի առումով, անշուշտ, երևույթ է հայ բառարանագրության մեջ, մանավանդ եթե առաջին հերթին նկատի ենք ունենում քրդերենի ընդգրկումը իբրև երկլեզվյան բառարանի զուգադրվող լեզու:

Ինչպես հեղինակներն են նշում, չլինելով քրդերենի մասնագետ, ի վիճակի են եղել ստեղծել իր տեսակի մեջ առաջինը լինելով, բավականին ուշագրավ և միանգամայն արժեքավոր մի գործնական բառարան, որն, անշուշտ, կարևոր է ոչ միայն հարևան երկու ժողովուրդների միջև ինչ-ինչ ընդհանրությունների և տարբերությունների ճանաչման առումով, այլև տվյալներ է մատուցում ցեղակցորեն, ընդհանուր հաշվով, իրար մոտ երկու լեզուների համեմատության և տիպաբանության համար:

Բառարանն ունի «Առաջաբան», որում կազմողներն անդրադառնում են մի կողմից՝ հայ-քրդական մշակութային և այլ կարգի առնչություններին, քրդերենին վերաբերող ձեռագրական նյութի գոյությանը, եղած նյութերի օգտագործման անհրաժեշտությանը, քրդերենի հնչյունական-բարբառային տարբերակվածությանը, մյուս կողմից՝ բառարանի կառուցվածքի, թարգմանելի որոշ բառահոգվածների գլխաբառերի գործածության հետ կապված տարբերություններին, ինչպես նաև քրդերենի լատինատառ գրանշանների հնչական կողմին և այլն:

Բառարանը կազմողների հաշվումներով՝ այն ընդգրկում է «շուրջ 34000 բառ (քրդերեն-հայերեն բաժինը՝ 25000, հայերեն-քրդերեն բաժինը՝ 9000)», - ըստ գրքի անոտացիայի, այնուհետև, «Բառարանի երկու բաժիններում հիմնականում ներկայացվում է քրդերենի կուրմանջի բարբառի բառապաշարը» (դեռ անցյալ դարի 60-ական թթ. կեսերին ռադիոյով լինում էին քրդերենի ժամի հաղորդումներ, որոնք միշտ վերջանում էին, եթե չեմ սխալվում, «Զամանէ կուրմանջի խլասբու» - «Քրդերենի ժամն ավարտվեց» եզրափակիչով):

Այս գիրքը բավականին տպավորիչ է նրանով, որ հայերենի ներկայիս բարբառների բառապաշարի շատ իրողություններ այս կամ այն կերպ առնչվում են կուրմանջի «լեզվի» հետ՝ իբրև միմյանցից, փոխազդեցության պայմաններում, անցած բառեր, արմատական ձևեր և այլն: Հենց նման միավորների զուգադրական քննությունն է, որ կարելի է կատարել՝ ցույց տալու երկու ժողովուրդների տևական առնչությունների պատմությունը նա՝ և լեզվական տվյալների հիմունքով. հմմտ. *ոչխարանոց* – *koz* (եթե *ոչ* հետնալեզվայինի շնչեղացումով. բրբռ.՝ *քոզ*), *ոչխարի հոտ* – *col* (հայ. բրբռ.՝ բառասկզբի խուլի ձայնեղացմամբ՝ *ջոլ*. Մուշ, Ալշ.), *չորթան* – *çortan* (բրբռ. խուլի շնչեղացմամբ՝ *t > θ*. Մուշ, Ալշ.), *չորս-չորս* – *çare-çar* (հմմտ. բրբռ. *չարեկ* «մեկ քառորդ», օրինակ՝ «Նա քու մի չարեկը չարժե») և այլն, և որոնցից առաջինը կա հայերենի բարբառներում, և այն փոխառություն է քրդերենից, երկրորդը՝ փոխառյալ է քրդերենում՝ հայերենից, երրորդի դեպքում հարկ կա ըստ ամենայնի մտածելու երկու լեզուների համեմատական-տիպաբանական համընկնման կամ զուգադրիպության վերաբերյալ և այլն:

Այս և նման մի շարք հարցերի նկատառումով էլ, կարելի է կարծել, թե բառապաշարի մակարդակում ինչ կարևոր նյութ են տրամադրում կազմողները, որպիսով, բնականաբար, հնարավորություն է ընձեռվում երկու լեզուների տարբեր կարգի առնչությունների ուսումնասիրման համար:

Մասնավոր նկատառում ենք համարում այն, թե որքանով է նպատակային եղել բառահոդվածների գլխաբառերն սկսել փոքրատառով, այլն՝ ճիշտ է այն, որ բառահոդվածների վերջում դրվում է միջակետ, ոչ թե վերջակետ, և երբեմն նկատվում են վրիպումներ, մանավանդ գրանշանների նշանակման դեպքում: Բառարանը լույս է տեսել տեխնիկական օրինակելի հոգածությամբ:

«Ձահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 389 էջ: Գիրքը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ամենամյա գիտաժողովի հերթական հատորն է, որում տեղ են գտել նույն տարվա հունիսի 15-16-ին կայացած զեկուցումների նյութերը: Հատորում ընդգրկված է երեք տասնյակից ավելի զեկուցում, որ ըստ թեմատիկայի կարելի է բաժանել մի քանի խմբի:

1) Ժամանակակից հայերեն. զեկուցողներն անդրադարձել են արևելահայերենի որոշիչ հոդին (Ա. Աբաջյան), ածականների դասանշային կապակցելիությանը (Ա. Ավագիմյան), *հայ* վերջնաբաղադրիչով բառերին (Դ. Գյուրջինյան), դարձվածային միավորներում խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի բայերի բաղադրիչների իմաստային և գործաբանական դրսևորումներին (Ռ. Դոխոյան):

2) Հայ բարբառագիտություն. զեկուցումները վերաբերում են բարբառներում տան բաղկացուցիչ մասերի անվանումներին (Հ. Խաչատրյան), Ղարաբաղի բարբառի բաղաձայնական համակարգին (Լ. Հովհաննիսյան), Կապանի տարածաշրջանի խոսվածքներին (Ս. Մանուչարյան), Արցախ-Սյունիքի բնակավայրերի համանուն անվանումներին (Լ. Մարգարյան), արևմտյան խմբակցության բարբառներում բայի երկրորդական ժամանակներին (Ժ. Միքայելյան), Կոտայքի մարզի խոսվածքներին (Գ. Մկրտչյան) և հնչաշղթայի հնչյունափոխական երևույթներին (Ա. Վարդանյան):

3) Հայոց լեզվի պատմություն. *դեղ* բառի իմաստային դրսևորումները հայերենում (Ա. Ամիրխանյան), Պետրոս Սյունեցու բառային արվեստը (Ս. Գրիգորյան, Ն. Պարոնյան), Գրիգոր Տաթևացու «ձմերան հատորի» բայական դարձվածային միավորները (Ս. Գրիգորյան), գրաբարի եռաբաղադրիչ դարձվածային միավորները (Ք. Հարությունյան), առկայացման կարգը (Լ. Հովսեփյան) և անցյալ դերբայով դարձվածային միավորների գործածությունը Բուզանդի «Պատմություն» երկում (Ն. Մովսեսյան):

4) Ընդհանուր, պատմահամեմատական և տիպաբանական լեզվաբանություն, ոճաբանություն. ուրարտական արձանագրության վերծանում (Ի. Ավագյան), *երկ* և *երգ* բառարմատների ստուգաբանության փորձ (Տ. Դալալյան), խեթահայկական առնչությունների մասին (Հ. Հմայակյան), տեքստի ոճաբանության հարցեր (Թ. Շահվերդյան), էթնոֆոլիզմը հայերենում (Ա. Քամալյան) և այլն:

5) Բնագրի վելուծություն. հայերենի ընդհանրական կորպուսի կազմության սկզբունքները (Ֆ. Հակոբյան), *ինչու-որ* հարցումը Մարկոսի Ավետարանում (Ս. Ղուկասյան), օրորոցային տեքստի քննություն (Հ. Մատիկյան), Մատթեոսի Ավետարանի բայերի դասանշություն (Լ. Պետրոսյան):

6) Կիրառական հնչյունաբանություն. բառագիտություն. կրկնակ բաղաձայնների տևողության հարցը (Գ. Գրիգորյան), լեզվական ռեալիաների հատկանշումը տեղանունների իմաստաբանության մեջ (Ն. Դիլբարյան), օտար բառերին տառադարձության մասին (Հ. Ջաքարյան) և այլն:

Ժողովածուն հարկավոր է մասնագետների, այլև հայերենով առհասարակ հետաքրքրվողներին:

Վ. Գ. Հ.

Ս. թ. հունիսի 15-ին ԳԱԱ Հ. Ա. ճառյանի անվան լեզվի ինստիտուտում իր աշխատանքներն սկսեց «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային ամենամյա գիտաժողովը: Բացման խոսքում ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը ողջունեց մասնակիցներին և մաղթեց հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յու. Սուվարյանը: Նա հատկապես կարևորեց լեզվի ուսումնասիրության տարբեր բնագավառներին վերաբերող ուսումնասիրությունները, որոնք էականորեն նպաստում են հայ լեզվաբանական մտքի զարգացմանը: Երկօրյա գիտաժողովին մասնակցեցին շուրջ երեք տասնյակ գիտնականներ Հայաստանի և Արցախի գիտակրթական տարբեր հաստատություններից: Զեկուցումներում արծարծվեցին հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին ու գործառույթներին, բարբառագիտությանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանությանը, ինչպես նաև կորպուսային լեզվաբանությանն առնչվող տարաբնույթ հարցեր:

Ս. թ. հունիսի 29-ին ԳԱԱ Հ. Ա. ճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված լեզվաբանության զարգացման միտումներին վերջին տասնամյակում: Սեմինարին զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի գիտաշխատակից, բ. գ. թ. Մ. Ա. Սարգսյանը: Նա խոսեց վերջին տասնամյակում լեզվաբանության զարգացման հիմնական միտումների մասին. «21-րդ դարասկզբին լեզվաբանությունը ներփակ (իմանենտ) վիճակից աստիճանաբար անցում է կատարում դեպի արտաքին գործոնների նկատմամբ քիչ թե շատ ազատ վիճակի: Ներկայումս լեզվաբանությունը ազատ փոխգործակցում է այլ գիտությունների հետ: Հետևաբար կարելի է ենթադրել, որ ներփակ լեզվաբանությունը վերածվում է միջգիտակարգային և մարդաբանական լեզվաբանության»: Մ. Սարգսյանը անդրադարձավ նաև աշխարհի տարբեր լեզվաբանական կենտրոններին, ներկայացրեց տարբեր հետազոտողների և պրոֆեսորների տեսակետները (Փ. Հագուրտ, Մ. Հասփելմատ, Տ. Կուն, Վ. Դեմյանկով, Է. Կուբրյակովա և ուրիշներ):

Ինչ վերաբերում է լեզվաբանական նոր ուղղություններին, ապա բանախոսը նշեց, որ «նոր բնորոշումը, իհարկե, պայմանական է: Տեսությունը նոր է այնքան ժամանակ, քանի դեռ լայնորեն չի կիրառվում և չունի հետևորդներ: Այսպիսով՝ այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են քաղաքական և իրավաբանական լեզվաբանությունները, լեզվամշակութաբանությունը, էթնոլեզվաբանությունը, ճանաչողական լեզվաբանությունը, գենդերային լեզվաբանությունը, պրագմալեզվաբանությունը (գործաբանական լեզվաբանությունը), նոր են միայն պայմանականորեն: Մի կողմից՝ սրանք արդեն իրենց կայուն տեղն ունեն գիտական ուսումնասիրությունների ոլորտում, մյուս կողմից՝ դեռևս չեն դարձել ավանդական: Բոլորովին նոր ուղղություններ կարելի է համարել էկոլեզվաբանությունը, համացանցային լեզվաբանությունը, նոոլեզվաբանությունը, բիոլեզվաբանությունը, սուզգեստիվ լեզվաբանությունը, ռեֆլեքսային լեզվաբանությունը ևն: Այս ուղղությունները դեռևս չունեն հստակ ձևավորված մեթոդաբանություն, ինչպես նաև դրանց տեսական հիմքերը ևս հեղիեղուկ են և ձևավորման փուլում»:

Սեմինարը բավականին հետաքրքիր էր և բովանդակալից, բուռն հարցադրումների և քննարկման առիթ դարձավ: Քննարկման ընթացքում կարևորվեց լեզվաբանական նոր ուղղությունների և նորագույն նվաճումների ուսումնասիրությունը, խրախուսվեց Մ. Սարգսյանի նա-

խաձեռնությունը և նշվեց, որ վերջինս առաջիկայում հանդես կգա այլ զեկուցումներով՝ նվիրված գիտության այդ ճյուղի նորագույն ուղղություններին:

Լեզվի ինստիտուտի բարբառագետների հավաքչական խումբը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Կոտայքի մարզի բարբառային համապատկեր» գիտական թեմայի ուղղությամբ (ղեկ.՝ Վ. Կատվալյան) կատարել է մարզի համայնքների վերաբերյալ արխիվային, նաև հրապարակված նյութերի ուսումնասիրում, բարբառագիտական արշավների ընթացքում մարզի մի քանի տասնյակ համայնքներում տեսաձայնագրման եղանակով, ինչպես նաև հարցաքննների միջոցով հավաքել է բարբառային զգալի նյութ:

Ս. թ. հուլիսի 7-ին խումբն իր աշխատանքները շարունակում էր Լեռնանիստ գյուղում: Համայնքի բնակիչների հետ զրույցների ընթացքում մասնագետները անհրաժեշտ տեղեկություններ քաղեցին տեղի խոսվածքի վերաբերյալ, «Հայերենի բարբառագիտական ատլասի» նյութերի հավաքման ծրագրով կատարեցին խոսվածքի հատկանիշների գրանցումներ, տեսագրմամբ և ձայնագրմամբ ձեռք բերեցին բարբառային խոսքի նմուշներ: Վ. Կատվալյանի հավաստմամբ՝ Լեռնանիստ գյուղի խոսվածքը, իր յուրօրինակություններով հանդերձ, զգալի ընդհանրություն-

ներ ունի Վանի բարբառի հետ, և խոսվածքի գիտական ուսումնասիրությունը, որը սկսել է իրենց խումբը, կարող է հետաքրքիր արդյունքներ արձանագրել:

Լեռնանիստում բարբառագիտական աշխատանքների հաջող ընթացքին աջակցեցին համայնքի ղեկավար Ա. Հայրապետյանը, գյուղապետարանի աշխատակիցները, համայնքի մի շարք բնակիչներ:

Այս տարվա հունիսին լրացավ բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի ծննդյան 70-ամյակը: Հոբելյանը հանդիսավորությամբ նշվեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում: Հարմար առիթ էր հարազատ ինստիտուտում մեկ անգամ ևս ամփոփելու և գնահատելու անվանի գիտնականի անցած ուղին և գիտամանկավարժական հարուստ գործունեությունը:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը: «Դուք մեր ինստիտուտի նվիրյալներից եք, գիտնական և անհատականություն, որը երկար տարիներ անընդմեջ սիրով և ամենօրյա աշխատանքով կատարում է գիտության մշակի դժվարին, բայց նաև գնահատելի գործը»: Ակադեմիական հանրությունը, և ոչ միայն, Վ. Գ. Համբարձումյանին ճանաչում է որպես մի գիտնականի, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է հայ լեզվաբանության կարևորագույն հիմ-

նախնդիրների ուսումնասիրությանը:

Հիանալի մարդու, մեր երկրի իսկական քաղաքացու, ազնիվ և տաղանդավոր գիտնականի, նվիրյալ հայորդու իր անձնական նկարագրով Վ. Գ. Համբարձումյանը վաստակել է ինստիտուտի աշխատակիցների սերն ու համակրանքը:

Ելույթներով հանդես եկան նաև ինստիտուտի աշխատակիցներից շատերը, որոնք միացան տնօրենի շնորհավորական խոսքին և իրենց հերթին բարեմաղթանքներ ուղղեցին պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանին, բարձր գնահատեցին նրա գիտական ներդրումը հայագիտության ասպարեզում: Սրտանց շնորհավորում ենք հոբելյարին և մաղթում քաջառողջություն, արևշատություն, երկար տարիների գործունեություն, որը, վստահ ենք, կարդյունավորվի նորանոր ձեռքբերումներով:

Հուլիսի 3-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր հ. Պողոս ծ. վ. Գոճանյանի հետ: Քննարկվեցին առհասարակ մայրենիին, մասնավորաբար՝ արևմտահայերենին առըջվող տարաբնույթ հարցեր: Հայր Պ. Գոճանյանը ներկայացրեց հայերենի ուղղագրության խնդիրների վերաբերյալ իր մտեցումները և տեսակետները: Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայրը սիրով կմասնակցի լեզվական խնդիրների՝ լեզ-

վի ինստիտուտում ծավալվող քննարկումներին:

Հուլիսի 6-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հյուրընկալվեց Կիպրոսի «Նարեկ» կրթահամալիրի ուսուցչուհի Մակի Հալաճյանը: Քննարկվեցին արևմտահայերենի դասագրքերին, դասականդման մեթոդներին առնչվող հարցեր: Տիկին Հալաճյանը ներկայացրեց կիպրահայ համայնքի առջև ծառացած կրթական մի շարք խնդիրներ: Մ. Հալաճյանը ընդգրկվեց ինստիտուտի՝ արևմտահայերենի խնդիրները հետազոտող և քննարկող հանձնախմբում:

Ս. թ. սեպտեմբերի 29-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հյուրն էր Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի հայագիտական ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ա. Տոնապետյանը:

Հանդիպման ընթացքում նա խոսեց հիշյալ ամբիոնի աշխատանքների և հետազա անելիքների մասին: Նշվեց, որ Հայաստանից դուրս հայագիտության ամբիոնը միակ վայրն է, որտեղ կա ամբողջական հայագիտության ծրագիր՝ 1-ին կուրսից մինչև դոկտորական, որն ընդգրկում է նաև սկսնակներին: Ամբիոնում գործում է SeDYL հետազոտական կենտրոն, որը զբաղվում է լեզվաբանական, հատ-

կապես բարբառագիտական հետազոտություններով, մասնավորապես Գորիսի տարածաշրջանի բարբառներով:

Կենտրոնն այժմ կազմակերպել է խումբ, որը զբաղվում է լեզուների փոփոխականությամբ՝ բարբառային, պատմական, որը ընդգրկում է Արևմտյան Ասիան, Կովկասը և Միջին Արևելքը: Կենտրոնը փորձում է այս շրջանակներում համեմատականորեն ուսումնասիրել տարածաշրջանի բարբառային առաձնահատկությունները՝ ջանալով գտնել տեղական, աշխարհագրական ընդհանրություններ հայերենի, քրդերենի, ասորերենի, թուրքերենի բարբառներում:

Կենտրոնն այժմ զբաղվում է Արևմտյան Հայաստանի բարբառների քարտեզի ծրագիրը կազմելով, որը հնարավորություն կտա ներմուծել լեզվաբանական տվյալներ և ուսումնասիրել աշխարհագրական փոփոխականությունները:

Հանդիպման ավարտին կողմերը քննարկեցին առաջիկա ծրագրերը և հետագա համագործակցության հնարավորությունները:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում հոկտեմբերի 2-ին իր աշխատանքներն սկսեց Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողովը: Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը: Նա նաև մասնակիցներին փոխանցեց ՀՀ

սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի ողջույնի խոսքը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և հայ լեզվաբանության զարգացման հեռանկարներին անդրադարձավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը:

Գիտաժողովի երկու նիստերի ընթացքում կարդացված գրեթե յուրաքանչյուր զեկուցման հաջորդում էին աշխույժ քննարկում, պարզաբանումներ, հարց ու պատասխան:

Գիտաժողովը իր աշխատանքները շարունակեց հաջորդ երեք օրերին: Արտասահմանի մեկ տասնյակից ավելի երկրներից եկած շուրջ վեց տասնյակ հետազոտողներ անդրադարձան հայերենի գրեթե բոլոր դրսևորումներին, լեզվի բոլոր մակարդակներին, ներկայացրին լեզվաբանության զանազան գիտաճյուղերի և գիտակարգերի վերաբերող, տարբեր հայեցակետերով ու մեթոդներով կատարված իրենց հետազոտությունների արդյունքները:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի գիտաշխատող Վ. Խաչատրյանը վերջերս է վերադարձել Լիբանանից՝ ութամսյա գործուղումից: Գործուղման նպատակն էր Լիբանանի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանի ձեռագրատան ձեռագրերի, մասնավորապես նրանցում առկա հիշա-

տակարանների լեզվական ուսումնասիրությունը:

Վ. Խաչատրյանը հաղորդեց, որ Կաթողիկոսարանի ձեռագրատանը պահվում է շուրջ 250 ձեռագիր, որոնք, բացառությամբ 22 ձեռագրի, նկարագրված և ներկայացված են «Յուցակ ձեռագրաց»-ում: Վերջինում տրված են նաև տվյալ ձեռագրերի հիշատակարանները: Հետազոտողի ուշադրության կենտրոնում եղել են դեռևս չուսումնասիրված ձեռագրերը, որոնք մեծ մասամբ 17-18-րդ դդ. ձեռագրեր են: Ութ ամիսների ընթացքում նա ուսումնասիրել է հիշատակարանները, ծանոթացել ձեռագրերի պատմությանը, անցած գրչագրական ուղուն և կատարել լեզվական ուսումնասիրություն՝ քննելով դրանց բառապաշարը ըստ ծագման և կազմության, ըստ գրական և բարբառային շերտերի: Նկատվել են նաև ուշագրավ քերականական իրողություններ, որոնք բարբառային պատկանելություն ունեն կամ ուղենշում են պատմական փոփոխությունները:

Վ. Խաչատրյանը վերջում նշեց, որ հետազոտության արդյունքները առաջիկայում կներկայացնի գիտական առանձին հոդվածով:

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող բ. գ. թ. Տ. Դալալյանը սեպտեմբերի 25-

26-ին և 27-28-ին Ս.Պետերբուրգում մասնակցել է հայագիտական երկու գիտաժողովների:

Դրանցից առաջինը կազմակերպվել էր անվանի հայագետ Կ. Յուզբաշյանի (1927-2009 թթ.) հիշատակին և կոչվում էր «Հայաստանը, Բյուզանդիան և Արևելքը. գրավոր ժառանգությունը՝ ձեռագրերից մինչև համացանց»: Երկրորդ գիտաժողովը նվիրված էր Ռուսահայոց և Նոր Նախիջևանի թեմի հիմնադրման 300-ամյակին:

Գիտաժողովների ընթացքում Ս. Դալալյանի ներկայացրած զեկուցումներից առաջինը նվիրված է եղել հայ վաղմիջնադարյան էպոսի լեզվաբանական և վիպաբանական տարաբնույթ խնդիրների վերհանմանը, իսկ երկրորդը՝ «Էմինյան ազգագրական ժողովածուի» տարբեր հատորներում լույս տեսած բանահյուսական նյութերի ժանրային և լեզվական քննությանը:

Ս. Դալալյանը նշեց, որ թե՛ զեկուցումների, թե՛ քննարկումների ժամանակ եղել են հետաքրքրական հարցադրումներ, ծավալվել են գիտական նպաստավոր բանավեճեր: Գիտաժողովներն անցկացվել են Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելյան ձեռագրերի ինստիտուտում, Ս. Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում և Ազգային հետազոտական համալսարանում:

Հուլիսի 3-ից 8-ը Փարիզում տեղի է ունեցել հայագիտական ուսանողական շաբաթ, որը կազմակերպել էին Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտը (INALCO) և Հայ ուսանողների տունը՝ արվեստաբան, պրոֆեսոր Ա. Լեյլոյանի տնօրինությամբ:

Ուսանողական շաբաթին հրավիրված էր նաև ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Ս. Դալալյանը: Նա հանդես է եկել երեք բանախոսությամբ՝ 1. Հայերենի բառապաշարի ծագումը, 2. Հայ հին վիպական ավանդության ձևավորումը, 3. «Սասնա ծռեր» էպոսի հնագույն և հին արևելյան ակունքները:

Ուսանողական շաբաթին մասնակցել են շուրջ երկու տասնյակ սփյուռքահայ ուսանողներ Ֆրանսիայից, Կանադայից, Բելգիայից, ԱՄՆ-ից:

Ս. Դալալյանը նշեց, որ հինգ օրերի ընթացքում վերջիններս առիթ են ունեցել ունկնդրելու զանազան դասախոսություններ, որոնց հաջորդել են մշակութային միջոցառումներ և տարբեր բնույթի այցեր:

2017 թ. հոկտեմբերի 12-ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ տնօրենության հանդիպումը ինստիտուտի ասպիրանտների և հայցորդնե-

րի հետ: Երիտասարդ հետազոտողները, ամփոփելով ընթացիկ տարում կատարած գիտական աշխատանքը, ներկայացրին իրենց հուզող հարցերը:

Ինստիտուտի փոխտնօրեն Ն. Հովհաննիսյանը երիտասարդ հետազոտողներին հորդորեց ավելի ակտիվ ու նախաձեռնող լինել, մասնակցել ինստիտուտի կազմակերպած գիտական միջոցառումներին:

Ինստիտուտի գիտքարտուղար Ա. Աբրահամյանը ներկայացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում (ասպիրանտուրա և հայցորդություն) կրեդիտային համակարգի ներդրման մասին» հրամանի բովանդակությունը, պատասխանեց ասպիրանտների՝ կրթական ծրագրի կառուցվածքի, պարտադիր և ընտրովի դասընթացների, գնահատման եղանակների վերաբերյալ հարցերին:

Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 7-րդ գիտաժողովի կազմակերպական աշխատանքների մասին հաղորդմամբ հանդես եկավ խորհրդի նախագահ Բ. Գ. Թ. Ս. Սիրունյանը: Նա, կարևորելով նստաշրջանին ինստիտուտի ասպիրանտների և հայցորդների մասնակցությունը, նշեց, որ լավագույն զեկուցումները կիրատարակվեն:

Հանդիպման վերջում երիտասարդ հետազոտողները մտքեր փոխանակեցին ապագա ծրագրերի և գիտական բնույթի այլ հարցերի շուրջ:

2017 թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում հանդիսավորությամբ նշվեց անվանի լեզվաբան Ամալյա Խաչատրյանի հոբելյանը:

Ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը ինստիտուտի և անձամբ իր անունից ջերմորեն շնորհավորեց Ամալյա Խաչատրյանին փառահեղ հոբելյանի առթիվ: «Լեզվի ինստիտուտում ծավալած Ձեր արդյունավետ ու երկարամյա գործունեությամբ Դուք վաստակել եք լեզվաբանների տարբեր սերունդների անկեղծ սերն ու հարգանքը, ունեցել Ձեր անուրանալի ավանդը հայ լեզվաբանության զարգացման գործում: Դուք, հիրավի, հայ լեզվաբանության նվիրյալ եք, նոր ժամանակներում հայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրության ոլորտի լավագույն գիտակն ու մասնագետը: Ձեր աշխատանքները արդի հայ լեզվաբանության նվաճումներից են և դեռ երկար ժամանակ ունենալու են ուղենշային դեր ու նշանակություն ոլորտի զարգացման գործում», – նշեց տնօրենը: Լինելով նրա սանը՝ Վ.Կատվայանը մեծ գնահատանքի արժանացրեց Ա. Խաչատրյանի վաստակը իբրև գիտական ղեկավարի, որի սաները խորին ակնածանքով ու երախտագիտությամբ են լցված իրենց սիրելի ուսուցչի հանդեպ:

Ելույթ ունենալով՝ Բ.Գ.Դ. Ռ.Թոխմախյանը, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Վ.Համբարձումյանը, Բ.Գ.Թ. Ժ.Մի-

քայելյանը, բ.գ.թ. Ն.Սարգսյանը գնահատանքի և երախտագիտության խոսք ասացին տաղանդավոր գիտնականի, սրտացավ ու հոգատար ընկերոջ, հիանալի մարդու՝ Ամալյա Խաչատրյանի մասին: Արժևորելով նրա բեղմնավոր գիտական գործունեությունը Հայաստանում և արտերկրում՝ մաղթեցին հոբելյարին քաջառողջություն, ստեղծագործական եռանդ ու գիտական պայծառ միտք:

Սույն թվականի հոկտեմբերի 18-ին ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված համացանցի, մասնավորապես սոցցանցերի լեզվի առանձնահատկություններին: Սեմինարը վարում էր ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ. Արևիկ Քամալյանը:

Նա ներկայացրեց հայալեզու համացանցի հաղորդակցման լեզվի առանձնահատկությունները՝ նշելով, որ այսօր համացանցում ձևավորվում է նոր լեզու, նոր ենթամշակույթ, որը տարբերվում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքից. այն լեզվի նոր որակ է՝ իր առանձնահատկություններով, որը լուրջ ուսումնասիրման կարիք ունի: Ա. Քամալյանը նաև նշեց, որ համացանցի լեզվի մասին ուսումնասիրություններ՝ հողվածներ, մենագրություններ, ատենախոսություններ կան աշխարհի տարբեր լեզուներով, իսկ հայե-

րեն համակողմանի ուսումնասիրություններ առայժմ չկան:

Ա. Քամալյանը խոսեց համացանցում գրության առանձնահատկությունների մասին (բառերի դիտավորյալ աղավաղված գրություն, զանազան պայմանական նշանների, սիմվոլների, սմայլիկների, գիֆերի կիրառում ևն)՝ ասածը լրացնելով համացանցից արված սքրինշոթերով: Բառապաշարի առանձնահատկություններին անդրադառնալով՝ նա հատկապես ընդգծեց բաղարկությամբ կազմվող նոր բառերի առատությունը, խոսեց համացանցային սլենգի, փոխառությունների, ինչպես նաև համացանցում գոեկաբանությունների, հայիոյական բառաշերտի տարածման միտումի մասին, որի պատճառները ոչ միայն լեզվաբանների, այլև մարդաբանների, մշակութաբաններին, հոգեբանների ուսումնասիրության առարկա կարող են դառնալ: Ա. Քամալյանը անդրադարձավ նաև այլատառ հայերենի, հատկապես լատինատառի խնդրին՝ նշելով, որ այն խիստ բացասական ազդեցություն է թողնում գրագիտության վրա, խոսեց համացանցում դրա դեմ պայքարի միջոցների մասին:

Վերջում Ա.Քամալյանը նշեց նաև համացանցային ֆուլկորի, մասնավորապես մեմերի, դրանց ծագման ու տարածման եղանակների մասին:

Սույն թվականի նոյեմբերի 7-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 7-րդ գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ Երիտասարդ լեզվաբանների խորհրդի նախագահ Տ. Սիրունյանը՝ ողջունելով մասնակիցներին և մաղթելով հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ: Գիտաժողովին մասնակցեցին շուրջ երկու տասնյակ գիտաշխատողներ, հայցորդներ և ասպիրանտներ Հայաստանի և Արցախի գիտակրթական տարբեր հաստատություններից:

Զեկուցումներում արծարծվեցին հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին, բարբառագիտությանը, ընդհանուր և կիրառական լեզվաբանությանն առնչվող տարաբնույթ հարցեր:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը կազմակերպել էր առաջին առցանց գիտաժողովը, որը նվիրված էր Գրիգոր Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին: Գիտաժողովի օրերին ինստիտուտի համացանցային կայքում հրապարակվեցին 33 զեկուցումների տեքստեր՝ հասանելի դառնալով գիտական հանրությանը: Գիտաժողովին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի, Մ.Աբեղյանի անվան գրականության, հնագիտության և ազգագրության ինստիտուտ-

ների, Երևանի պետական համալսարանի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, «Տաթև» գիտակրթական համալիրի հետազոտողներ: Ֆրանսիայից գիտաժողովին մասնակցեց Արմեն Միքայելյանը:

Ներկայացված զեկուցումներում արծարծվեցին հայոց լեզվի արդի բոլոր դրսևորումներին (գրական արևելահայերեն և արևմտահայերեն, խոսակցական հայերեն, բարբառային հայերեն) և լեզվաբանության տարբեր բաժինների ու ոլորտների (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսագիտություն, իմաստաբանություն, հատկանվանագիտություն, տերմինաբանություն, ստուգաբանություն, բարբառագիտություն, զուգադրահամեմատական լեզվաբանություն, լեզվի պատմություն, կիրառական լեզվաբանություն) առնչվող հարցեր: Հրապարակվեցին նաև Գ.Ղափանցյանի գիտական հայացքներին ու ժառանգությանը վերաբերող զեկուցումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Լ. Գ. Բրուտյան, Դավիթ Անհաղթը լեզվաբան	3
Վ. Լ. Կատվայան, Բարբառի աբեղյանական ըմբռնման մասին	10
Հ. Յ. Կիրակոսյան, Մարդու մարմնի մաս նշանակող բառանվանումներով կազմված տեղանունները իրանական լեզուներում	15
Հ. Զ. Ղազարյան, Հայերենի, ռուսերենի և անգլերենի «աչք» բաղադրիչով զգայություն արտահայտող դարձվածքների իմաստային դաշտը	27

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լ. Ա. Տեր-Գրիգորյան, Արև բառի փոխաբերական իմաստների դրսևորումները հայերենի դարձվածքներում	43
Ս. Վ. Համբարձումյան, Ս. Կապուտիկյանի «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմում գործածված նոր բառերի մասին	49
Մ. Ա. Սարգսյան, Էկոլեզվաբանությունը լեզվաբանության զարգացման նորագույն ուղղություն	55

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ֆ. Ա. Հակոբյան, Հայատառ հաղորդակցման խնդիրները համացանցում	61
Լ. Յ. Մովսեսյան, Անգլերենի և իսպաներենի <i>տուն, օջախ</i> հասկացությունների լեզվաճանաչողական առանձնահատկությունների վերհանումը էլեկտրոնային նախագծի միջոցով	68

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Զ. Պետրոսյան, Մ. Ա. Սարգսյան, Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները (Ե., 2017)	79
Գ. Մ. Մխիթարյան, Հայոց լեզվի պատմության նոր դասագիրք	82
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	85
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	91

СОДЕРЖАНИЕ

Статьи: Л. Г. Б р у т я н, Давид Анахт – лингвист –3 : В. Л. К а т в а л я н , Абебяновское понимание диалекта - 10 : А. Ц. К и р а к о с я н. Названия частей тела человека и иранская топонимия - 15: А. З. К а з а р я н. Семантическое поле армянских, русских и английских фразеологизмов с компонентом “глаз”, выражающие ощущение -27 : Л. А. Т е р – Г р и г о р я н - Переносные значения слова “солнце” во фразеологизмах армянского языка - 43: **Дискуссии и обсуждения:** С. В. А м б а р ц у м я н. . О новых словах, применяемых в поэме С. Капутикяна “Диалог между мной и мной” - 49 : М. А. С а р г с я н, Эколингвистика как новейшее направление лингвистического развития - 55: **Сообщения:** Ф. А. А к о п я н - Проблемы армянской коммуникации в Интернете. -61 : Л. Ц. М о в с е с я н. О лингвокогнитивных особенностях понятий HOUSE, HOME и CASA, HOGAR посредством электронной баз данных Sketch Engine -68: **Рецензия:** В. З. Петросян, М. Саргсян, Общелингвистические взгляды Г. Джаукяна (Ереван, 2017) -79: Г. М. Мхитарян, Новый учебник истории армянского языка - 82 : **Книжное обозрение - 85: Научная жизнь - 91 :**

C O N T E N T S

Articles: L. A. B r u t i a n – David the Invincible, the Linguist – 3 : V. L. K a t v a l y a n - Abegyan's concept of the dialect, - 10 : A. Ts. K i r a k o s y a n. The Human Body Parts Lexicon and Iranian Toponymy - 15 : H. Z. G h a z a r y a n. Armenian, Russian and English phraseological Units with the Component “eye” Expressing Sensation - 27: L. A. T e r – G r i g o r y a n. - Figurative senses of the word "sun" in phraseological units of the armenian language - 43: **Discussion:** S. V. H a m b a r d z u m y a n, On the new words used in S. Kaputikyan's poem "Dialogue between me and me" - 49: M. A. S a r g s y a n - Ecolinguistics as the Newest Direction of Linguistic Development - 55: **Reports:** F. A. H a k o b y a n - Armenian-letter communication problems on the Internet. -68: L. T s. M o v s e s y a n. On linguocognitive peculiarities of House, Home and Casa, Hogar notions via Sketch Engine electronic project.

Reviews. V.Z. P e t r o s y a n, M.Sargsyan, General Lingusitic Views of G. Jahukyan -79 : G. M. M k h i t h a r y a n, New Book of Armenian Language History - 82: **Book reviews: -85. Science News: -91.**

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Языкиязыкознание”, первый номер которого был издан в 2003 г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем - в пределах 8-10 машинописных страниц, интервал - 1,5, размер шрифта - 12, шрифт - Sylfaen (резюме на русском и английском - Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing-1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru

**ԼԵՋՈՒ
ԵՎ
ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

●

**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS**

**2 (17)
2017**



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, Թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 150
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Սալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ISSN 1829-0183